
# ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ
# REVIEW OF ARMENIAN STUDIES
# ВЕСТНИК АРМЕНОВЕДЕНИЯ




ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

**INTERNATIONAL REVIEW OF ARMENIAN STUDIES**



**2021 N 3 (27)**

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
TRI-ANNUAL JOURNAL PUBLISHED SINCE NOVEMBER 2013

## ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ 2021 Թ. N 3 (27)

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ · HISTORY

**Նահապետյան Ռ.** – Ժողովրդական բնակարանի ավանդական համալիրների տիպերը Աղձնիքում (XIX դար – XX դարասկիզբ) ........ 5

**Карагезян Г.** – Мученичество Сорока отроков Себастии в европейской историко-географической литературе ......... 24

**Ружанский В.** – Армянское наследие в еврейской культуре .... 37

**Hayrapetyan K.** – The Efforts of Archbishop Khoren Muradbekyan Aimed at the Normalization of Church-State Relations in 1924–1930 ........ 54

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ · ARCHITECTURE

**Kertmenjian D.** – Development Priorities of Contemporary Armenian Architecture (overview) ........ 68

### ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ · ART

**Тигранян М.** – «Бингёл» Комитаса ........ 80

**Harutyunyan S., Karamyan O.** – Ara Harutyunyan – A Life Dedicated to the Motherland and Art ........ 93

**Onanyan A.** – The Iconography of the Hierarchy of Angels on the Armenian Chalice Veils ........ 109

**Petrosyan A.** – The Flavor of Tiflis in Hmayak Hakobian’s Art ..... 121

### ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ · PHILOLOGY

**Свазлян В.** – Устное народное творчество переселившихся в Пятигорск арцахских армян ........ 129

**Պետրոսյան Ա.** – «Վահագնի երգը» և հայկական էպոսը (նոր տեսակետ հայկական էպոսի ծագման և ձևավորման

վերաբերյալ) .......................................................................... 146
**Khemchyan E.** – Armenian Narratives of the Two-Horned Alexander and Their Ritual-Legendary Sources ....................... 167
**Khachatrian A**. – Semantic and Structural Types of Armenian Personal Names Borrowed from the Old and Middle Iranian Languages .......................................................................... 184
**Առաքելյան Կ. –** Առած-ասացվածքների լեզվաոճական առանձնահատկությունները Նշան Պեշիկթաշլյանի երգիծավեպերում .......................................................................... 197
**Hambardzumyan N.** – The Phenomenon of Ecstatic Time in Hovhannes Toumanyan's Quatrains ........................................ 207
**Գյուրջինյան Դ. –** Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների բառարանային մշակման պատմությունը .......................................................................... 216

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ · PUBLICATIONS

**Ginosyan N. –** Great European Powers Bowing Before the Turkish Brigands .......................................................................... 233

## ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ · BOOK REVIEWS

**Khosroeva A.** – ***Christine Chaillot,*** *The Assyrian Church of the East: History and Geography* ..................................................... 242
**Հակոբյան Հր. – *Հովհաննես Աղպաշեան,*** *Մեծանուն Հայը* .... 248

## ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ · JUBILEES

**Ասատրյան Ա.** – Հայ թատերագիտության պատրիարքը (Հենրիկ Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակի առթիվ) .... 255
**Асатрян А. –** Плодотворный научный и творческий путь замечательного искусствоведа (к 65-летию со дня рождения Арарата Агасяна) ............................................................ 264
**ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ –** Արամ Վաղարշակի Քոսյանի ծննդյան 65-ամյակի առթիվ ....................... 271

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
## HISTORY

**ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ***

*Պատմական գիտությունների դոկտոր,*
*Երևանի պետական համալսարանի*
*հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր*
rafiknahapetyan@mail.ru

DOI: 10.52853/18294073-2021.3.27-5

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ ԱՂՁՆԻՔՈՒՄ (XIX ԴԱՐ – XX ԴԱՐԱՍԿԻԶԲ)

***Բանալի բառեր***՝ Աղձնիք, բնակավայր, գլխատուն, ներսույթ, թորվանտուն, Խիանք գավառ, Տալվորիկ:

### *Ներածություն*

Հայ ժողովրդի պատմաազգագրական մարզերի ազգագրական ուսումնասիրությունը Հայաստանում սկսվել է XIX դ. վերջերին: Այդ ասպարեզում շատ կարևոր ավանդ են ունեցել մեծանուն ազգագրագետներ Գ. Սրվանձտյանցը, Ե. Լալայանը, Ստ. Լիսիցյանը, Վ. Բդոյանը, Դ. Վարդումյանը և այլք, որոնք բացահայտել են պատմաազգագրական մի շարք մարզերի հայ բնակչության կերտած կենցաղամշակութային հարուստ ժառանգության բազում կողմեր և յուրահատկություններ:

Պատմական Հայաստանի էթնոմշակութային-ազգագրական ինքնատիպ գծերով հարուստ շրջաններից մեկն էլ Աղձնիք նահանգն էր: Հանրապետության Թալինի, Աշտարակի, Արարատյան դաշտավայրի մի շարք բնակավայրերում և Երևան քաղաքում բնակվող՝ Աղձնիքից մազապուրծ փրկվածներից

---

* *Հոդվածը ներկայացվել է 24.05.21, գրախոսվել է 13.09.21, ընդունվել է տպագրության 19.11.21:*

1970-ական թթ. գրառված դաշտային ազգագրական նյութերի հիման վրա հրատարակել ենք տասնյակ հոդվածներ և մենագրություններ:

Այդուհանդերձ, աղձնիքահայերի մշակութային հարուստ ժառանգության բազում կողմեր դուրս են մնացել համալիր հետազոտության շրջանակներից: Սույն ակնարկը գրված է հիմնականում բանասացներից գրառված հեղինակի անձնական արխիվային նյութերի հիման վրա: Այն վերաբերում է կենսապահովման մշակույթի ուրույն տարրերից մեկին՝ ժողովրդական բնակարանին:

Աղձնիքի բնակլիմայական և աշխարհագրական յուրահատուկ պայմանները, բնակչության ավանդական զբաղմունքները, ազգային ավանդույթները, շատ հաճախ նաև պատմաքաղաքական իրողությունները, երբեմն էլ միջէթնիկ շփումները հանգեցնում էին բնակավայրերի և բնակելի համալիրների տիպերի բազմազանության: Բնակարանի ճարտարապետական լուծումների վրա մշտական ու փոփոխվող գործոնների ակտիվ ազդեցությամբ առաջացել են երկրամասի գյուղական և քաղաքային բնակելի տների տիպեր, որոնք, սակայն, տարբերվել են միմյանցից՝ տեղական ավանդույթներից բխող ընդհանրական գծերով, ինքնատիպ հորինվածքներով:

***Բնակարանային համալիրները Սասունում***

Սասունում բնակավայրերը և բնակարանները հիմնվում էին ամուր, ռազմական տեսանկյունից անմատչելի, ինքնապաշտպանության համար ապահով տեղերում, ինչ-որ չափով հաշվառվել են նաև քամիների ուղղությունը, արևահայաց դիրքը, ջրամատակարարման հնարավորությունները, ձմռանը աղետաբեր ձնահոսքերից (**հուսին**) զերծ մնալու հանգամանքները: Հովտային շրջաններում բնորոշը միաբաժին մեծ տներն էին, որոնք հայտնի էին **խորընդուն** (**խորընտուն**) անունով՝ մեծ տուն նշանակությամբ: Տան ընդհանուր մուտքից սկսվում էր **փողան** կոչված փակ միջանցքը, որի ձախ կամ աջ կողմի պատի երկարության կեսից մուտք էր բացվում դեպի բուն տունը՝ **խորընդունը** կամ **կենալատունը,** այստեղից էլ՝ **կուլին**-մառան, **փետակնոց** (ամբարնոց) կոչված բաժանմունքները: Տան ճակատը՝ **բարը,** հարավային կողմն էր ուղղված՝ տունը լույսով ու արևի ջերմությամբ ապահովելու համար: Այն քառանկյուն հատակագիծ ուներ: Այստեղ թոնիր չէր դրվում, դրա փոխարեն օգտագործվում էր պայտաձև վերգետնյա օջախը, որին **թվեք,** նաև **հանգութ** էին անվանում: Այն տեղադրվում էր խորընտան հարավային պատի միջնամասում: Թոնիրն այստեղ անծանոթ էր, որովհետև ձմռան երկարատևության պատճառով ցորեն չէր աճեցվում, հիմնական հացաբույսերը կորեկն ու **գլգին**

**(կըլկիլ)** էին, որոնց այլուրից միայն **բոքոն** հացատեսակն էր պատրաստվում օջախ-թվեքի վրա:

Խորընտան մի մասն է կազմում գոմը՝ նույն ծածկի տակ, երկարատև ձմռանը այն անասունների շնչով տաք պահելու, ինչպես նաև թուրք և քուրդ ավարառուների թալանը կանխելու նպատակով: Խորընտան և գոմի բաժանարարն անասունների մսուրքն էր, որը հաստատվում էր 60–70 սմ բարձրությամբ պատի վրա, կամ էլ ճիպոտահյուս պատնեշը **(աղաղ)**: Անասունների գլուխները ուղղվում էին բնակելի կողմը: Խորընտան հիմնական պատի մեջ էլ թողնվում էին անցքեր (ակնատ)՝ ոչխարների փարախը հսկելու համար: Համալիրը մեկ մուտք ուներ: Դուռը մեկփեղկանի էր, 2–3 լայն ու հաստ կաղնե տախտակներից, մեջտեղով 4–5 սմ հաստությամբ կրկնակի գոտին էր՝ **գրիրա** կոչվող փայտե փականով: Պատերը հաստ էին, մոտ 1 մետր՝ ծածկի ծանրությանը դիմանալու, տունը տաք պահելու, ամրոցատիպ կառույց դարձնելու համար: Պատերը կառուցվում էին ժայռաբեկոր քարերից, շաղախը խիճն էր և կավե ցեխը: **Կալտունը** խորընտան դիմաց էր կառուցվում՝ գետնափոր կամ տեղանքով պայմանավորված՝ կիսագետնափոր, որի ճակատային մասը բաց էր: Ձմռանը այստեղ էին կերակրում անասուններին: Ուշագրավ են Մ. Դանիելյանի «Ուղևորի հիշատակները» ուղեգրության նկարագրությունները Շարդ գավառակի (Զոքան) գյուղական տների մասին: [Այստեղ] «տուները առանց բացառության բոլորն էլ միահարկ են ու հողաշեն, ցածր ու նեղլիկ, առանց պատուհանի, մարդ ու անասուն գրեթե քովե-քով կը բնակին և մանավանդ ձմեռը իրարու հոտով ու շնչով կը տաքանան»[1]:

Տան անդամների հետ համատեղ կթու, առանձնապես լծկան անասուններին պահելը կարևոր նշանակություն ուներ երկրագործական-անասնապահական համակցված արդյունավետ տնտեսավարման համար:

Ձեռքի տակ եղած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սասունի հովտային շրջանների խորընտան և ախոռի հատակագիծը գրեթե նույնությամբ համընկնում էր հայ արմենների տան քսենոփոնյան նկարագրին: Հույն պատմագիրը գրում է. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը՝ ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն՝ ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր (հողի մեջ), մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով: Այն-

[1] Տե՛ս «Արևելք» 1903, № 5221:

տեղ կար նաև ցորեն և գարի, և ընդեղեն, և կրատերների (կարասների) մեջ գարուց պատրաստած գինի, որի մեջ լողում էին գարու հատիկներ...»[2]: Սասունում այդպիսի պարզունակ գետնափորները, որ հիմնականում հարմարեցված էին անասնապահական տնտեսությանը, հարատևեցին մինչև XIX դարավերջ և XX դարասկիզբ[3]:

Քսենոփոնի նկարագրությունից ակնհայտ է դառնում, որ մարդկանց և անասունների միևնույն բաժանմունքում լինելը գրեթե համընկնում է Աղձնիքի նահանգի տան ձևին[4]: Մեր նյութերը նույնպես հաստատում են, որ Քսենոփոնն իր արշավանքի ժամանակ պիտի անցած լիներ այնպիսի բնակավայրերով, որոնք ունենային Աղձնիքի խորընտան և ախոռի նկարագիրը: Հ. Հյուբշմանը Քսենոփոնի նկարագրած Կենտրիդես գետը նույնացնում է Աղձնիքի Արևելյան Տիգրիսի կամ Բոհտան սուի հետ[5]:

Լեռնային կլիմայական բարդ պայմանները՝ ցրտաշունչ ձմեռն ու ամառային կիզիչ տոթը, երկար ժամանակ շարունակում էին մարդուն թելադրել կառչելու նախնական տների ձևերին՝ գետնի մակերեսից հնարավորինս խորանալով հողի կամ ժայռերի մեջ՝ պաշտպանվելու համար ցրտից և տոթից, թեև տեխնիկական միջոցների և կուլտուրայի կատարելագործման շնորհիվ սկսել էին կառուցվել վերգետնյա տներ[6]: Հազարամյակների ընթացքում Քսենոփոնի շրջանի տանն ավելացել էին նաև օժանդակ բաժիններ: Քսենոփոնյան տան և Աղձնիքի բնակարանային համալիրների տարբերությունն այն էր, որ առաջինը գետնափոր էր, իսկ վերջինը կիսագետնափոր կամ գետներես: Աղձնիքի վերոհիշյալ տարածքով անցած ճանապարհորդ գերմանացի սպա Նոլդեն փաստում է Բաղեշ քաղաքի շրջակայքի գյուղերի հայ բնակչության հյուրասեր լինելը, նշում է նաև, որ շրջակա լեռների լանջերին փռված գյուղերի շենքերը «իրենց նախնական հատուկ կազմությամբ Քսենոփոնի ժամանակին միշտ մտադրություն գրաված են»[7]:

Սասունում և նրան հարակից լեռնային շրջաններում **խորընտների** կողքին, առավել անառիկ վայրերում, տարածում ունեին 2–3 հարկանի **քոշքերը,** որոնց ներսույթից էին փայտե աստիճաններով բարձրանում վերին հարկերը՝

---

[2] **Քսենոփոն** 1970, 97:

[3] «Արաքս» հանդես 1894–95, գ. Ա, էջ 88: Համտ. «Լումա» 1893, գ. Ա, «Արձագանք» 1894, № 140:

[4] Տե՛ս **Նահապետյան** 1973, 236–243:

[5] Տե՛ս **Հյուբշման** 1907, 12:

[6] Տե՛ս **Սամուելյան** 1941, հ. 2, 193:

[7] «Հանդէս ամսօրեայ» 1896, № 9:

դառնալով մի յուրատեսակ ամրոց՝ օտարների հարձակումներից պաշտպանվելու համար: Դրանք բնակելի և տնտեսական նշանակության համակառույցներ էին, որոնց առաջին հարկը կթու և լծկան անասուններին էր հատկացվում, երկրորդը՝ մարդկանց, լուսավորվում էր առաստաղին կպած փոքրիկ օդանցք պատուհաններով, ջեռուցվում բուխարի անվամբ ծխնելուզավոր կրակարանով և բաց օջախով, իսկ երրորդը, որ կոչվում էր **ռոշ**, որոշ տեղերում **ալիք**, ծառայեցվում էր գյուղատնտեսական մթերքների պահպանմանը և վտանգի դեպքում պաշտպանվելուն, նաև օտարականներին հյուրընկալելուն: Հաճախ վերնահարկում ունենում էին հյուրասենյակ-օդա՝ դրսից բացվող առանձին մուտքով: Ամռանը գերդաստանը բարձրանում էր այստեղ, մինչև ցրտերն ընկնելը: Ռոշի պատերի բոլոր կողմերում, հավասար շարքով թողնվում էին փոքրիկ պատուհաններ՝ **շըբակ** կամ **շառաֆներ,** որոնք խաղաղ ժամանակ փակվում էին ընկույզի յուղով պատված թղթերով՝ անթափանց դարձնելով տնային լուսավորությունը գիշեր ժամանակ. քրիստոնյաների տներից լույս չպետք է երևար՝ այլադավաններից աննկատ մնալու համար[8]: Վտանգի դեպքում պատուհաններից դուրս էին հանում հրացանների փողերը: Վերից վար թեքությամբ մի այդպիսի անցք էլ թողնվում էր մուտքի դռան վերևի մասում, որտեղից հրացանի կրակոցով կարող էին չեզոքացնել վտանգը: Երրորդ հարկի ծածկը հենված էր երեք պատերի վրա, լանջային կողմը բաց էր: Սասնա Գրմավ, Սեմալ և լեռնային այլ գյուղերում տները կառուցվում էին լեռների թեք լանջերին: Առաջին հարկի հետևի պատը ամբողջությամբ, իսկ կողային պատերը կիսով չափ թաղված էին գետնի մեջ, բացի առջևի պատից, որը հիմնվում էր գետնի երեսին: Առաջին հարկը խոշոր անասունների **թավլան** էր և **օճխրկոմը,** որոնց բաժանարարը **փողան**-միջանցքն էր: Համեմատաբար ապահով վայրերում ոչխարի փարախը բնակավայրից ոչ շատ հեռու ընկած սաթառների (դալար ճյուղերով ու տերևներով հարուստ **թավի** անտառների և արտերի) եզրերին էր՝ անասնակերին մոտ լինելու և արտերը պարարտացնելու նպատակով: **Սարի գհոռ** (փարախ) անվանված ձմեռոց փարախներում հաճախ հովիվն ապրում էր իր ընտանիքով: Նրա գույքը մինչև քնելը տեղավորվում էր **առզելի** վրա, որը փայտյա լայն անշարժ թախտ էր՝ հիմնված պատին առընթեր երկու սյուներին, գետնից մինչև 1 մետր բարձրությամբ: Այլ տեղերում առզելը հայտնի էր **մշկի** (ծառայի) **թախտ** անվամբ**:** Փարախի ճակատային պատի կենտրոնում ծխնելուզավոր օջախ-**բխերիկն** էր տեղադրվում:

[8] Տե՛ս **Տիգրան Մկունդ** 1950, հ. Ա, 155:

Երկրորդ հարկը գերդաստանի բնակելի տունն էր, որտեղ էլ տեղավորված էին նաև **կուլին**-մառանը, **փետկնոց-ամբրնոցը:** Տալվորիկում տները երկհարկ էին, անգամ լուսամուտավոր՝ ծածկերի տակ պատերին բացված ոչ մեծ պատուհաններով: Ի դեպ, Տալվորիկը Սասունի քաղաքակրթված հատվածն էր, որտեղ բնակչությունը հիմնականում երկաթամշակ, երկաթագործ արհեստավորներ էին: Տալվորիկցին հաճախ էր արտագնա աշխատանքի մեկնում Հալեպ և այստեղից բերում էր նորամուծություններ[9]:

Գերդաստանական ընտանիքների բաժանքի ժամանակ այս երկհարկ կամ եռահարկ քոշքերը ենթակա չէին մասնատման[10]: Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական բաժնում պահվում է Ստ. Լիսիցյանի ֆոնդը, որում զետեղված են սասունցիների ավանդական բնակարանի վերաբերյալ դեռևս չհրապարակված ուշագրավ նկարագրություններ: Ըստ ճարտարապետ Վ. Հարությունյանի՝ Ստ. Լիսիցյանը նկարագրել է սասունցիների այնպիսի տներ, որոնք ունեցել են աշտարակ, ինչը բնորոշ էր Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին: Բնակարանի նույն տիպը Հայկական լեռնաշխարհում հայտնի էր դեռևս Ք.ա. II հազարամյակից: Հայ ժողովրդի կազմավորման մեջ ներգրավված այս տարածքներում բնակված խուրրիները ապրել են ընտանեկան մեծ համայնքներով, որոնք խուրրիերեն կոչվել են **դիմտու**, որ բառացի նշանակում է աշտարակ: Եվ իսկապես, նրանց յուրաքանչյուր ընտանեկան համայնք բնակվել է մի ամրոց-աշտարակում: Ուշագրավ է, որ խուրրիական կամ Միտանիի իշխանությունը Ք.ա. XVI դարում ստեղծվել էր Հյուսիսային Միջագետքում և ամենայն հավանականությամբ տարածվել էր Հայկական Տավրոսից հարավ ընկած շրջանների վրա, ներառյալ Բոհտան և Զաբ գետերի հովիտները[11]: Այդպիսի աշտարակավոր բնակարանների վերաբերյալ ուշագրավ ազգագրական նկարագրությունների ենք հանդիպում ոչ միայն Սասնա գավառի Տալվորիկ, այլև Խիանք գավառակի երկրագործական-այգեգործական շրջանի վերաբերյալ պարբերական մամուլում հրապարակված և մեր գրառած դաշտային ազգագրական նյութերում: Այստեղ «տուները բոլորն ալ քարաշեն են և կրկնահարկ, շինված են գեղական հին դրութ-

---

[9] Տե՛ս «Մշակ» 1894, № 118:

[10] Այդպիսի ամրոցատիպ տներ գոյություն են ունեցել նաև Վրաստանում: Այստեղ լեռնային անասնապահական կյանք վարող մոխևցիների նույնանման երկհարկանի բնակարանը իր տնտեսական նշանակությամբ յուրատեսակ ռազմական կառույց էր՝ ինքնապաշտպանության տեսակետից մի յուրատեսակ ամրոց (**Харадзе** 1960, т. 1, 131):

[11] Տե՛ս **Դյակոնով** 1971, հ. 1, 182:

յամբ, չունին պատուհան, օդ և լույս կթափանցե միայն դռներեն և երդիկներեն, երկրորդ հարկը մարդկանց, իսկ առաջին հարկը անասունների համար կծառայեն»[12]: Տարբեր անասունների՝ լծկան, կթու, բարձկան, հյուրերի և անցորդների բաժանարարը ճիպոտահյուս միջնորմ աղադն էր:

Մարագը կալին մոտ էր կառուցվում: Երբեմն կալը կատարվում էր տան կտուրին: Բնակարանի համալիրի առանձին մաս էր կազմում մեղվի փեթկոնցը, որի առջևի մասը փակվում էր գլգիլի փուքից հյուսված փալասով՝ խսիրով:

Ուշագրավ մի հանգամանք ևս: Սասունին բնորոշ էր տների ցրվածությունը՝ պայմանավորված լեռնային անմատչելի տեղանքով ու կառույցների անառիկության և բնակչության ինքնապաշտպանությանը մշտապես վարժված լինելու հանգամանքով:

Լեռնային տեղանքներում բերքի, անասնակերի և այլ տիպի փոխադրումների խիստ դժվարությունների պատճառով գյուղական բնակավայրերն ունենում էին նաև **մզրաներ՝** տնտեսական-արտադրական նշանակության կառույցներ (գոմ, ախոռ, փարախ, կալ, կալտուն), որոնք հարկադրաբար հիմնվում էին բնակավայրից դուրս՝ անասնակեր ապահովող անտառների և արտերի մոտ: Սասունում, ի տարբերություն հովտային շրջանների, տները հարթածածկ էին, դրանց դասավորությունը դարավանդային էր, երբեմն մեկի կտուրը մյուսի համար բակ էր ծառայում կամ կալատեղ՝ կալսելու համար:

Գերդաստանական մեծ ընտանիքներով ապրելու սովորույթով պայմանավորված՝ գլխատները մեծ մակերեսով էին կառուցվում: Տուն հիմնող նահապետը ուներ հետևյալ նկատառումները՝ ա) ընտանիքի հետագա աճն ու գերդաստանի վերածվելը, բ) նախապես մեծ ընտանիքին համապատասխան շենքերի համալիր ստեղծելը, գ) ապագայում այդ ընտանիքի առանձնանալու անխուսափելիությունը, հետևապես նախօրոք կառուցված տունը առանձին մասերի բաժանելու և դուստր ընտանիքներին հատկացնելու հեռանկարը: Այսպիսով, անկախ պատմաաշխարհագրական, բնակլիմայական և զբաղմունքների գերակայությամբ պայմանավորված գործոններից, ռազմատենչ այլ էթնիկ թշնամական տարրերից սպառնացող վտանգը Աղձնիքի հայ բնակչությանը հարկադրել է հիմնել կյանքի և գույքի անվտանգության ապահովման համար հնարավորինս համախմբված, ներփակ բնակարանային համալիր:

**Ներսույթը:** Սասունում օջախ-կրակարան-թվեքի շուրջն էին քնում գերդաստանի նահապետը և **տանդգինը՝** տանտիկինը, իրենց հատկացված

---

[12] Տե՛ս «Արևելք» 1900, № 4231, էջ 1:

շարժական թախտ-գահավորակի վրա: Գերդաստանի մեջ մտնող ամեն մի անհատական ընտանիք տեղավորվում էր տան տարբեր անկյուններում առանձին խսիրների, թաղիքների կամ կարպետների վրա՝ իրենց անկողիններով: Պատվավոր ծերունի հյուրերի անկողինը ևս գցվում էր պատվավոր տեղ համարվող կրակարան-օջախի շուրջ: Նորապսակները քնում էին մառան-կուլինում կամ էլ ախոռի սյուների վրա պատրաստված առզել-թախտերի վրա: Այստեղ հաճախ թաղիքն ու կարպետը ծառայում էին նաև իբրև անկողին: Սովորաբար անկողինը ծալք էին դնում: Ընդհանուր ծալքը գերդաստանի միասնության և համերաշխության խորհրդանշաններից մեկն է համարվել:

Սասունում լայնորեն տարածված էին ճիպոտահյուս, մղեղախառն, կավով կամ անասնաղբով ներսից և դրսից ծեփված **փետակները՝** որպես ալյուրի, սերմացուի, հացի և ընդեղենի ամբարներ: Դրանք խորանարդաձև էին՝ 10–12 խմ ծավալով: Մեծ ու հղկված այդ ամբարների արտաքին ճակատների վրա փորաքանդակված էին տղամարդու, կնոջ, թռչունների և ծաղկազարդ պատկերներ, վերին մասում փորանկարում էին եզան գլուխ: Ունևոր տնտեսություններում տախտակե ամբարներն ու օժիտի սնդուկները նախշազարդվում էին արևի պտտվող հավերժանշանով: Ճաշի սեղան էին ծառայում կլոր կամ քառակուսի պղնձե մատուցարանը՝ սինին կամ թեփսին, ճիպոտներից հյուսված սալաները, փռոցները և այլն: Ամենուրեք տարածված էր ճաշելիս ծալապատիկ նստելու սովորույթը, այդ պատճառով, որպես սեղան, գործածվել են կարճոտն սեղաններ (խոնչա), որոնք հաճախ շինվում էին ամբողջական ծառաբնից: Նստելու կահույք էին ծառայում ցածրաոտ, 25–40 սմ բարձրությամբ գրակալի նման աթոռը՝ **քուրսին**, մորթե փռոցները, դմփիկները, պատերի երկայնքով շինված քարե կամ տախտակե անշարժ նստարանները, շարժական թախտերը և այլն: Ամանեղենը տեղավորում էին պատի խորշերում՝ պատրիաններում սարքված թարեքների վրա: Պղնձե ամանեղենը պատրաստվում էր Սասնա Հազզո քաղաքում: Կաթնամթերքի ամանեղենը տեղադրվում էր մառան-**կուլինում՝** պատի երկայնքով սարքված հողաքարե պատվանդանի վրա, որը նախատեսված էր նաև պառկելու և նստելու համար: Խոհանոցում գործածվող երկաթե իրերն էին՝ խաչերկաթը, որ դրվում էր կրակարանի վրա, ակիշը, գասկարակը (եռոտանի), ակշաթաթը, թաթիկը, շիշը: Սրանք տեղական արտադրանք էին: Ամեն ընտանիք ուներ իր փոքր աղացը՝ **էրգանքը,** որն այժմ էլ Թալինի՝ սասունցիների ժառանգներով բնակեցված բնակավայրերում օգտագործում են քարաղը մանրացնելու, գարնանը անասուններին տալու համար: Նաև **դինգը,** որ մի եզով էր պտտեցվում,

հիմնվում էր ջրաղացի մոտ: Սասնա Սեմալ և հարևան այլ գյուղերում, սովորույթի համաձայն, պահածոյացված թացանը՝ յուղը, կարագը, պանիրը գոուրներով (կավե կճուճներով) հորում էին առուների եզերքներին՝ խոնավ տեղերում: Յուրաքանչյուր ընտանիք «նշնում» էր իր գոուրները, գիտեր հորած տեղերը: Ամանների դեր էին կատարում նաև կտավից և այծի մազից, բրդե թելերից գործած պարկերը (թեռ, մանդիկ, ջվալ), նաև կաշվե տիկերից պատրաստված հովվական մախաղները, յուղ, պանիր ու լոռ պահելու մոթալները, գինու և օղու տիկերը և այլն:

Սասունում բնակարանը ջեռուցվում էր թվեք-օջախի միջոցով, որի կրակը միշտ պետք է վառ մնար, հսկողությունը իրականացնում էր տանտիրուհին, որին օգնում և փայտ էր բերում նորահարսը: Ամեն գիշեր կոճղ էին դնում կրակարանի մեջ՝ հանդարտ այրվելու համար: XX դ. սկզբներին մուտք գործեց թիթեղյա վառարանը, որ բերվում էր Վանից: Լուցկու դեր էր կատարում չախմախի կայծքարը: Լուսավորելու համար օգտագործվող մոմը մեղրամոմից էր պատրաստվում, որի մեջ դրվող պատրույգը կոչվում էր **ֆընդ** (մոմի կծիկ, բարակ մոմի գործվածք): Տունը լուսավորում էին նաև ճրագով ու լամպով: Լուսավորության հիմնական միջոցը կտուրից բացվող երդիկն էր, երկհարկանի տներում՝ պատերի վերնամասում, առաստաղին կպած փոքր պատուհանները:

***Բնակարանային համալիրները Աղձնիքի դաշտային շրջաններում***

Աղձնիքի հովտային մեղմ, տաք երկրագործական շրջաններին ավելի բնորոշ էր մեծ, բազմաբաժին, բազմագործառույթ բնակարանային համալիրը: Այն բաղկացած էր գլխատնից, որին **թորվան տուն, թնդրտուն, խորընդուն** կամ մեծ տուն էին անվանում, գոմից, որին **հախոռ** (լծկան անասունների դեպքում) և **թավլա** (կթու անասունների դեպքում) էին անվանում, **օդայից** (հյուրասենյակ), մառանից, որին **կուլին** էին անվանում, **ամբրնոցից** (ցորենի, գարու շտեմարան), **փետկնոցից, փարախից, մարագից:** Թորվանատանը օգտագործվում էր շուրթերը գետնի մակերեսին հավասար թաղվող թոնիրը 120 սմ խորությամբ և 70 սմ տրամագծով բերանով (Ազնվացձոր, Խութ-Բռնաշեն):

Դաշտավարական և այգեգործական տնտեսավարմամբ այս շրջաններում արդյունագործական նոր ճյուղերի ավելացման արդյունքում ընդլայնվում և մեծանում էին բնակելի և տնտեսական, արտադրական կառույցները: Խիանք գավառակում մեկհարկանի մեծ բնակարանային համալիրը բաղկա-

ցած էր հետևյալ բաժիններից. **սրահ** (սրահ), որի աջ և ձախ կողմերից բացվում էր հյուրասենյակը՝ **մսավրի** (քրդ. հյուր նշ.) **օթախ,** ամառային սենյակը՝ **այվա** անվանումներով: Սրախի կենտրոնից բացվում էր **մեծ տունը,** որի չափերը հասնում էին 12x12 քմ-ի կամ՝ 16x16 քմ-ի, որտեղից էլ բացվում էին երկու մառանների մուտքերը, որոնցում պահվում էին հացի և ընդեղենի կավե և փայտե ամբարները, գինու և օղու կարասները, չորացրած և կախովի մրգերի շարանները և այլն: Մեծ տան մեջ առանձնացվում էին մեծ տնից բացվող, առանձին մուտքերով 3–5, երբեմն էլ ավելի՝ գերդաստանի անհատական ընտանիքների թվին համապատասխան **օդաներ**: Դրանց պատերը կառուցվում էին աղյուսից: Անհատական ընտանիքների այս համալիրները ուշ շրջանի երևույթներ էին, առաջանում էին գերդաստանների տրոհման նախաշեմին՝ որպես հայկական գյուղ և ընտանիք շուկայական հարաբերությունների ներթափանցման հետևանք:

Մեծ տունը գերդաստանի աշխատանոցն էր, խոհանոցը, սեղանատունը, որտեղ ծխնելուզավոր բուխարիկից բացի, կար երկրորդ կրակարանը՝ բաց օջախ-**թվեքը**, որի շուրջն էր տեղադրվում տանտեր-**մալխոյի** և տանտիրուհի-**կըբանու** թախտ-մահճակալը (գահավորակը): Այս մեծ հարկաբաժինը գերդաստանի ընդհանուր հավաքատեղին էր, գերդաստանի ավագ տղամարդկանց վայրը, զրուցարանը, հյուրատունը:

Օդաները անհատական ընտանիքների ննջարաններն էին՝ իրենց անկողիններով, ծալքատեղերով, օրորոցներով, անհատական ընտանիքի սնդուկով՝ օժիտի և հագուստի պահարանով: Օդաների ջեռուցումը ապահովվում էր մեծ տան թվեքի և բուխարու կրակով, որից կավե տաշտերով տեղափոխում էին օդաներ: Նորապսակներին առանձնացնում էին մառան-փետկնոցում:

Խիանքում թոնրատունը տեղավորված էր տան բակում՝ երեք կողմերից փակ պատերով, առջևը բաց ծածկի տակ: Թոնիրը տեղադրված էր **դքաթմբիկի** վրա՝ թեք, գետնից 0,5 մետր բարձրությամբ, և հացթուխը հացը թխում էր գրեթե կանգնած դիրքով: Գոմը տանը կից էր, բայց առանձին, փողանից բացվող մուտքով:

Հովտային շրջաններում շենքերն սկսվում էին փողանից, որն Աղձնիքի դաշտային այլ վայրերում հայտնի էր նաև որպես **սրախ, դըրգա**: Սա նախասրահ էր, որից բացվում էին մյուս բաժինների դռները: Լեռնային բարձրադիր շրջաններում բակը հասկանում էին ծածկված շենք, միջանցք իմաստով, որը ներտնային մարդատար և անասնատար ուղին էր: Այդպիսի բակերը ունեին նաև ինքնապաշտպանական նշանակություն: Առհասարակ, այսպիսի

մեծ համալիրների դռները լայն ու ցածր էին արվում, որպեսզի բարձկան անասունները ներս ու դուրս անեին, և բացառվեին երիվարներով ասպատակիչների ներխուժումները: Այդպիսիք էին հատկապես Տիգրանակերտի շրջակայքի Սլիվան գավառակի գյուղերի տները:

Հովտային շրջանների ուշագրավ բազմաբաժին համալիր էր Բշերի գավառակի Քըվրզու գյուղի Գորքեի գերդաստանական տունը, որը ներկայանում էր մեկ այլ տարբերակով. դըրգա-նախասրահից աջ կողմից բացվում էր գոմը տանող ուղին և փոքր թնդրտունը, ամբարը (ցորենի քարե պատերով շտեմարանը), կենտրոնից՝ **մեծ տունը** կամ **խորընտունը,** ձախ կողմում պատի երկայնքով հողաքարե **դքան** (թմբիկն) էր, որը ծառայում էր իբրև նստարան և պատվանդան, որի վրա փռվում էր **գուլաբ** (խսիր), պատերին հենում էին թիկնաբարձեր **(մութանքա)**. այստեղ աշխատում էին տան 3 կոշկակարները, որոնք կատարում էին նաև համայնքի պատվերները: Մեծ տունը ընդարձակ բաժանմունք էր՝ որում տեղավորված էին խոհանոցը, սեղանատունը, կանանց աշխատանոցը: Մեծ տանը աղյուսե պատերով առանձնացվում, հիմնվում էին բազմացող անհատական ընտանիքների առանձին ննջարանօդաները: Ցերեկը ամբողջ գերդաստանը համատեղ մեծ տանն էր անցկացնում, գիշերը առանձնանում էին՝ յուրաքանչյուրը իր հարկաբաժնում՝ օդայում: Գերդաստանի նահապետն ուներ իր օդան: Մեծ տան վերին մասում՝ աջ և ձախ կողմերում, ներսից բացվող նաև երկու մառաններն էին (**մաղզանից**) և մեղվանոցը: Մեղվանոցից էլ մի առանձին մուտք էր բացվում համալիրի անկյունում գտնվող նորապսակների ննջարանը: Դաշտավարությունը և բամբակամշակությունը տեղի հայ բնակչության հիմնական զբաղմունքներն էին, ուստի համալիրում հիմնվում էր նաև քարե **ամբարտուն** կամ **ամբրնոց:** Այն՝ ներսից ու դրսից մաքուր սվաղված քարե պատերով բաժին էր, որի մեջ հացահատիկը լցվում էր կտուրից թողնված անցքից: Ամբարտունն ուներ դըրգայից բացվող երկու մուտք, մեկը՝ անշարժ, մյուսով դուրս էին քաշում հացահատիկը:

Այստեղ ևս գոմը կառուցվում էր բնակելի տանը կից: Անասնատար ուղին անցնում էր դըրգայի աջ կողմով: Ոչխարի փարախի մուտքը դարձյալ բացվում էր սրահից: Մեծ տնից դիտակետեր՝ ակնատներ էին թողնվում գոմն ու փարախը ներսից ևս հսկելու համար: Դըրգայի վրա, երկրորդ հարկում հյուրասենյակն էր **(օդա մեվանե)**, որը բաղկացած էր 3 բաժիններից, որտեղ հյուրընկալվում էին բարեկամները, խնամիները, հյուրերը. այն նաև օտար անցորդների ընդունարան էր: Երբեմն էլ ազգակից ընտանիքների՝ առանձնաց-

ված քնելատեղ չունեցող նորապսակ զույգերին էին ժամանակավոր տրամադրում իրենց տան այս հարկաբաժինը՝ մեղրամիսն անցկացնելու համար:

Քրդական ենթակայության այս շրջաններին հատուկ էր նաև օժանդակ կառույցների համախմբվածությունը մի ընդհանուր ծածկի տակ:

Խոշոր և ունևոր գերդաստանական տներին իբրև համայնքային հյուրընկալման բաժին և ժողովարան բնորոշ էին օդա-հյուրասենյակները, որոնք կառուցվում էին տանը կից, առանձին կամ էլ միջանցք-դըրգայից բացվող մուտքով: Ալմատինա շրջանի Շքաստակ գյուղի Ըվդո (Ավետիք) տների գերդաստանական տան համալիրի միջանցքի աջ ու ձախ կողմերում կար երկու օդա, մեկը հյուրերի և համայնքային ժողովարանի համար էր, մյուսը՝ երիտասարդների հավաքատեղի: Սակայն ուշագրավ է այն, որ երկրորդ հարկի ծայրին ընկած օտար, անցանկալի հյուրերի համար նախատեսված հյուրասենյակօդայի մուտքը դրսից էր: Սրանք օտար հյուրերի ընդունարան-ննջարաններ էին՝ առանձնացված գերդաստանից:

Ձեռքի տակ եղած պատմագրական, դաշտային ազգագրական նյութերը հաստատում են այն իրողությունը, որ, անկախ բնակչության սոցիալական շերտավորման աստիճանից, բնակելի, տնտեսական ու արտադրական շենքերի ձևերի ու կառուցվածքների միջև տարբերությունը եղել է այն, որ մեկը քիչ թե շատ բարետես էր և ընդարձակ, մյուսը՝ փոքր ծավալով ու աղքատիկ ներսույթով, իսկ ճարտարապետական կառուցողական լուծումները ըստ էության եղել են նույնը: Քրդահպատակ այս շրջաններում հայերի տները չպետք է առանձնանային իրենց շքեղությամբ: Անկախ աշխարհագրական, բնաէկոլոգիական գործոններից և զբաղմունքների այս կամ այն տեսակի գերակայությունից, Արևմտյան Հայաստանի մեծ մասի, առավել չափով Աղձնիքի ռազմատենչ այլէթնիկ թշնամական տարրերի համատեղ բնակեցումը սպառնալիք էր տեղական հայ բնակչության համար, ամենուրեք հայը հարկադրված է եղել բնակարանային համալիրները հիմնել հնարավորինս համախմբված, մի տանիքի ներքո՝ կյանքի և գույքի անվտանգության ապահովման համար:

Այս երևույթը առավել ցայտուն է դրսևորվել Հայնի հայաշատ քաղաքի հայ բնակչության ապրելակերպում: Այս քաղաքում հայկական թաղամասերը առանձնանում էին, տները միմյանց կպած էին այնպես, որ ամբողջ հայկական մասը միակտուր զանգված էր կազմում: Վտանգի դեպքում հայերը ստիպված էին փակվել տներում:

**Ներսույթը:** Տների պատերն այս շրջաններում ունեին պատրհաններ (**աչկունք**), որտեղ թարեքների վրա դասավորվում էին կենցաղային իրերը,

մամֆրաշների մեջ փաթաթված անկողինը և այլն: Դրանք ծածկվում էին սպիտակ վարագույրով: Նորապսակ զույգերը քնում էին պատերի հետ կանգնեցված սյուներից կապված անշարժ թախտերի (**առզել**) վրա, որքան հնարավոր էր տան անդամներից հեռու: Դադարում էին առզելների վրա քնել միայն երեխա ունենալուց հետո՝ տան մեջ նոր օդա հիմնելով: Ամռանը ննջարանը կտուրն էր[13]:

Խիանքում լվացքի և լողանալու համար 15 օրը մեկ ամեն ընտանիք օգտվում էր համայնական ընդհանուր աղբյուրներից, գետակներից, առվակներից, ջրվեժներից: Ծերունիները և պառավ կանայք տանն էին լողանում: Նրանց օգնում էին ջահել հարսներն ու աղջիկները:

Հայնիում կին, թե տղամարդ, լոգանքն ընդունում էին տնից դուրս, քարայրներում, որտեղ մեկնած ընտանիքների թվին համապատասխան օջախներ էին վառվում, լվացքը անում էին աղբյուրների, ջրվեժների մոտ: Արշալույսը **(շավախը)** չբացված՝ 20–30 ընտանիք շտապում էր նման վայրերում տեղ գրավելու: Տան հարսներն էին պարտավոր լողացնելու տղամարդկանց: Այրերին լողացնելուց հետո, արևածագին կանայք սկսում էին լվացքը, իսկ մութը ընկնելուն պես լողանում էին տարեց կանայք, ապա փոխադարձ օգնությամբ՝ հարսներն ու աղջիկները[14]: Լվացքը փռում էին տանիքում կապած պարաններին:

Արձանագրենք մի ուշագրավ երևույթ ևս. քանի դեռ ամբողջ գերդաստանի համար անկողինը ներկայացնող թաղիքները, կարպետները, խսիրները հավաքվում էին մի տեղում՝ ընդհանուր ծալք կազմած, դրանով նշանավորվում էր գերդաստանի միասնության, դեռևս համերաշխ, համատեղ ապրելու գաղափարը: Իսկ երբ տան համալիրում, գլխատան մեջ հիմնվեցին անհատական ընտանիքների թվին համապատասխան օդաներ, և յուրաքանչյուր ընտանիքի անկողին իր ծալքատեղն ունեցավ իրեն հատկացված օդայում, դա դարձավ գերդաստանի տրոհման, մասնատման նախադրյալներից մեկը:

Մեծ տունն ուներ գմբեթավոր ծածկ, երդիկից էլ ապահովվում էին օդափոխությունն ու լուսավորությունը: Երդիկի տեղական անվանումը **էրթածակ** էր**:** Բացի այդ, արևելյան կամ հարավային պատի վերնամասում, ծածկի տակ 2–3 տեղով թողնվում էին փոքր լուսամուտներ, որոնք ձմեռը փակվում էին ճեթոտ թղթով:

---

[13] Տե՛ս **Նահապետյան** 1985, տ. 8, 89–91:

[14] Տե՛ս **Նահապետյան** 1985, տ. 8, 35–37:

Բշերիկի և Սլիվանի հովտային գյուղերում ընդունված էր ոչ թե ուղիղ թաղվող, այլ թեք թոնիրը, որը տեղադրվում էր տան համալիրի մի անկյունում՝ **թունդրտուն** կամ **տանդուր** բաժնում: Կանայք այս թոնրի մեջ հացը թխում էին կանգնած դիրքով: Քրդաhիպատակ այս շրջաններում ոչխարի փարախն ու մարագը բնակարանային համալիրի հետ կապվում էին մեկ ընդհանուր մուտքով[15]:

Տների ճակատներն ուղղված էին դեպի հարավ՝ արևահայաց լինելու և հյուսիսային սաստիկ քամիներից պաշտպանվելու նպատակով: Ամռանը կտուրը ծառայում էր իբրև ննջարան, ամեն մի անհատական ընտանիք մեկուսացվում էր եղեգից հյուսված միջնորմով և կարիճներից պաշտպանվելու համար կտուրի վրա փշնթուփ էին փռում ու ծածկում հաստահյուս վարագույրխսիրով:

Աղձնիքում բնակարանային շինարարությունը՝ հիմքեր փորելը, շինանյութերն անտառից ու դաշտից տեղ հասցնելը, պատերը շարելն ու տները ծածկելը և հողանքը արվում էր համայնքի օգնությամբ: Փոխօգնության այդ ձևը **(զուբարա)**, որ իրագործվում էր տղամարդկանց միջոցով, դրամական հատուցում չէր ենթադրում: Շինարարական նյութերի, հատկապես անտառանյութի տեղափոխումը բնակարանաշինության ամենադժվար պահն էր: Այդ առումով ուշագրավ էր տանիքը ծածկելիս կիրառվող «**մարթակի զուբարան**» (Ազնվածոր գավառ) կամ **գերան բերելու, գերան վերցնելու զուբարան** (Սասուն): Աղձնիքում, հատկապես լեռնային շրջաններում, տները շատ ամուր էին կառուցվում. կտուրին լցվում էր 80–100 սմ հաստությամբ հող, որպեսզի դիմանար հաստ շերտով նստող ձյանը և կալսոցին կոռիով կալ անելուն: Դրա համար անհրաժեշտ էին հաստ պատեր և հսկա գերաններ, որոնց տեղափոխումը, շենքի վրա բարձրացնելը պահանջում էր 50–60 տղամարդու դժվարին ջանք ու ճիգ: Սրան էլ հավելած՝ սարերի թեք կողերով, նեղ ու ծուռ ճամփաներով այդ գերանները տեղ հասցնելը: Աղձնիքում գերանատարության **մարթակի զուբարայի** ժամանակ համայնքից յուրաքանչյուր տուն տրամադրում էր 1 տղամարդու և 1 զույգ եզ՝ լծասարքով: Լծկանազուրկ տնտեսությունն օգնության էր գալիս իր գործիքով կամ հողակիր քթոցով: Զուբարային մասնակցողների թիվը հատկապես մեծ էր լինում **հողանքի** օրը՝ հասնելով 40–50 և ավել հոգու: Զուբարայով էր արվում նաև ջրաղացի և ձիթհանի աղացաքարեր տեղափոխելը, հասարակական նշանակության այլևայլ աշխա-

---

[15] Տե՛ս **Նահապետյան** 1985, տ. 8, 89–90:

տանքներ՝ **օդա**-հյուրատներ, եկեղեցիներ, ջրաղացներ ու ձիթհաններ կառուցելը, ճանապարհներ նորոգելը, ոռոգման առուներ հանելը և այլն[16]:

Ուշագրավ նյութեր են գրառված բնակարանաշինության հետ կապված հավատալիքների վերաբերյալ: Բնակարանի հիմքերը փորելիս ոչխար էին զոհաբերում՝ մատաղ անում՝ խերով տուն լինելու համար: Նորակառույց տունը չար աչքից հեռու պահելու նպատակով պայտ կամ խոյի եղջյուրներ էին ամրացնում դրան վերին մասում, իսկ Զատկին՝ եփած կարմիր ձու: Սասունցիների մեջ պահպանվում էր «բախտավոր» և «անբախտ» կացարանների հավատալիքը:

Առավել ջերմեռանդ հավատալիքներ էին հաստատվել տան օջախի՝ իբրև սրբության նկատմամբ: Աղձնիքում օջախը գերդաստան-ընտանիքի գաղափարի մարմնացումն էր. **օջախ շինել** նշանակում էր ընտանիք կազմել, **օջախ պահել**՝ տան, ընտանիքի տնտեսական հոգսերը հոգալ, **օջախ վառո՞ղ է, թե՞ մարող** արտահայտությունը նշանակում էր հարմար ու վստահելի ամուսին կլինի՞, թե՞ ոչ և այլն: Նոր տուն հիմնելիս մայր տան օջախի կրակով ազգատոհմի նահապետն էր առաջին անգամ վառում նորաստեղծ ընտանիքի օջախ-թոնրի կրակը, որով ազդարարվում և սկսվում էր նորակազմ ընտանիքի կյանքը: Կրակը անշեջ էին պահում: Գիշերը տաք, չմարած կրակի մոխրի մեջ **անթխոց** (կոճղ) էին դնում, ծածկում կրակով՝ մինչև հաջորդ օրը կրակը պահպանելու համար[17]:

Չար աչքից հեռու պահելու հավատալիքներից մեկը «վերի այծի», «էմակդար» եզան գանգերը տան դռան կամ գլխավոր ճակատի պատից կախելն ու դռան շեմի վերևի մասում պայտ ամրացնելն էր, կամ էլ կարմիր ձվի կճեպները ծեփի կամ անասնաղբի հետ խառնած դռան վերևի ճակատին ծեփելն էր: Նոր տուն տեղափոխվելիս կամ ամառանոց բարձրանալիս մատաղ էին տանում և բաժանում, որ օջախը խերով լիներ և «բարաքյաթն»՝ անպակաս[18]:

***Եզրակացություններ***

Բնակարանը կենսապահովման մշակույթի էթնիկ առանձնահատկությունները կրող ցայտուն համալիրներից է: Այն Աղձնիքում դրսևորվել է ինչպես ճարտարապետական հորինվածքային յուրովի լուծումներով, այնպես էլ ներսույթի կազմակերպման և ձևավորման առանձնահատկություններով: Կարելի

[16] Այս մասին մանրամասն տե՛ս **Նահապետյան** 2012, 128–165:

[17] Տե՛ս **Նահապետյան** 2020, գիրք 3, 230–242:

[18] Տե՛ս **Պետոյան** 1965, 201–202:

է թվարկել յուրահատկություններից մի քանիսը. ա) անկախ պատմաաշխարհագրական, բնակլիմայական և տնտեսավարման տիրապետող գերակա գործոններից, Արևմտյան Հայաստանում, առավելապես Աղձնիքում, ռազմատենչ թշնամական տարրերից մշտապես սպառնացող վտանգը հայ մարդուն հարկադրել է բնակարանը, տնտեսա-արտադրական շինություններով հանդերձ, հիմնել որպես կյանքի ու գույքի անվտանգության համար հնարավորինս հավաք, մեկ ծածկի տակ համախմբված, ներփակ կառույց, որը յուրատեսակ ռազմական ամրոց էր հիշեցնում: բ) Սասունում, ի տարբերություն մյուս՝ հովտային շրջանների, տները հիմնվում էին գերազանցապես դժվարամատչելի տեղանքներում, 2–3 հարկանի ժայռաբեկոր քարերով, վերնահարկերի ճակատային պատերի վերնամասում թողնվում էին փոքր պատուհաններ՝ հրազենով զինված ինքնապաշտպանության կազմակերպման նպատակով: գ) Սասունում ծածկը հարթ էր, քանզի լանջային տեղանքներում տները դասավորվում էին դարավանդային համակարգով, երբ մեկի կտուրը մյուսի համար բակ և երբեմն էլ՝ կալատեղ էր ծառայում: դ) Գերդաստանական մեծ ընտանիքներով ապրելու սովորույթով պայմանավորված՝ գլխատները մեծ մակերեսով էին կառուցվում, քանզի դրանք ընտանեկան և համայնքային բազմագործառույթ նշանակություն ունեին: ե) Սասունում թոնրին փոխարինել է պայտաձև կավե թոնրի ¼ մասը կազմող բաց օջախը՝ թվերը: Մինչդեռ դաշտային և նախալեռնային տարածքներում ջեռուցման համակարգերից բնորոշը թոնիրն էր, որով և պայմանավորված էր գլխատան անվանումը՝ թորվան տուն: զ) Խիանքում և դաշտային այլ շրջաններում, ամեն մի գերդաստան 15 օրը մեկ բնակավայրից հեռու ընկած աղբյուրներից, գետակներից, ջրվեժներից օգտվելու՝ լվացքի, լողանալու համայնքային սովորություններ են ունեցել: Այն հասարակական բաղնիքի էր վերածվում: է) Գերդաստանական տան համալիրում թորվանատուն-խորընդուն անվամբ գլխատունը ամենակարևոր բաժանմունքն էր, որի մեծությունը պայմանավորված էր գերդաստանի կազմով ու կառուցվածքով, տնտեսական զբաղվածության ծավալներով, ազգային դարավոր ավանդներով, երբ ընտանեկան բաժանքը աղետ է համարվել: Այդ հարկաբաժինը միաժամանակ գերդաստանի ննջարանն էր, խոհանոցը, սեղանատունը, աշխատանոցը, զրուցարանը, սրբազան արարողությունների վայրը և այլն: ը) Թորվանտուն-խորընդունը Աղձնիքի գրեթե բոլոր շրջաններում գոմի հետ գտնվել է միևնույն ծածկի տակ՝ բնակարանը անասունների շնչով մշտապես տաք պահելու, ինչպես նաև ավարառուներից անասուններին հսկելու նպատակով: Այս կարգի բնակարան-ախոռ ձևը հատուկ է եղել արևմ-

տահայ ազգագավառներին: թ) Ինչպես բնակավայրի, նույնպես և բնակարանի ձևերը անմիջականորեն կապված էին տեղի աշխարհագրական և բնակլիմայական պայմանների, հայ բնակչության զբաղմունքի բնույթի ու կենցաղային առանձնահատկությունների հետ: Երկրագործի և խաշնարածի, հարուստի ու աղքատի, լեռնաբնակի ու դաշտաբնակի կենցաղային պայմաններին համապատասխան՝ տարբերվում էին նաև նրանց բնակարանները, նույնիսկ փոխադրամիջոցների տեսակները՝ սայլ, թե ավանակ ու մարդու շալակ: Դա իր կնիքն է դրել գյուղական բնակարանների հատակագծերի ձևի ու ծավալի վրա, քանի որ դրանցով էր որոշվում այս կամ այն շինանյութը հայթայթելու հնարավորությունը: Մյուս կողմից, ընդհանրություններով հանդերձ, միմյանցից զգալիորեն տարբերվում էին հասարակական տարբեր խավերի բնակարաններն ու տնտեսական կառույցները:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Արաքս» 1894–95, Գ.Ա: պատկերազարդ հանդես, Ս. Պետերբուրգ, տպ. Սկորոխոդովի:

«Արևելք» 1900: Օրագիր քաղաքական և ազգային, Կ. Պոլիս, տպ. «Արևելք» N 4231, 1903, N 5221:

«Արեւելք» 1903, Ուղևորի հիշատակները, № 5221:

«Արձագանք» 1984: Գրական և քաղաքական լրագիր, N 140, 190, Թիֆլիս, տպ. Հ. Մարտիրոսյանցի:

**Դյակոնով Ի.Մ.** 1971, Միտանի պետությունը Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհում, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 181–189 էջ:

**Ժամկոչյան Բ.** 1902, Հայնի, Տեղագրական, ազգագրական, պատմագրական, Պէյրութ, տպ. Տօնիկեան, 457 էջ:

«Լումայ» 1893: Գրական, քաղաքական, պատմական, հանրային ամսագիր, ԳԱ, Թիֆլիս, տպ. Ն. Աղայանի:

**Կարապետյան Ե.** 1962, Սասուն, Ազգագրական նյութեր, Երևան, Հայպետհրատ, 202 էջ:

«Հանդես ամսօրյա» 1896: Բարոյական, ուսումնական և արվեստագիտական, N 9 Վիեննա, տպ. Մխիթարյան միաբանություն:

**Հյուբշման Հ.** 1901, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, տպ. Մխիթարյան միաբանության, 449 էջ:

«Մշակ» 1887: Գրական, քաղաքական շաբաթաթերթ, N 131, 1894, 118, Թիֆլիս, տպ. «Ծերեթելի և ընկերության»:

**Նահապետյան Ռ.** 1970–2010, Դաշտային ազգագրական նյութեր, անձնական արխիվ, տտ. 1–26:

**Նահապետյան Ռ.** 1973, Գերդաստանական տոնը և կենցաղը Աղձնիքի Ազնվաց ձոր գավառում, ԲԵՀ, N 1, Երևանի պետական համալսարանի հրատ., 236–243 էջ:

**Նահապետյան Ռ.** 2004, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբը), Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ ՀՀ ԳԱԱ հրատ., 260 էջ:

**Նահապետյան Ռ.** 2020, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, Տիր հրատ., 394 էջ:

**Պետոյան Վ.** 1965, Սասնա ազգագրությունը, Երևան, ԵՊՀ «Ռոմայոր» տպագրություն, 549 էջ:

**Սամուելյան Խ.** 1941, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Երևան, Արմֆան, 342 էջ:

Սասուն 1894–95, «Արաքս» հանդես, գիրք Ա, Թիֆլիս հրատ.:

**Սրվանձտյանց Գ.** 1982, Թորոս Աղբար, հ. 2, երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 563 էջ:

**Տիգրան Մկունդ** 1950, Ամիտայի արձագանքները, հ. Ա, Ուիհօքն-Նիւ Ճըրզի, 584 էջ:

**Քսենոփոն** 1970, Անաբասիս, թարգմ. և ծանոթագրությունները Ս. Կրկյաշարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 282 էջ:

**Харадзе Р.** 1960, Грузинская семейная община, т. 1, Тбилиси, АН Груз. ССР, 190 с.

# ТИПЫ ТРАДИЦИОННЫХ НАРОДНЫХ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ В АГДЗНИКЕ
## (XIX в. – начало XX в.)

НААПЕТЯН Р.

### Резюме

***Ключевые слова:*** Агдзник, Сасун, горный населённый пункт, родовые населённые пункты, жилищные типы, родственные кварталы, самооборона.

Армянское село в Агдзнике до Геноцида в 1915 г. сохраняло древний обычай заселения родственными кланами, сосредоточенными в отдельном населённом пункте, что было продиктовано социально-экономическими и оборонительными соображениями. Следовательно, одной из характерных особенностей населённого пункта была укомплектованность жилищ под одной общей крышей.

Сельские населённые пункты представляли собой прилегающие друг к другу, связанные друг с другом изнутри и снаружи (посредством открывающегося по соседству входа) жилые комплексы, крыши которых прев-

ращались в тропинки, площадки для коллективных работ, проведения собраний и торжеств.

Обычай совместного проживания кланами способствовал формированию родовых населенных пунктов.

## TYPES OF TRADITIONAL RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK

### (in the 19th and at the beginning of the 20th centuries)

NAHAPETYAN R.

**Summary**

***Keywords:*** historical Agdznik, Sasun, mountain settlement, tribal settlements, housing types, related quarters, self-defense

Before the Genocide of Armenians in 1915, the Armenian village in Agdznik preserved the ancient custom of settling kindred clans in separate settlements. This was conditioned by socio-economic and defense considerations. Consequently, one of the characteristic features of the settlement was the cohesion of housing complexes under one common roof.

Rural settlements were residential complexes with houses adjoined to each other. The latter were connected to one another from within and from outside (through an entrance to the neighbouring house). Their roofs turned into pathways, areas for collective work, meetings, celebrations.

The custom of cohabitation by clans contributed to the formation of clan settlements.

**ГОАР КАРАГЕЗЯН***

*Кандидат филологических наук*

*Института литературы им. М. Абегяна НАН РА*

gkaragyozian@gmail.com

DOI: 10.52853/18294073-2021.3.27-24

# МУЧЕНИЧЕСТВО СОРОКА ОТРОКОВ СЕБАСТИИ В ЕВРОПЕЙСКОЙ ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКОЙ ЛИТЕРАТУРЕ

***Ключевые слова:*** Себастия, 40 мучеников Севастии, агиография, легенда, хождения, записки путешественников, сакральный ландшафт.

### *Вступление*

В четвертую субботу Великого поста Армянская Апостольская церковь отмечает день памяти Сорока святых отроков (воинов-христиан), принявших мученическую смерть за веру во Христа в начале IV века, в Малой Армении, в армянской Севастии (Себасте)[1]. Праздник в память о Сорока мучениках во всех древнейших месяцесловах на Востоке и Западе относится к кругу праздников и дней памяти наиболее чтимых святых[2]. Им посвятили энкомии Василий Великий, Григорий Нисский и Ефрем Сирин. Иоанн Дамаскин и Феофан Никейский написали стихиры на день 40 мучеников, который отмечается греческой и латинской церквями 9 марта. Самый ранний рассказ об их мученичестве изложен Василием Кесарийским в беседе «На святых 40 мучеников» (In sanctos quadraginta martyres). В Севастии, над местом погребения мощей Сорока мучеников, был построен монастырь[3], который до основания разрушил Тимур[4].

---

* *Հոդվածը ներկայացվել է 23.09.21, գրախոսվել է 03.09.21, ընդունվել է տպագրության 19.11.21:*

[1] **Աւգերեան** 1811: **Նահապետեան, Հովհաննէսեան** 1929, 99–108:

[2] **Ростовский** 1840, 117.

[3] **Ինճիճեան** 1806, 286:

Почитание Сорока мучеников получило широкое распространение. В их честь было возведено множество церквей: церковь 40 святых отроков в Севастии (IV в.), храм 40 Севастийских мучеников (Ксиропотамский монастырь) на Афоне (V в.), собор 40 мучеников в Алеппо (ок. 1429), церковь 40 мучеников в Тбилиси ( ?), храм 40 Севастийских мучеников (Нокалакеви, Грузия, VI в. ?), монастырь 40 отроков в селе Дсех (Лори, Армения, X век), в Велико-Тырново (Болгария, 1230), в Слободе (Москва, XVI в.), церковь 40 мучеников в Переславле-Залесском (1628), в Яссах (Румыния, 1760), часовня 40 мучеников на римском Форуме, мартириум 40 мучеников в Бейруте (VI век), колоннада 40 мучеников там же (VI век), мартириум (IV век) с мощами святых на Масляничной горе в Палестине, пещерная часовня 40 Святых (Agioi Saranta) в Протарасе (Кипр, ?), башня 40 мучеников в Рамле (Палестина, ?), церковь 40 мучеников в районе Александретта провинции Хатай (1872), церковь 40 Севастийских отроков в армянском квартале Нор Мараш Бурдж Хаммуда (Ливан, 1929). Албанский город Саранда свое название получил от византийского монастыря Агия-Саранда (Άγιοι Σαράντα), что переводится с греческого языка как «сорок святых». Город был построен в X веке в честь Сорока Великомучеников Севастийских. В годы османского владычества название сменилось на Айя-Саранда (на европейских картах – Санти Кваранта), армянская церковь 40 мучеников (Милан, 1957), армянская церковь 40 мучеников в округе Ориндж (США, 1986).

Место действия мартирии – Севастия – древний город в Каппадокии и Понте (историческая Малая Армения). Именно здесь имели место трагические события, связанные с воинами XII Молниеносного легиона, отказавшимися принести жертву языческим богам и замученными в Севастийском озере. Эта история на протяжении веков притягивала к себе внимание художников, поэтов, писателей, путешественников.

В контексте поставленной проблемы особый интерес представляют памятники европейского раннего средневековья «История франков»

[4] Об этом пишет Ованнес Себастаци в «Истории Себастии»: «[Ленг Тимур] до основания снес прекрасный храм Сурб Карасниц /Святой Сороковицы/, с сорока куполами, под которыми были похоронены их тела», **Себастаци** 2015, 51.

(«Historia francorum») и «Семь книг о чудесах» («Miracula et opera minora») крупнейшего представителя французской историографии VI века Григория Турского. Франкскому историку принадлежит далеко не последняя роль в деле популяризации мученичества 40 отроков. Так, в «Семи книгах о чудесах», наряду с местными сказаниями, представлены образцы агиографии восточных стран, среди которых ценным для армянской исторической науки является описание мученичества 48[5] армян Севастии, подвергшихся гонениям в период поздней Римской империи, во времена Лициния, в 320-ом году. Ниже приводится отрывок из «Семи книг о чудесах»: «Говорят, что в Армении, на горах, где крайний холод, вызванный их божественной высотой, сковал землю и воду, 48 христиан восприняли мученическую смерть. Творец божественного закона поведал нам о немалой высоте этих гор, сказав, что на их вершине остановился ковчег Ноя. Здесь некий гонитель на христиан велел вырыть в земле глубокий водоем и заполнить его водой. Затем, он приказал оголить людей, привязать их руки к спине и опустить в застывшее от мороза озеро. Неподалеку находилась баня. Тогда он им сказал: «Выбирайте одно из двух! Погибнуть во льдах от холода, исповедуясь вашему Христу, или же, отрекаясь и принося в жертву Бога, искупаться в бане и не умереть так убого за человека, который был распят. Поскольку все отказались продать душу дьяволу, охранник увидел 48 драгоценнейших венцов, падающих с неба и опускающихся на их головы. Один из венцов вознесся обратно в небо, так как один из них изменил вере. Надзиратель, о котором мы уже говорили, видя происходящее, громкогласно объявил себя христианином и произнес: «Я хочу умереть вместе с ними!». Он был предан различным пыткам, с него сняли одежду, но не смогли отнять веру, его опустили в озеро, дабы он страдал вместе с другими, но он обрел венец, потерянный тем презренным. Несчастные умирали от холода, зубы их скрежетали, голоса стихали. И лишь шепот молитвы поднимался из груди к небу, молитвы, которую слышал лишь Господь, проникающий в сердца. Измученные холодом и

[5] Число 48, приведенное Турским (в агиографической традиции 40), связано с ассоциацией мучеников Севастии с 48-ью Лионскими мучениками, пострадавшими в годы правления Марка Аврелия.

голодом, они надеялись лишь на небо. Однако единственный судья велел в семь раз сильнее растопить баню, чтобы те, которые сопротивлялись холоду, были доведены до отчаяния. Их, исповедующих Христа, вытащили из озера и заставили пройти сквозь обжигающие пары. Однако они мужественно терпели все пытки, дабы заслужить более высокую пальмовую ветвь. Оставив там тела, поручив душу Богу, они мирно завершили свои муки. Тогда гонитель, видя, что побежден их стойкостью и желая испытать торжество по крайней мере после смерти тех, которых не смог укротить при жизни, приказал сжечь их тела и бросить в реку. Когда это было сделано, христиане в слезах узрели новое чудо: волны, сопротивляясь, не поглотили их останки, они их поддерживали на поверхности как нечто святое. Христиане имели счастье их собрать и похоронить с большими почестями (здесь и далее переводы наши – Г.К.)»[6].

*նին* պարունակում է հնչյուններ անվան առաջին ու երկրորդ վանկերից և երկրորդ վանկի շրջված ձևը (*ծ-ի-րան-ի*): Առասպելաբանաստեղծական տրամաբանությամբ անվանումների այս նմանությունը կապ կարող է ակնարկել նրանցով նշանակվող երևույթների միջև: Եվ ակնհայտ է, որ Ծովինարը հանդես է գալիս որպես ծիրանի ծովի դիցաբանական անձնավորում[11]: Ըստ այդմ, «Վահագնի երգի» երկրորդ տողը՝ *երկնէր և ծովն ծիրանի* միանգամայն համապատասխանում է էպոսի երկվորյակների ծննդին՝ երկնում է ծիրանի ծովը, որի անձնավորումը Ծովինարն է: Բայց ակնհայտ է նաև, *ծովն ծիրանին* ոչ միայն անձնավորվում է Ծովինարով, այլ հանդես է գալիս որպես Ծովինարի անվան անագրամ՝ ակնարկ, գաղտնագիր:

***Վահագն աստվածը***

Հայկական մշակույթը սկսած Աքեմենյան դարաշրջանից զարգացել է իրանական, իսկ հելլենիզմի օրոք՝ նաև հունական ազդեցության տակ: Մեզ հայտնի հայ հեթանոսական աստվածների մեծ մասը հանդես են գալիս իրանական՝ պարթևական և հունական անուններով (Արամազդ-Զևս/Դիոս, Անահիտ/Արտեմիս, Վահագն/Հերակլես, Միհր/Հեփեստոս, Տիր/Ապոլոն): Այս աստվածներով կազմված դիցարանը, տաճարները և պաշտամունքը ձևավորվել են Արտաշեսյան դարաշրջանում, հատկապես Տիգրան Մեծի օրոք և վերջնական տեսք ստացել Արշակունյաց ժամանակներում[12]:

Վահագնի անունը ծագում է պարթևական Varhragn ձևից[13]: Անվան հնագույն իրանական տարբերակներն են հին իրան. Vṛθragna և ավեստ. Vərəϑraγna ձևերը, որոնք գալիս են հնդիրանական միասնության դարաշրջանից. հին հնդկական առասպելաբանության մեջ ամպրոպի աստված Ինդրան սպանում է Վրտրա օձ-վիշապին և կոչվում Vṛtrahan «Վրտրային սպանող», որի ստուգաբանական համապատասխանությունն է Vṛθragna/ Vərəϑraγna-ն: Մինչև XIX դարի վերջին քառորդը հայերենը հաճախ դասվում էր իրանական լեզուների շարքում, այսինքն՝ մոտ ազգակից համարվում հին հնդկերենին: Մկրտիչ Էմինը, ելնելով Վահագնի «վիշապաքաղ» և Ինդրայի Vṛtrahan կոչումների համապատասխանությունից և ցույց տալով «Վահագնի երգի» և Ինդրային ձոնված վեդայական հիմների ընդհանրությունները, Վահագնին համարել է Ինդրայի

[11] **Հարությունյան** 2000, 80; **Petrosyan** 2002, 14:

[12] **Խորենացի** Բ; ժբ, ժդ; **Պետրոսյան** 2004, 208:

[13] **Աճառյան** 1962, 8; **Топоров** 1977, 99. **EIr** II, 459:

հայկական զուգահեռը[14]: Սակայն հետագայում պարզվեց, որ հայերենը հնդեվրոպական լեզուների մի առանձին ճյուղ է, և Վահագնը, այսպիսով, իրանական (փոխառված) անուն է: Եվ Վրթրագնա/Վըրըթրաղնան «վիշապասպան» չէր, այլ ռազմի և հաղթանակի մի աստվածություն, և նրա անունն էլ իրանական համատեքստում իմաստավորվում է որպես «դիմադրություն/արգելք հաղթահարող», «հաղթական»: Ի դեպ, այս մակդիրը և՛ Հնդկաստանում, և՛ Իրանում կիրառվել է տարբեր աստվածների ու հերոսների համար: Ուղղակի այդ անվան իրանական տարբերակը, իրանական ազդեցության դարաշրջանում, գործառությունների որոշակի ընդհանության պատճառով, անցել է հնագույն հայկական ռազմի աստծուն, որը հնդեվրոպական համատեքստում չափազանց նման է եղել Ինդրային և, ինչպես Ինդրան և որոշ այլ հնդեվրոպական ռազմի աստվածներ, եղել է նաև ամպրոպի աստված և վիշապամարտիկ (հմմտ. և Վահագնի «վիշապաքաղ» կոչումը)[15]:

Հատկանշական է, որ Ինդրան ևս, ինչպես և որոշ այլ ժողովուրդների ամպրոպի աստվածներ, օրինակ, շումերական Իշկուրը և խուռիական Թեշուբը, երկվորյակային կերպար է (նրա եղբայրն է կրակի աստված Ագնին): Ե՛վ Իրանում, և՛ Հայաստանում Վահագնը նույնացվել էր Հերակլեսի հետ, որը ևս ծնունդով երկվորյակ էր՝ Իփիկլեսի եղբայրը:

***Վահագն և Տիգրան***

Խորենացին Վահագնին ներկայացնում է որպես Տիգրան արքայի երրորդ որդի: Եվ հենց նրա մասին է համարում «Վահագնի երգը»: Մինչդեռ քննությունը ցույց է տալիս, որ Տիգրան Մեծի կերպարն է, որը Խորենացու մոտ տեղափոխվել է նրանից հինգ դար առաջ ապրած Տիգրանի վրա[16]: Տիգրանի հակառակորդն է Մարաստանի Աժդահակ թագավորը. սա իրանական առասպելաբանության մեծ օձ-վիշապն է, Աժի Դահական, որին Խորենացին նույնացնում է Մարաստանի՝ հունական աղբյուրներից հայտնի հին թագավոր Աստիագեսի հետ[17]: Խորենացին ինքն էլ ասում է, որ Աժդահակ մեր լեզվով

[14] **Эмин** 1873:

[15] **Ագաթանգեղոս** 809:

[16] **Աբեղյան** Ա, 97–115:

[17] Հունական աղբյուրներին քաջատեղյակ հեղինակը միայն կարող էր տեղյակ լինել Աստիագեսի մասին (Ἀστυάγης-ը հունական աղավաղված ձևն է իրանական *Ṛšti-vaiga «Նիզակ ճոճող/նետող» անվան, տե՛ս **EIr** 2, 873–874), և այդ նույնացումը կատարվել է Խորենացու կամ նրա աղբյուրի կողմից: Ընդ որում, կարծիք կա, որ Աստիագեսը համա-

«վիշապ» է նշանակում, և Տիգրանն, այսպիսով, հանդես է գալիս որպես առասպելական վիշապամարտիկ հերոս: Այսինքն, Տիգրանը վեպում իր վրա է վերցրել վիշապներին հաղթող «վիշապաքաղ» Վահագնի դերը: Տարածաշրջանի՝ իրեն ժամանակակից որոշ այլ արքաների նման, Տիգրանը նույնպես աստվածացվել էր իր կյանքի օրոք, ընդ որում, նույնացվելով Վահագն-Հերակլեսի հետ[18]: Եվ դա է եղել Վահագնին Տիգրանի որդի դարձնելու պատճառը: Պետք է ավելացնել, որ Վահագնի այս մարդեղացումը կարող էր տեղի ունենալ քրիստոնեական դարաշրջանում, երբ կորել էր հին աստվածների վերաբերյալ հավատը:

Տեսանք, որ «Վահագնի երգում» առավել աչքի ընկնող անագրամը երկու թվականի և ընդհանրապես երկվության գաղափարի շեշտումն է: Սակայն, մյուս կողմից, երգն ինքը եռամաս է՝ ամեն մասը կազմված երեք տողից: Եվ ինչպես գրում է Վլադիմիր Տոպորովը, «Ե՛վ երգի պոետիկ ստուգաբանությունը, և՛ նրա պոեզիայի քերականությունը, և՛ քերականության պոեզիան (ըստ Ռ. Յակոբսոնի բանաձևի), և՛ անագրամների տեխնիկան, էլ չասած բուն բովանդակության և կառուցվածքի մասին, կողմնորոշված են դեպի եռակիության գաղափարը»[19]: Վահագնը, ինքը, ինչպես և հնդեվրոպական այլ ռազմի կերպարներ, այլևայլ ձևերով կապված է երեքի ու եռակիության տարբեր դրսևորումների հետ[20]: Ընդհանրապես, հայկական վիպական բանահյուսության մեջ երկվորյակներին կարող են փոխարինել կամ հաջորդել եռվորյակ կամ երեք եղբայրները, իսկ հնդեվրոպական վաղնջական երկվորյակները կարող են լինել եռվորյակներ[21]:

Վահագնը ա) Տիգրանի երեք որդիներից երրորդն է, բ) մի աստվածային եռյակի երրորդ անդամ՝ Արամազդ, Անահիտ, Վահագն (Ագաթանգեղոս, 127), գ) նա պաշտվում էր Քարքե լեռան վրա գտնվող եռամաս տաճարական համալիրում (Անահիտի և Աստղիկի հետ միասին, Ագաթանգեղոս 809), դ) նրա անունով էր կոչվում ամեն ամսի 27-րդ (3 × 3 × 3) օրը, ե) նրա հիմնը բաղկացած է երեք եռատողերից, որտեղ ինքն առավելապես ներկայացվում է եր-

---

դրվել է Աժի Դահակայի հետ դեռևս հին Իրանում, տե՛ս **Schwartz** 2012: Հին իրանական ավանդույթում առասպելական վիշապի մարդեղացման վերաբերյալ տե՛ս **Daryaee** 2020:

[18] **Սարգսյան** 1966, 55–57: **Саркисян** 1966, 14–17:

[19] **Топоров** 1977, 101.

[20] **Топоров** 1977. **Պետրոսյան** 2008:

[21] **Иванов** 1986, 20; **Petrosyan** 2002, 15–20.

րորդ տողերով[22]: Վահագնի հիմնում արտահայտված այս, թվում է, թե իրար հակասող, երկուսի և երեքի «գաղափարախոսությունները», կարելի է դիտել որպես երկուսից երրորդի առաջացման, երկվորյակներից հետո՝ երրորդ եղբոր ծնունդի, կամ «եռակի երկվորյակության»՝ եռվորյակության ակնարկ:

Տիգրանի կերպարը ևս կապված է երեք թվականի և եռակիության հետ. ա) Խորենացին ներկայացնում է նրան որպես երեք ամենամեծ հայ հերոսներից երրորդը (Հայկ, Արամ, Տիգրան), բ) Տիգրանը Խորենացու՝ հայոց արքաների ցանկում հայոց իններորդ (3 × 3) արքան է, գ) նա սպանում է Աժդահակին, որը իրանական առասպելաբանության եռագլուխ օձ Աժի Դահակայի վիպականացած մի տարբերակն է, դ) այդպիսով, նա համապատասխանում է Աժի Դահակային սպանող իրանական «երրորդ հերոս» Թրաետաոնային, ե) նրա որդիների թիվը նույնպես երեք է:

Խորենացու մոտ (Ա.իզ) Աժդահակը խորհրդականներին պատմում է իր երազը՝ երեք դյուցազունների ծնունդը Հայաստանի մի բարձր, սառնամանիքով պատած լեռան մոտ (այսինքն՝ պետք է կարծել, լեռան ձյունածածկ գագաթին):

> *Եւ ի նայել իմ յերկարագոյնս ի լեառնն՝ կին ոմն ծիրանազգեստ, երկնագոյն ունելով զիւրեաւ փեռ («քող» – Ա. Պ.), նստեալ երեւեցաւ ի ծայրի այնպիսւոյ բարձրութեան, աչեղ, բարձրահասակ եւ կարմրայտ, երկանց ըմբռնեալ ցաւովք: Եւ ի երկարագոյնս նայել իմ յայնպիսի երեւումն եւ ի հիացման լինել՝ ծնաւ յանկարծ կինն երիս կատարեալս ի դիւցազանց հասակաւ եւ բնութեամբ:*

Սրանցից երրորդ եղբայրը վիշապ սանձած հարձակվում է Աժդահակի վրա և սպանում նրան, ընդ որում, կռվի ընթացքում Աժդահակի՝ ապարանքի արեգակի նման փայլող երեսը դառնում է արյան ծով (հմմտ. ամպրոպի աստծու կռվի մարտադաշտի կոչումը՝ «ծիրանի» կամ «արյուն ծով»): Ակնհայտորեն, վիշապ սանձած և վիշապ Աժդահակին սպանող հերոսը ներկայացնում է «վիշապաքաղ» Վահագնի կերպարը[23]: Եվ երազի նկարագրության մեջ նմանությունները «Վահագնի երգի» հետ ակնհայտ են: Աչքի են զարնում կրկնվող

---

[22] **Պետրոսյան** 2008, 159: Հիմնի առաջին եռատողում նա կարծես ծնվում է երկիր/երկինք միասնությունից, ապա՝ ծովից, բայց իրականում՝ երրորդ տողի կարմիր եղեգնիկից. երկրորդ եռատողում եղեգնից ելնում է նախ՝ ծուխ, ապա՝ բոց, և երրորդ տողում՝ ինքը՝ Վահագնը. երրորդ եռատողում ներկայացվում են նախ՝ նրա մազերը, հետո՝ մորուքը և երրորդ տողում՝ կերպարն առավել բնորոշող և դիցաբանորեն առավել էական արև-աչքերը:

[23] **Աբեղյան** Ա, 138:

բառերը, արմատները և պատկերները՝ *երկին* և *երկնագույն*, *աչկունք* և *աչեղ*, *կարմրիկ* և *կարմրայտ*, *ունէր* և *ունելով*, *երկնէր* և *երկանց ցաւ*, *ծիրանի ծով* և *ծիրանազգեստ*, որոնք ցույց են տալիս երազի պատկերի ուղղակի կապը «Վահագնի երգի» հետ: Իսկ եռվորյակների մոր կերպարը նույնական է Ծովինարին: Բանահյուսության մեջ վերջինս, ինչպես ասվեց, հանդես է գալիս որպես երկնքում բնակվող և քող կրող մի դիցուհի: Եվ Ծովինարը մարմնավորում է երկնային ծիրանի ծովը, այնպես, ինչպես և Աժդահակի երազի կնոջ ծիրանի զգեստը:

### *Վահագն և Սանասար*

Աբեղյանը մանրամասն քննությամբ ցույց է տվել Սանասարի՝ «կայծակնային» կամ «ամպրոպային հերոս» լինելը[24]: Այսինքն՝ նա ամպրոպի հին աստծու էպիկական փոխակերպումն է, վիպականացած ժառանգը: Ահա Աբեղյանի փաստարկները. ա) նա, ինչպես և իր երկվորյակ եղբայրը, ծովածին կամ ծովային է, ինչպես հնդկական Ինդրան, նրա երկվորյակ եղբայր Ագնին և ծիրանի ծովից ծնվող Վահագնը, բ) Սանասարի ձի Քուռկիկ Ջալալին նույն ամպրոպի և կայծակի անձնավորումն է որպես ձի, գ) կայծակի մի ուրիշ պատկերացումն է նրա զենքը՝ Կայծակի թուրը, դ) Սանասարը հարվածում է վիշապին, որը բաց է թողնում ջրերը (վիշապամարտը սովորաբար վերագրվում է ամպրոպի աստծուն, իսկ վիշապի պարտությունից հետո սկիզբ են առնում ջրերը՝ անձրև է գալիս ևն)[25]: Կարելի է ավելացնել, որ վիշապամարտի դրվագում Սանասարն իրեն նույնացնում է անձրևաբեր սև ամպի հետ[26], որով համապատասխանում է հին հնդկական ամպրոպային մեկ այլ աստծու՝ Պարջանյային, անձրևաբեր ամպի անձնավորմանը:

Բայց կարելի է ցույց տալ, որ Սանասարը հենց Վահագնի վիպական համապատասխանությունն ու ժառանգն է: Նախ, Վահագնի պաշտամունքը կենտրոնացած էր Մուշ-Տարոնում, իսկ Տարոնը և Սասունը մեկ ընդհանուր տարածաշրջանի մաս են կազմել (Մուշ-Սասուն): Սանասարի մայրն է Ծովինարը, իսկ Վահագնը ծնվում է «ծիրանի ծովից», որի անձնավորումն է Ծովինարը: Սանասարը ծնվում է երկվորյակ եղբոր հետ, իսկ «Վահագնի երգի», կարևորագույն ակնարկը հենց *երկ-* վանկի կրկնությամբ արտահայտված երկվորյակության գաղափարն է: Սանասարը վիշապամարտիկ է, ինչպես և

---

[24] **Աբեղյան** Ա, 414–418; Է, 72–73:

[25] **Иванов, Топоров** 1974, 5.

[26] **Աբեղյան** Ա, 417–418:

Վահագնը[27]: Նույն տարածքում տեղայնացած, նույնական մորից, նույն դիցաբանական հատկանիշներով օժտված կերպարները, ակնհայտորեն նույնական են: Կարևոր տարբերությունն այն է, որ նրանցից մեկը հայտնի է որպես հայոց հնագույն աստված, իսկ մյուսը՝ XIX դարում գրանցված էպոսի հերոս: Դա հանգեցրել է Սանասարի կերպարի նշանակալի ձևափոխության՝ նա ձեռք է բերել վիպական հերոսի մարդկային հատկանիշներ և համապատասխանեցվել ասացողների ժամանակի իրականությանը:

***Քաջ Վահագն, Քաջանց պուն և Սասնա ծռեր***

Վահագնը ոչ միայն ամպրոպի, այլև քաջության և ռազմի աստված էր: Ագաթանգեղոսի մոտ (127) Տրդատ արքայի խոսքում ասվում է՝ «քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ»: Ուրեմն, *քաջը* Վահագնի մակդիրն է՝ նա է երկրային քաջերի դիցաբանական անձնավորումը և առաջնորդը: Իսկ քաջերը միայն քաջ ռազմիկները չեն: Այդպես է կոչվում և առասպելական արարածների մի ամբողջ դաս, նոր հայերեն՝ քաջքեր: Նոր բանահյուսության մեջ քաջքերը, շատ առումներով, կարծես նույնական են վիշապներին ու չար ոգիներին՝ չարքերին[28]: Բայց հնում այդպես չի եղել: Քաջ(ք)երը պիտի լինեին Վահագնի հետևորդները, վիշապներին հակադրված կերպարներ[29]:

Վաղնջական հնդեվրոպական հասարակություններում տղան սկզբից անցնում էր պատանիների կարգ և որպես ամուրի և անհող հասակակիցների եղբայրության անդամ, դաստիարակ-հրամանատարների ղեկավարության տակ, որսորդությամբ ու ավազակությամբ ապրում ցեղի տարածքի եզրերին, սահմանային շրջաններում: Մոտ 20 տարեկանում նա ճանաչվում էր ցեղի լիիրավ անդամ և կարող էր ընդգրկվել ավելի հեղինակավոր ռազմական միավորումների կազմում, ամուսնանալ, ունենալ իր տունը և ունեցվածքը[30]: Սրանց առասպելաբանական արտացոլումներն են, օրինակ, հնդկական Ինդրա և Ռուդրա աստվածների հետևորդ մարուտները և ռուդրաները, սկանդինավյան Օդինի անդրաշխարհիկ զորքը՝ էյնհերիները ևն: Մեծագույն Քաջը՝ որպես *պապանեկիկ* ծնվող Վահագնը, պիտի լիներ հին հայոց պատանեկան եղբայրության անդամների՝ քաջերի աստվածային անձնավորումն ու առաջ-

---

[27] **Աբեղյան** Ա, 383–385:

[28] Քաջքերի վերաբերյալ տե՛ս **Ալիշան** 1895, 191–197. **Աբեղյան** Է, 85–89:

[29] **Պետրոսյան** 2010; **Petrosyan** 2018:

[30] Տե՛ս **Mallory, Adams** 1997, 6–7, 531, 632–633; **Kershaw** 2001, passim, խնդրի նախորդ գրականությամբ; այս խմբերի հայկական իրականության մեջ թողած հետքերի վերաբերյալ՝ **Պետրոսյան** 2001, 2004, 190–198, **Petrosyan** 2011:

նորդը (ինչպես, ասենք, Ինդրան և Ռուդրան՝ մարուտների և ռուդրաների համար)[31]: Այս խմբերի անդամներին երբեմն վայրի, դիվական հատկանիշներ են վերագրվել, նրանք համադրվել են հատկապես գայլերի հետ (համարվել է, որ հերոս ռազմիկին տիրում է գայլային կատաղությունը)[32]: Եվ Վահագնի՝ այդօրինակ եղբայրության առաջնորդ լինելն է վկայում Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» հերոս Գայլ Վահանը, որի անունը Վահագնի մի ձևափոխությունն է[33]:

«Սասնա ծռերի» մի վաղնջական հիշողություններ պահպանած պատումում[34] քաջանց թագավորի տղան առնում է Սասունի Աստղիկ թագավորի աղջկան, որն աղբյուրի ջրից հղիանալով ունենում է Սանասարին և Բաղդասարին: Հետագայում Սանասարն ինքը ամուսնանում է քաջանց թագավորի աղջկա հետ: Քաջանց թագավորը և նրա տղան հիշեցնում են քաջ Վահագնին, Աստղիկ թագավորը՝ Աստղիկ դիցուհուն, որը Վահագնի սիրուհին էր (Ագաթանգեղոս 809. Վահագն-Աստղիկ զույգը համապատասխանում է հունական Արես-Աֆրոդիտե զույգին և թերևս ձևավորվել է հելլենիստական ազդեցությամբ): Մյուս կողմից, քաջանց թագավորն առավել հայտնի է որպես Սանասարի կնոջ՝ Դեղձունի հայր և այսպիսով, էպոսի հաջորդ սերունդների հերոսների՝ Մեծ Մհերի, Դավթի և Փոքր Մհերի նախնի: Քրիստոնեական ժամանակների մի լեգենդի համաձայն, ջրհեղեղից հետո Նոյն ունենում է մեկ որդի և դուստր, Մանիտոն և Աստղիկ անուններով, որոնց թաքցնում է աստծուց, ինչի հետևանքով նրանք աներևութանում ու քաջք են դառնում: Նրանցից են, իբր, սկիզբ առնում քաջքերը[35]: Պարզ է, որ այստեղ մենք գործ ունենք մի հին առասպելի ձևափոխված տարբերակի հետ: Պետք է կարծել, որ քաջքերը, հնում՝ քաջերը, համարվել են Վահագնի և Աստղիկի սերունդը: Եվ նրանց մասին է, որ պատմում է «Սասնա ծռերը», այլ կերպ՝ «Ջոջանց տունը», որոնց որոշակի կարող է համապատասխանել և «Քաջանց տունը»[36]:

Այս վերակազմությունն իր հիմնավորումն է ստանում Յարոսլավ Վասիլկովի վերջերս հրատարակված աշխատություններում[37]: «Սասնա ծռերի» և հնդկական «Մահաբհարատա» էպոսների համադրությունը ցույց է տալիս, որ

[31] **Պետրոսյան** 2010, **Petrosyan** 2018:
[32] **Lincoln** 1991, 131–137;
[33] **Աճառյան** 1962, 9, **Schmitt** 1984, 322–323:
[34] ՍԾ Ա, 1027 հտն:
[35] **Ալիշան** 1895, 208. **Աբեղյան** Է, 85:
[36] **Օրբելի** 1961, III:
[37] **Васильков** 2018, 2019.

հայկական և հնդկական էպոսների շատ մոտիվներ արտացոլում են վաղնջական ռազմական եղբայրությունների իրողությունները: Ներկայացնենք հեղինակի որոշ փաստարկներ: Այսպես, «Սասնա ծռերի» բոլոր մեծ հերոսները՝ Սանասարը, Բաղդասարը, Մեծ Միհրը, Դավիթն ու Փոքր Միհրն իրենց համարյա բոլոր սխրագործությունները կատարում են մանուկ կամ պատանի հասակում: Այդ տարիքում նրանք չեն վերահսկում իրենց դյուցազնական ուժը և երբեմն վայրի արարքներ են թույլ տալիս իրենց: Էպոսի հերոսների կենսագրության մեջ շեշտվում է նրանց՝ համայնքից վտարման թեման (խելահեղ արարքների պատճառով): Այսպես, Սանասարն ու Բաղդասարը կառուցում են իրենց քաղաք Սասունը հեռավոր և ամայի մի վայրում (ինչպես պանդավաներն իրենց քաղաքը «Մահաբհարատայում»): Սա ցույց է տալիս, որ հայոց մեջ երկար ժամանակ գոյատևել են պատանեկան սոցիալ-տարիքային միավորումները, ինչը վկայում են նաև ազգագրական տվյալները[38]: Ռազմական եղբայրությունների ինստիտուտը հնարավորություն էր տալիս ըստ հարկի վերահասցեագրել պատանեկան ագրեսիվությունը և նրա կրողներին դուրս բերել բնակավայրի սահմաններից համայնական տարածքի ծայրամաս: Ի միջի այլոց, քաջքերը սովորաբար ապրում են լեռներում և անտառապատ ձորերում[39], այնտեղ, որտեղ լեռնային երկրներում կարող էին բնակվել պատանեկան եղբայրությունների անդամները: «Սասնա ծռերի» յուրաքանչյուր հերոսի կենսագրություն փաստորեն հանգում է մանկությանն ու պատանեկությանը, ավարտվելով ամուսնությամբ և որդի ունենալով, որից հետո հերոսին մնում է մեռնել կամ դուրս գալ իր վերջին կռվին (ամուսնությունից հետո, երբ հերոսը տեղափոխվում է հաջորդ սոցիալական դաս, էպոսը կորցնում է նրա նկատմամբ հետաքրքրությունը և շուտով հաղորդում նրա մահվան մասին): Հերոսի զինակիցները, եթե կան, դեռահաս պատանիներ են: Հենց 40 ազապ լաճերի ու 40 ազապ աղջիկների հետ է հերոսը (Դավիթը, Փոքր Միհրը) խրախճանք անում, նռան գինի խմում: Այդ թիվը համադրելի է եղբայրության անդամների թվի, իսկ էպոսի հերոսների մշտական խորհրդատուն՝ Քեռի Թորոսի կերպարը՝ եղբայրության ուսուցիչ-դաստիարակի կերպարի հետ: Հերոսների *ծուռ* կոչումը կարող է բնորոշել նրանց՝ մոլեգնության հասնելու ընդունակությունը, որը վերացնում է մահվան սարսափը և հաղթանակ ապահովում մարտում:

---

[38] **Варданян** 1981.

[39] **Աբեղյան** Ա, 86:

Ի միջի այլոց, *ծուռ* բառի նշանակություններից են «խենթ» և «քաջ»[40]: Ընդհանրապես, առասպելաբանական կերպարների անվանումները հաճախ են տաբուավորվում, ինչի հետևանքով էլ նրանց կոչում են այլևայլ նոր ձևերով, ինչպես քաջքերը՝ «մեզնից լավեր» և այլն[41]: Եվ *ծուռ* կոչումը կարծես թե մի տաբուավորված տարբերակն է ավելի հնից հայտնի և ճոխ ներկայացված *քաջ* բառի, որով կոչվել է քաջ Վահագնի պատանեկան զորքը[42]:

***Խուռիական կապեր***

Մենք մեր աշխատանքներում փորձել ենք հիմնավորել, որ Սանասարը Հայկական լեռնաշխարհի հնագույն առասպելների համատեքստում խուռիական ամպրոպի աստված Թեշուբի ժառանգն է[43]: Նախ, Սասունը հնում մտնում էր Շուբրիա թագավորության մեջ, որի մ.թ.ա. XI–VII դարերի արքաների անունների մեծ մասը պարունակում է Թեշուբ տարրը (Ligi-Tešub, Šerpi-Tešub, Kali-Tešub, Kili-Tešub, Šadi-Tešub, Ḫu-Tešub, Ik-Tešub, [...]gi-Tešub)[44]: Ըստ այդմ, Թեշուբը եղել է Շուբրիայի գլխավոր աստվածը: Թեշուբի սաղմնավորումը ներկայացվում է այսպես: Կումարբի աստվածը, աստվածների արքան, գահընկեց անելով իր նախորդին՝ երկնքի աստված Անուին, կուլ է տալիս նրա «այրականությունը» և այդպիսով հղիանում Թեշուբով ու նրա եղբայրներով՝ Արանցախ (Տիգրիս գետն է) և Թաշմիշու աստվածներով[45]: Ակնհայտ է, որ Տիգրիսի աստծու և նրա երկվորյակ եղբայրների ծնունդը պետք է տեղայնացվի Տիգրիս գետի ակունքներից մեկում: Սա միանգամայն համադրելի է «Սասնա ծռերի» առաջին հերոսների պատմությանը՝ Ծովինարը աղբյուրից խմում է մեկ ու կես բուռ ջուր և հղիանում երկվորյակ Սանասարով և

[40] **Սուքիասյան** 1967, 293:

[41] **Աբեղյան** Է, 86:

[42] Պարսկերեն kæǰ նշանակում է «ծուռ»: Կարելի է կարծել, որ հայերեն որոշ բարբառներում *քաջն* իմաստավորվել է ըստ այդ բառի որպես *ծուռ*, որը և դարձել է Սասունի հերոսների քաջի համարժեք կոչումը: Բայց այդ պարսկերեն բառը հայ բարբառներ չի մտել, այն չկա նաև «Սասնա ծռերի» նախնական տարածման շրջանների բնակիչներին լավ ծանոթ թուրքերենում և քրդերենում: Ինչևէ, ասվածը շատ պարզ կարող է բացատրել ծուռ և քաջ բառերի այս հոմանշության ծագումը: Ի միջի այլոց, *դալի* «խենթ, գիժ» են կոչվել նաև Քյոռօղլու ընկերները (ավազակախմբի անդամները), որը, հաշվի առնելով այդ էպոսում հայկական տարրի էական դերը, կարող է հայկական ազդեցության արդյունք համարվել:

[43] **Petrosyan** 2002, 20–22. **Պետրոսյան** 2018, 186–187:

[44] **Gelb** 1944, 82–83. **Հմայակյան** 1990, 43:

[45] **Hoffner** 1990, 40 f. **Иванов** 1977, 114 сл.

Բաղդասարով, որոնք հետագայում կառուցում են իրենց քաղաք Սասունը Տիգրիս գետի վտակներից մեկի ակունքում:

Թեշուբի մասին ամենահայտնի առասպելը «Ուլլիկումմիի երգն» է: Երբ նա դառնում է աստվածների արքա, նախորդ արքան՝ նրա ծնող Կումարբին դավեր է նյութում, փորձելով գահընկեց անել նրան: Կումարբին բեղմնավորում է «սառը լճի» «մեծ ժայռը», որը ծնում է քարե հրեշ Ուլլիկումմիին: Աստվածները կռվում են հրեշի դեմ, բայց նա այնքան մեծ է, որ չեն կարողանում վնասել նրան: Առասպելի վերջը չի պահպանվել, բայց այն հավանաբար պետք է ներկայացներ Թեշուբի վերջնական հաղթանակը[46]: Այս առասպելը տեղայնացվում է Կիլիկիայում, բայց, քանի որ խուռիների հին հայրենիքը եղել է Հայկական լեռնաշխարհում, ապա այն պետք է ունենար տեղայնացումներ նաև այնտեղ[47]: Եվ հավանական տեղայնացումներից մեկը կարող էր լինել Այրարատի Գեղարքունի (հնում՝ Գեղաքունի) գավառում՝ ուրարտական աղբյուրների Uelikuni/Uelikuḫi երկրում, որի անունը համադրելի է Ուլլիկումմիի անվան, իսկ նրա տարածքներում կենտրոնացած վիշապ քարակոթողները՝ կերպարի հետ[48]:

Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. III հազարամյակի կեսից հետո ի հայտ են գալիս հնդեվրոպական վերակազմությունների հետ համադրելի մշակույթ կրող ցեղեր. այստեղ են կենտրոնացած միայն Հայկական լեռնաշխարհին բնորոշ և նույն դարաշրջանից թվագրվող վիշապաքարերը, որոնք կարող են գնահատվել որպես հնդեվրոպական մտքի ստեղծագործություններ[49]: Թեշուբի ցիկլի խուռիական առասպելները չափազանց նման են հնդեվրոպական ամպրոպի աստծու և նրա հակառակորդ օձ-վիշապի կռվի առասպելներին, և հավանական է նրանց վրա հնդեվրոպական ազդեցությունը: Ընդ որում, և՛ Թեշուբի ու նրա ուրարտական զուգորդ Թեյշեբայի և՛ Ուլլիկումմիի անունները, հնարավոր է, որ հնդեվրոպական փոխառություններ են, և, դատելով հնչյունաբանությունից, հավանական է նրանց հայկական ծագումը[50]: Հաշվի առնելով Վահագնի՝ Թեշուբի հետ համադրելի եռվորյակային ծագումը և նրա պաշտամունքի կենտրոն Տարոնի՝ Թեշուբի պաշտամունքի երկրի՝ հին Շուբրիայի տարածքում գտնվելը, կարելի է ասել, որ «Վահագնի երգի» աստծու՝

[46] **Güterbock** 1951. **Hoffner** 1990, 52–60. **Иванов** 1977, 125–140.

[47] **Haas** 1994, 83; **Абрамян** 2013, 19–20; **Պետրոսյան** 2019, 149, **Բոբոխյան** 2019:

[48] **Պետրոսյան** 2019, 149:

[49] **Պետրոսյան** 2015, 2019, **Մարտիրոսյան** 2015:

[50] **Petrosyan** 2012, 147–151.

Վահագնի հնդեվրոպական նախատիպի և Թեշուբի կերպարներն ուղղակի նույնական են (եղած տարբերությունները կարող են բացատրվել կերպարների ավանդման ժամանակագրական մեծ տարբերությամբ):

***Ազգածին ավանդությունը, «Վիպասանքը» և «Սասնա ծռերը»***

Վերի քննարկումից հետևում է, որ այս էպոսները ստեղծվել են մեկ միասնական նախատիպից և ունեն ընդհանուր ծագում: Նրանց հիմքում ընկած է ամպրոպի աստծու և նրա հակառակորդ վիշապի մենամարտի առասպելը, որը պատմականանալով և վիպականանալով տարբեր սյուժեների հիմք է դարձել: Բայց այդ ստեղծագործությունները ձևավորվել են ոչ միայն մեկ առասպելաբանական հիմքի, այլ մեկ ընդհանուր նախատիպի՝ սկզբնական էպիկական պատմության հիման վրա:

Ըստ ազգածին ավանդության, հայոց նախահայր Հայկը գալով Հայաստան հաստատվում է Վանա լճի հյուսիսարևմուտքում՝ Հարք գավառում: Հարքի հարավում է գտնվում Նեմրութ լեռը, որի վրա է, ըստ լեգենդների, թաղված Հայկի հակառակորդ Բելը[51]: Նեմրութի հրաբխային խառնարանը ամենամեծն է Արևելյան կիսագնդում[52], և այդ ահռելի հրաբուխը, անկասկած, հզոր ազդեցություն պետք է ունենար հին մարդկանց վրա: Ըստ այդմ, Բելի առասպելական նախատիպը կարող է պատկերացվել հրաբխային լեռան տակ բանտված հունական Տիփոնի տիպի մի հրեշ՝ վիշապ, որը միաձուլվել է Բաբելոնի մեծ աստված Բել-Մարդուկի կերպարին: Հայկի որդի Արամանյակը տեղափոխվում է Արարատյան դաշտ, որտեղ նրա որդի Արամայիսը կառուցում է առաջին մայրաքաղաք Արմավիրը: Սա հիշեցնում է հնդեվրոպական պատանեկան խմբերի՝ ցեղի ծայրամասային տարածքներում հաստատվելու ավանդույթը, իսկ Արամանյակ և Արամայիս անունների նմանությունն ակնարկում առասպելի նախնական տարբերակում նրանց երկվորյակներ լինելը[53]: Ազգածին ավանդությունը վերջանում է Հայաստանը բոլոր կողմերից ընդարձակող մեծ ռազմիկ Արամ նահապետի հաղթանակների և նրա որդի, «մեռնող և հառնող աստծու» հատկանիշներով օժտված Արա Գեղեցիկի պատմությամբ:

«Վիպասանքի» գործողությունները տեղի են ունենում ազգածին ավանդության նույն թատերաբեմ Արարատյան դաշտում՝ Մասիսի մերձակայքում:

---

[51] **Ղանալանյան** 1969, 72–73:

[52] **Հակոբյան** և այլք, 1991, 976, լեռան վերջին արտաժայթքումները տեղի են ունեցել 1352 և 1441 թվականներին:

[53] **Պետրոսյան, Տիրացյան** 2012, 171:

Տիգրանից սերունդներ հետո Հայաստանում իշխում է Երվանդ արքան, ամպրոպի աստծու հատկանիշներով օժտված մի հերոս, որն իր եղբայր Երվազի հետ հանդես է գալիս որպես երկվորյակային կերպար[54]: Երվանդը կառուցում է նոր մայրաքաղաք՝ Երվանդաշատը: Երվանդին հաջորդում է մեծ արքա Արտաշեսը և նրա որդի, «մեռնող և հառնող հերոսի» հատկանիշներով Արտավազդը:

Ըստ Սասունի էպոսի վաղնջական, XVI դարից հայտնի քրդական տարբերակի` Սասունի իշխողների տոհմի հիմնադիրներ Զիադդինը և Իզադդինը, այսինքն` Սանասարի և Բաղդասարի համապատասխան կերպարները, ծագում են Խլաթից՝ Նեմրութ լեռան ստորոտին գտնվող նշանավոր քաղաքից[55]: Էպոսի մեծ հերոսը Դավիթն է, Մսրա մելիքին հաղթողը, իսկ վերջին՝ «մեռնող և հառնող» հերոս Փոքր Միհերը փակվում է «Միհերի դռան» քարանձավում:

Տիգրանը և Սանասարը հանդես են գալիս որպես ամպրոպի աստծու (Վահագնի) վիպական փոխակերպումներ, երկու վեպերում էլ էական դեր են կատարում երկվորյակները (Երվանդ և Երվազ, Սանասար և Բաղդասար), որոնք նոր քաղաքների հիմք են դնում (Երվանդաշատ, Սասուն), և երկուսն էլ ավարտվում են ժայռի մեջ, քարանձավում փակված կերպարներով (Արտավազդ և Միհեր)[56]: Մասիսը կոչվել է Սեաւ լեառն և Մութն աշխարհ[57], իսկ Սանասարը, Բաղդասարի հետ, կառուցում է Սասունը Սև սարում[58]: Ըստ այդմ, և՛ «Վիպասանքի» և՛ «Սասնա ծռերի» գործողությունները կենտրոնացած են երկու «Սև սարերի» շուրջը, ինչը նորից ցույց է տալիս երկու վեպերի միասնական ծագումը[59]:

---

[54] **Հարությունյան** 2000, 105–111, 341–348:

[55] **Шараф-хан** 1967, 403–404, **Հարությունյան, Բարթիկյան** 1975, **Petrosyan** 2002, 73: Ընդհանրապես, «Սասնա ծռերում» այդ քաղաքը հանդես է գալիս որպես էպոսի հերոսների հակառակորդների կենտրոն. Մեծ Միհերը սպանում է քաղաքի թագավոր Սիպտակ դևին, Դավիթին սպանում է Խլաթի արքայադուստրը (կամ նրա դուստրը), իսկ Փոքր Միհերն ավերում է Խլաթը (հիշենք, որ Նեմրութի հրաբուխը հնում վիշապային կերպարի տեղայնացում պիտի լիներ):

[56] Հայկական էպոսների միասնական ծագման և ընդհանուր գծերի վերաբերյալ տե՛ս **Պետրոսյան** 1997, 2020, **Petrosyan** 2002:

[57] **Աբեղյան** Ա, 136, Է, 185:

[58] **Աբեղյան** Ա, 333:

[59] **Պետրոսյան** 2008, 171:

***Եզրակացություններ***

Այսպիսով, «Վիպասանքը» և «Սասնա ծռերը» կարող են դիտվել որպես Հայկի սկզբնական գավառից՝ Հարքից երկվորյակների հեռանալու և նոր վայրերում՝ Արարատյան դաշտում ու Սասունում հաստատվելու պատմություններ, երկուսն էլ ստեղծված միևնույն սխեմայով. 1. երկվորյակները հեռանում են իրենց նախնական օրրանից և հիմնադրում իրենց քաղաքը (նոր երկիրը) հեռավոր մի ծայրամասում, 2. նրանց հաջորդում է երկիրը հզորացնող մեծ հերոսը, 3. պատմությունն ավարտվում է «մեռնող և հառնող» հերոսով: Կարելի է նկատել, որ Հայկի՝ Հայաստանում հաստատվելու պատմությունը ևս ստեղծված է նույն սխեմայով՝ Հայկը գալիս է Հայաստան հեռվից (Բաբելոնից), հաստատվում Հարքում, ուր կառուցում է Հայկաշեն գյուղը, իսկ նրա և Բելի կռվի պատմությունը, ակնհայտորեն, ամպրոպային վիշապամարտի առասպելի վիպականացած դրսևորումներից մեկն է[60]: Հատկանշական է, որ բոլոր երեք դեպքերում էլ վեպի սկզբնավորումը կարող է դիտվել որպես հնդեվրոպական ցեղերի կողմից նոր տարածքներ յուրացնելու մեխանիզմի վիպական արտացոլում[61]:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Աբեղյան Մ.** 1966, 1975, Երկեր, հ. Ա, 572 էջ, հ. Է, 604 էջ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

**Ալիշան Ղ.** 1895, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 523 էջ:

**Աճառյան Հ.** 1962, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 384 էջ:

**Բոբոխյան Ա.** 2019, Կունտարա սրբավայրը և կունկունուցի քարը, Վիշապը հեքիաթի եվ իրականության սահմանին, Երևան, Հնագիտության եվ ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, էջ 450–461:

**Դալալյան Տ.** 2004. Օսական Վարխագի և հայկական Վահագնի մասին, Հայ ժողովրդական մշակույթ XII, Երևան, Մուղնի հրատարակչություն, էջ 37–39:

**Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.** 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 992 էջ:

---

[60] Հայկի և ամպրոպի աստծու կերպարային կապերի վերաբերյալ տե՛ս **Հմայակյան** 1992, **Պետրոսյան** 2013:

[61] Հմմտ. **Petrosyan** 2002, 71–77:

**Հարությունյան Ս.** 1987, Հնդեվրոպական տաղաչափության մի քանի առանձնահատկությունների դրսևորումները հայ հին բանաստեղծության և բանահյուսության մեջ, Պատմաբանասիրական հանդես, № 4, էջ 48–60:

**Հարությունյան Ս.** 2000. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, Վահե Սեթյան տպարան, 527 էջ:

**Հարությունյան Ս., Բարթիկյան Հ.** 1975, «Սասնա ծռերի» արձագանքները «Շարաֆ նամեում», ՊԲՀ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., № 2, էջ 90–104:

**Հմայակյան Ս.** 1990, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, ԳԱ հրատարակչություն, 192 էջ:

**Հմայակյան Ս.** 1992, Հայկ նահապետի մասին առասպելն ու Կիբշա քաղաքը Նիբուրի լեռներում, ՊԲՀ, ՀՀ ԳԱ հրատ., № 1, էջ 125–132:

**Հովհաննիսյան Հ.** 1990, Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը, Երևան, ԳԱ հրատ., 297 էջ:

**Ղանալանյան Ա.** 1969, Ավանդապատում. Երևան, Երևան, ԳԱ հրատ., ճկզ+ 532 էջ:

**Մարտիրոսյան Հ.** 2015, Լեռնային ակունքի ֆառնը, արշալույսի դիցուհին և գլխի ու մորթու զոհաձեսը վիշապակոթողների իմաստաբանական հենքում, Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 136–170:

**Պետրոսյան Ա.** 1997, Հայկական էպոսի հնագույն ակունքները. «Վան Արյան», Երևան, 96 էջ:

**Պետրոսյան Ա.** 2001, Թուխ մանուկ. հնագույն ակունքները. Թուխ մանուկ. Երևան, «Հայաստան», էջ 21–43:

**Պետրոսյան Ա.** 2004, Հայկական դիցարանի հնագույն ակունքները. Պատմաբանասիրական հանդես, 2, ՀՀ ԳԱ հրատ., էջ 205–233:

**Պետրոսյան Ա.** 2008, Տիգրան Մեծի առասպելաբանական կերպարը. Պատմաբանասիրական հանդես, ՀՀ ԳԱ հրատ., 2, էջ 156–177:

**Պետրոսյան Ա.** 2010, Հայկական վիշապամարտի երկու հակադիր կերպարներ, Պատմաբանասիրական հանդես, ՀՀ ԳԱ հրատ., 2010, 1, էջ 189–196:

**Պետրոսյան Ա.** 2013, Հայկ նահապետի կերպարը. հնդեվրոպական և հինարևելյան առնչություններ. Հայկազունիներ, Երևան, «Գիտություն», էջ 153–160:

**Պետրոսյան Ա.** 2018, Հայկական լեռնաշխարհի հնագույն դիցարանների մեծ աստվածները և նրանց վիպական ժառանգները. Բիայնիլի-Ուրարտու. աստվածներ, տաճարներ, պաշտամունք. Երևան, ՀԱԻ հատ., էջ 163–206:

**Պետրոսյան Ա.** 2019, Հին հնդեվրոպական օձ-վիշապը հայկական ավանդույթում եվ վիշապ քարակոթողները. Վիշապը հեքիաթի եվ իրականության սահմանին, Երևան, Հնագիտության եվ ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, էջ 146–156:

**Պետրոսյան Ա.** 2020, Հայկական էպոսի հնագույն ակունքները 2, Երևան, ՀԱԻ հրատ., 264 էջ:

**Պետրոսյան Ա., Տիրացյան Ն.** 2012, Հայոց առաջին մայրաքաղաք Արմավիրը պաշտամունքային կենտրոն, Պատմաբանասիրական հանդես, 1, ՀՀ ԳԱ հրատ., էջ 169–184:

**Պետրոսյան Հ.** 2013, Հայ ինքնության խորհրդանշանները և դրանց մերօրյա դրսևորումները. տապանակիր լեռը և կորուսյալ դրախտը, Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, Գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 123–138:

**Պետրոսյան Ս.** 1981, *«Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ.* Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 4:

**Պետրոսյան Ս.** 1997, Արեգակի առասպելաբանական ըմբռնման արտացոլումը Թումանյանի և Չարենցի երկերում. Չարենցյան ընթերցումներ Գյումրիում, Գյումրի, Բարձրագույն դպրոց, էջ 108–122:

**Ջահուկյան Գ.** 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, Ասողիկ, 820 էջ:

**ՄԾ Սասնա ծռեր,** հ. Ա, Երևան, Պետական հրատարակչություն, 1936, 1128 էջ:

**Սարգսյան Գ.** 1966, *Հելլենիստական* դարաշրջանի *Հայաստանը և Մովսես Խորենացին,* Երևան, ԳԱ հրատ., 258 էջ:

**Սուքիասյան Ա.** 1967, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 685 էջ:

**Օրբելի Հ.** 1961, Նախաբան, Սասունցի Դավիթ. հայկական ժողովրդական էպոս, Երևան, Հայպետհրատ, էջ III–LXI:

**Абрамян Л.А.** 2013, Прикованный герой: перекрывающиеся ландшафты и мифы, Comparative Studies on Regional Powers, 2, с. 5–25.

**Варданян Л.М.** 1981 Традиции мужских возрастных групп у армян (конец XIX начало XX в.). Հայ ազգագրություն և բանահյուսություն, № 12, с. 85–142.

**Васильков Я.В.** 2018, О ключевом термине армянского эпоса «Сасунские безумцы» в связи с индо-армянскими эпическими параллелями, Индоевропейское языкознание и классическая филология – XXII, СПб., «Наука», с. 292–301.

**Васильков Я.В.** 2019, Армянский эпос о неистовых сасунцах и индийская «Махабхарата»: сходство этнографического субстрата., Археология, этнография и антропология Евразии, 2019, с. 140–147.

**Гамкрелидзе Т.В., Иванов В.В.** 1984, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, изд-во Тбилисского университета, 1330 с.

**Иванов В.В.** 1969, Использование для этимологических исследований однокоренных слов в поэзии на древних индоевропейских языках, Этимология 1967, с. 40–56.

**Иванов В.В.** (пер.) 1977, Луна, упавшая с неба. Древняя литература Малой Азии, Москва, «Художественная литература», 318 с.

**Иванов В.В.** 1983, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну, Պատմա-բանասիրական հանդես № 4, с. 22–43.

**Иванов В.В.** 1986, О мифопоэтических основах латышских дайн. Балто-славянские исследования, 1984, с. 3–28.

**Иванов В.В.** 1999, Теория анаграмм в индоевропейском стихе, Избранные труды по семиотике и истории культуры, т. 1, М., Языки русской *культуры, с.* 617–627.

**Иванов В.В., Топоров В.Н.** 1974, Исследования в области славянских древностей, Москва, «Наука», 340 с.

**Петросян А.Е.** 1987, Отражение индоевропейского корня *u̯el- в армянской мифологии. Вестник общественных наук АН Арм. ССР, 1, с. 56–70.

**Саркисян Г.Х.** 1966, Обожествление и культ царей в древней Армении, Вестник древней истории, № 2, с. 3–26.

**Соссюр Ф.** де 1977, Труды по языкознанию, Москва, «Прогресс», 696 с.

**Топоров В.В.** 1977, Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции, Պատմա-բանասիրական հանդես, 3, с. 88–106.

**Шараф-хан** 1967, Шараф-Наме (пер. Васильева, Е. И.), Москва, «Наука», 1026 с.

**Эмин Н.О.** 1873, Вахагн-Вишапаках армянской мифологии есть Индра-Vritrahan Ригведы, СПб., тип. Имп. Акад. наук. 17 с.

**Daryaee T.** 2020. The Serpantine Man in Iranian Myth, F. Shervin (ed.), Zaraθuštrōtəma: Zoroastrian and Iranian Studies in Honour of Philip G. Kreyenbroek (Ancient Iran Series 10). Irvine: Jordan Center for Persian Studies, 107-113.

**Dumézil G.** 1994. Le roman des jumeaux. Paris: Gallimard, 337 p.

**EIr** Encyclopaedia Iranica, 1985-

**Gelb I.J.** 1944, Hurrians and Subareans. Chicago, Chicago University Press, XV+128 p.

**Gulbenkian R., Berberian H.** 1971, La legende de David de Sasoun d'après deux voyageurs Portugais du XVI[e] siècle. Revue des études arméniennes t. VIII, 175–188.

**Güterbock H.G.** 1951, The Song of Ullikummi: Revised Text of the Hittite Version of a Hurrian myth, Journal of Cuneiform Studies, Vol. 5, No. 4, 135–161.

**Haas V.** 1994, Geschichte der hettitischen Religion. Leiden, New York, Köln, 1031+137 Abbildungen.

**Hoffner H.A.** 1990, Hittite Myths, Atlanta, Georgia, Society of Biblical Literature, 92 p.

**Ivanov V.V.** 2011, A Probable Structure of a Protoform of the Ancient Armenian Song of Vahagn, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, N 6/1, 7–23.

**Kershaw K.** 2000. The One-eyed God. Odin and the (Indo-)Germanic Männerbunde. JIES Monograph 36. Washington D.C., 306 p.

**Le Strange G.** 1905, The Lands of Eastern Caliphate: Mesopotamia, Persia, and Central Asia from the Moslem Conquest to the Time of Timur, New York, Cosimo Classics, 572 p.

**Lincoln B.** 1991, Death, War, and Sacrifice. Chicago, London, Chicago University Press, 289 p.

**Mallory J.P.** and **Adams D.Q.** (eds) 1997, Encyclopedia of Indo-European Culture, London and Chicago: Fitzroy Dearborn Publishers, 829 p.

**Petrosyan A.Y.** 2002, The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic, Journal of Indo-European Studies Monograph No 42. Washington DC, Institute for the Study of Man, 236 p.

**Petrosyan A.Y.** 2011, Armenian Traditional Black Youths: the Earliest Sources. Journal of Indo-European Studies. Vol. 39, 3 & 4, 342–354.

**Petrosyan A.Y.** 2012, The Cities of Kumme, Kummanna and their God Teššub / Teišeba. Archaeology and Language: Indo-European Studies Presented to James P. Mallory. Journal of Indo-European Studies Monograph 60, 141–155.

**Petrosyan A.Y.** 2016, Indo-European *wel- in Armenian mythology. Journal of Indo-European Studies, 1–2, 129–146.

**Petrosyan A.Y.** 2016a, Biblical Mt. Ararat: Two Identifications. Comparative Mythology, 2016, Vol. 2/1, 68–80.

**Petrosyan A.Y.** 2018, From Armenian Demonology: the K'ajs, Journal of Indo-European Studies 46, 206–218.

**Schmitt R.** Iranische Namenschichten und Namentypen bei altarmenischen Historikern, Beiträge zur namenforschung. 1984. № 19, 317–331.

**Schwartz M.** 2012, Transformations of the Indo-Iranian Snake-man: Myth, Language, Ethnoarcheology, and Iranian Identity, Volume 45/2, 275–279.

**Starobinski J.** 1971, Les mots sous les mots. Les anagrammes de Ferdinand de Saussure, Paris, Gallimard, 168 p.

**West M.L.** 2007, Indo-European Poetry and Myth, Oxford, *Oxford* University Press, 525 p.

# «ПЕСНЬ ВАХАГНА» И АРМЯНСКИЙ ЭПОС
## (НОВАЯ ТОЧКА ЗРЕНИЯ О ПРОИСХОЖДЕНИИ И ФОРМИРОВАНИИ АРМЯНСКОГО ЭПОСА)

ПЕТРОСЯН А.

### Резюме

***Ключевые слова:*** индоевропейская мифология. армянская мифология, «Песнь Вахагна», армянский эпос, народные легенды, «Випасанк», «Сасунские безумцы».

Многократные повторы звукосочетания erk в древнеармянском гимне о рождении бога грозы и войны Вахагна рассматриваются в качестве анаграммы слова erku «два» с аллюзией на двойственность. А в выражении cov cirani «пурпурное море» можно увидеть анаграмму имени Covinar, матери эпических близнецов Санасара и Багдасара, первых героев эпоса «Сасунские безумцы» (мифологической персонификации пурпурного небесного моря). Образ Санасара, старшего близнеца, основоположника рода героев, восходит к Вахагну. Та же картина рождения мифологических близнецов повторяется и в эпосе «Випасанк». Подробный анализ указывает на то, что все древние народные эпические произведения армян (этногоническое сказание, «Випасанк» и «Сасунские безумцы») восходят к одному источнику – мифу о боге грозы и его последователях – членах молодежных воинских братств.

# “THE SONG OF VAHAGN” AND THE ARMENIAN EPIC
## (A NEW VIEWPOINT ON THE ORIGIN AND FORMATION OF THE ARMENIAN EPIC)

PETROSYAN A.

### Summary

***Keywords:*** Indo-European mythology, Armenian mythology, “The Song of Vahagn”, the Armenian epic, national legends, “Vipasank”(Novels), “Daredevils of Sassoun”.

Multiple recurrences of the sound combination *erk-* in the ancient Armenian hymn on the birth of Vahagn, the god of thunder and war, can be considered an anagram of the word *erku* (two) with an allusion to twins. Moreover, in the expression *cov cirani* (purple sea) one can see an anagram of Covinar, the name of the mother of the epic twins Sanasar and Baghdasar, first heroes of the epic "Daredevils of Sassoun". In this context it becomes obvious that the image of Sanasar, the elder of the twins, founder of the dynasty of heroes, directly goes back to Vahagn. The same picture of the birth of mythological twins occurs in the ancient epic “Vipasank”. A detailed analysis shows that the folk epics of ancient Armenia – the ethnogonic tradition, “Vipasank” and “Daredevils of Sassoun” – have derived from one source, the myth of the thunder god and his followers, members of the young warriors’ fraternity.

**ESTER KHEMCHYAN***

*PhD of Philology*

*Institute of Archaeology and Ethnography NAS RA*

ekhemchyan@yandex.ru

DOI: 10.52853/18294073-2021.3.27-168

# ARMENIAN NARRATIVES OF THE TWO-HORNED ALEXANDER AND THEIR RITUAL-LEGENDARY SOURCES

***Keywords:*** horned king, barber, motif, story, divine origin, myth, belief.

### *Introduction*

There are often realistic tales and stories in the Armenian epic folklore built around the horned king motif. According to the international classification of the tale types by Antti Aarne and Stith Thompson, the horned Alexander narratives correspond to the ATU782 motives (F511.2.2 – Person with ass's (horse's) ears, N465 – Secret physical peculiarity discovered by barber, D1316.5 – Magic speaking reed (tree) betrays secret)[1].

Usually the horned king motif is associated with the name of Alexander the Great. That is why he is called the two-horned Alexander or, in the Oriental way, Iskandar Zulkarnain[2].

### *Horned-king Motif*

The two-horned Alexander motif has the following narrative development in the Armenian folklore: Alexander the Great[3] (King Iskandar[4], Iskandar Boghar[5],

---

* *Հոդվածը ներկայացվել է 02.09.21, գրախոսվել է 20.09.21, ընդունվել է տպագրության 19.11.21:*

[1] **Uther** 2011, 441.

[2] FAV:9715,01–9715,01; **Ղազիյան** N 2, 87; FAVI: 1706,01–1706,01; FFVIII: 2571,01–2585,00; **Կարապետյան,** 9–10; **Ղազարյան,** 28; ՀԱԲ h. 20, 1999, 143; КС 1989, 296; КЧ 1984, 54–55; СПИ 1990, 252; ГНС 195: 331; ТС 1961, 400:

[3] FAV:9715,01–9715,01; FAVI: 1706,01–1706,01; FFVIII:2571,01–2585,00.

[4] **Ղազարյան,** 28:

[5] **Կարապետյան,** 9–10:

Iskandar Agha[6], Jilghar Iskandar[7]) is presented in Armenian narratives differently. In some variations he has one horn on his head, whereas in others his image is depicted with two horns. There is no explanation in the narratives why the king is horned. He hides his horn (or horns) in his hair and orders to decapitate the barber (in some variants – barber, shave-man, dallak or parikmakher- hairdresser in Russian), the only person who is aware of the secret. The last barber (in variations – a 60-year old man or a young and handsome boy or a middle-aged man) asks the king to spare his life, promising to keep the secret. The king yields to the barber's request, showing either respect to his old age, or regretting the young age and comeliness of the barber, or taking pity towards his family members. However, keeping the secret makes the barber suffer, his belly swells, ready to blow up. The barber addresses various doctors, but in vain. In the end, on the advice of a doctor or a wise man, the barber understands that he should trust the secret to a pit (a well) in a deep forest, in a deserted place in the countryside. The barber tells the secret: "there is a horn on the head of Iskandar"[8], "Alexander the Great has a horn"[9], "Iskandar Boghar has a horn"[10], "The king Iskandar has a horn"[11], "Jilghar Iskandar has a horn"[12], and a reed comes out from the pit, and the shepherd that is passing by, cuts the reed, makes a reedpipe from it and plays. The reedpipe plays just one melody "Alexander the Great has a horn". In one of the variations, a flower comes out from the pit that resembles "the head of Iskandar Agha with a couple of horns on it"[13]. Thus, the secret is revealed. In some variations, the king is defamed and mocked as an invalid person, in others the king punishes the perjurer, while in one of them a moral is made: "you cannot entrust your secret even to the ground"[14].

In the Armenian epic folklore sometimes the motif of the two-horned king is attributed to Shah Abbas[15] or some unnamed horned king[16], however those are

---

[6] **Ղազիյան,** 87:
[7] ՀԱԲ, հ. 20, 1999, 143:
[8] FAV:9715,01–9715,01:
[9] FFVIII: 2571,01–2585,00:
[10] **Կարապետյան,** 9:
[11] **Ղազարյան,** 28:
[12] ՀԱԲ, հ. 20, 1999, 143:
[13] Ղազիյան, 87:
[14] FFVIII: 2571,01–2585,00:
[15] FFIV:1743,01–1744,00; FEI: 7215–7227:

exceptions or casual expressions. Shah Abbas, even being a famous folklore character, and the Shah Abbas narratives being widely spread, however he could not act as a horned king since the folkloric Shah Abbas, like the folkloric Alexander has the specific motives attributed to him, and the above-mentioned motif is not among them.

It is common to consider the origin and the basis of the horned king motif in the legend of the king Midas who had ass's ears[17], that has originated and been formed in Asia Minor and Ancient Greece[18]. The legend of Midas, spreading the west and the east, has been transformed, acquiring a new quality. In the west the legend kept the motif of the king with ass's or goat's ears, while spreading towards the east the two-horned king's motif is becoming more dominant in the variations of the legend, where the king is named and called Iskander Zulkarnain. That means that the horned king motif was attached to the character of Alexander the Great but in the oriental oral tradition Alexander was two-horned and had the nickname Zulkarnain. Moreover, the Arabic (Syrian) legend about two-horned Alexander was also included in the Koran[19], the holy book of the Muslims, and Iskander was depicted as a legendary Muslim character[20]. The interpreters of the Koran gave a large and important place to Alexander the Great as he was (and still is) considered to be one of the prophets of Muhammad[21].

First of all, the stories left by biographers and the contemporaries serve as a basis for the two-horned nickname of Alexander[22]. According to them, he was the son of the Egyptian god Amon, and this confirms the divine origin of Alexander, for it is known, that the pharaohs were born by the Queen Mother and Amon, who was presented to the Queen as a pharaoh-husband[23]. In the Armenian version of "The history of Alexander the Great" by Pseudo-Callisthenes, the biographer of Alexander, this fact is represented in the following way. Negdanebos, a runaway from Egypt, is foretelling for Olympiada that god Amon of

[16] FFXI: 7823–7828; **Մարգարյան:** 151–153:

[17] **Хахановъ** 1902, N 1; **Костюхин** 1972, 106; **Бойназаров** 1991, 28; **Бойназаров** 1990, 145.

[18] МНМ II 1988, 149; **Կուն** 1979, 97:

[19] **Коран** 1986,249, 18:82; **Бертельс** 1948, 14.

[20] МНМ I 1987, 472:

[21] **Бертельс** 1948, 16.

[22] **Պլուտարքոս** 1987, 45–46, **Սիմոնյան** 1989; **Ալեքսանդր Մակեդոնացի** 1987:

[23] МНМ I 1987, 70–71; **Ֆրեզեր** 1989, 173:

Lybians "with white hair and horn on the head as a ram"[24] should sleep with the Queen, after which she would be impregnated with a son. According to this interpretation, Alexander inherits ram horns from Amon, the presence of which later gives him the nickname of Two-Horned (Zulkarnain). The meaning of Alexander's nickname is interpreted in different ways by different authors. According to Alisher Nava'i, (a 15th- century Uzbek poet), Iskander lived for 160 years and his nickname Zulkarnain (Karnain) means "Iskandar who lived two centuries" or "Two-horned Iskandar who lived two centuries". The reason for such interpretation is the etymology of the word "karn" that has two meanings in Farsi: 1) century, equal to the century and 2) horn, in double plural – karnain[25].

### *Armenian narrative of Alexander*

The formation of the Armenian narrative on Alexander in Armenian folklore is based on the plots and stories about Alexander, that penetrated from Asia Minor and Mesopotamia, and particularly on the Armenian translation of the History of the Pseudo-Callisthenes. In the Armenian narrative, the interpretation of Alexander's divine origin has led to the fact that Alexander was the descendent of the God-Oracle transformed into a dragon[26] that was not only a response to the "History of Alexander" by Pseudo-Callisthenes, but also the aftershock of Asia Minor and Mesopotamian ancient oral tradition that found a fertile ground in the Armenian environment. According to that interpretation, Alexander should have gained divine features (i.e. horns and charming abilities), and the hypothesis of his divine origin, brought forward by his biographers even during his lifetime and passing throughout history by the system of traditional beliefs of each conquered nation as well as gaining new features and shades, should have taken a firm place in the oriental folklore tradition.

Alexander himself consistently contributed to his divinization, and this was being done to gain the sympathy of the conquered and subjugated nations. "Going from Hyrkania to Parthia and resting there, Alexander dressed in barbaric clothes for the first time. He intended to mimic the local morals as he understood well enough how important it was to display his positive attitude towards

[24] **Սիմոնյան** 1989, 75:
E) **Ան**/-ān – **Տիգրան (Tigran) <** tigr (arrow), **Միհրան (Mihran)** < Mihr (mythic name) **Վահան (Vahan)** < vrha (shield), **Վարդան (Vardan)** < Iranian Vardān (291 evidences) < the shortened form (Vard) of Old Persian Arta-vardiya (one who stimulates the growth of the sacred faith), **Տիրան (Tiran)** <Tīr (name of god).

F) **Կէն**=իկ+էն/ - kēn **Բաբկէն (Babken)** from the Iranian Բաբ+իկ (Bab +ik) + Iranian hypocoristic affix ēn.

There is a personal name, formed by the negative prefix ***Ան****/-an as in case of* ***Անահիտ (Anahit)*** which signifies "immaculate, spotless". The name consists of two components – an + āhita (vicious, dirty), etc.

Certain roots of words having been incorporated into Armenian from Iranian undergo some semantic changes. The loan word roots of independent functioning **անոյշ (-anoysh), դուխտ (-dukht)** and **ուհի** (-**uhi)** turned into suffixes through the process of semantic narrowing and now serve the creation of only female names.

A) **Անոյշ (Anoysh)** < anōŝ (immortal), later acquired the meaning "sweet" and is now used in complex structures, including patronymics as in the

---

[14] **Ջահուկյան** 1987, 232:

[15] **Հովհաննիսյան** 1990, 147:

female names **Արշանոյշ (Arshanoysh), Խոսրովանոյշ (Khosrovanoysh), Վարդանոյշ (Vardanoysh)**. In fact, these are not personal names proper, but a unique way of addressing Armenian girls and women: Arshak's daughter, Khosrov's daughter, Vardan's daughter, etc.

B) **Դուխտ** < duxt (daughter, girl) as in **Գորիդուխտ (Goridukht)** < *Gōr* (wild donkey), **Սանդուխտ (Sandukht), Վարազդուխտ (Varazdukht), Վարդանդուխտ (Vardandukht)**, **Զարմանդուխտ (Zarmandukht)** < zarmān (an old man), **Զրուանդուխտ (Zruandukht) <** Pahlavi Zurvān, in Avestan < zrvan (time), **Խոսրովիդուխտ (Khosrovidukht) <** in Pahlavi xusrav (one with a good reputation), etc.

C) **-Ուհի/ուրհի (uhi/urhi) (**daughter, girl)[16] **Զարուհի (Zaruhi)** < zar (gold), **Խոսրովուհի (Khosrovuhi), Տիգրանուհի (Tigranuhi), Համազասպուհի (Hamazaspuhi).**

Names, consisting of two stems are also frequently used, and their generative stems, according to their part of speech belonging, are nouns. The second components of some names in this group, are not etymologized. The meanings of the name components in the donor language are introduced as needed. They mainly consist of roots with derivational value such as *ասպ* < āspa (horse), *արտա* < arta (law, justice), *-դատ / -րատ* < dāt (give - in imperative, given, created) which are Iranian components for creating names. The following personal names are formed with the aforementioned components: **Արամազդ (Aramazd)** < Old Persian Ahura-mazdāh = aahura (master, lord) + mazdāh (supreme wisdom), **Արտաւան (Artavan)** < Old Persian Artabānu (exuding justice), **Արտաշէս (Artashes)** < Arsacid Pahlavi Artaŝas < Old Persian Artaxšassa (one who rules with justice), **Արտաշիր (Artashir) <** Sassanid Pahlavi Ardašīr /Ardšīr = ard (fury, rage) + šīr (a lion = an enraged lion), **Արտաւազդ (Artavazd)** < Old Persian Artavazdah (one whose fairness is unflinching) (evidenced 36 times), **Անուշաւան (Anushavan)** < Anaoŝarvān < Avestan Anaoŝō+urvān (immortal soul), **Բագարատ (Bagarat)** < Old Persian Bagadāta = baga (god) + dāta (gave) = "given by God", **Բակուր (Bakur)** < baga (god) + pūr (son) = "God's son", **Դրաստամատ (Drastamat)** < Pahlavi durust (right) + mat (thought) = "upright", **Խոսրով (Khosrov)** < Xusrav < hu/su (kind) + sru (news) = "one who has a good reputation",

---

[16] **Աճառյան** 1957, 305:

**Համազասպ (Hamazasp)** < Old Persian Hamāzāspa < hamāza (group, multitude) + āspa = "one who owns a multitude of horses", **Հրահատ (Hrahat)** < Pahlavi F/hrahāt < Old Persian frabāta (wise, clever), **Միհրդատ (Mihrdat)** < Pahlavi Mihrdāt = Mihr + dāt (given by God Mihr), **Մեհրուժան/Մերուժան (Mehruzhan/ Meruzhan)** < Mitrūčan < Mihrōjān (powerful thanks to God Mihr), **Վարազդատ (Varazdat) <** Varaz (wild boar) + dāt (created by a wild boar), **Տրդատ (Trdat)** < Old Persian Tīridāta =Tir + dāt = "given by God Tir".

Each name has its history, biography, it encompasses a certain geographical region and belongs to this or that nation. It can be borrowed by other languages, following the fixed phonetic rules of the donor language[17]. The Armenian names of Iranian origin underwent partial phonetic changes in the Parthian period, i.e. **դ (d)** changed into տ **(t) – Արտաշիր (Artashir)** < Ardšir, **գ**(g) into **կ (k)** as in **Բակուր (Bakur)** < baga+pūr, **լ (l)** into **ղ (gh)** as in **Վաղարշ** < Pahlavi Valaxš**, h (h)** changed into **ս (s)** as in **Ներսէս (Nerses)** < Nerseh. In the case of the sound combination **խշ (khsh)** a metathesis took place, as in **Աշխէն (Ashkhen)** < Pahlavi axŝēn. Reduction of **ա (a)** is observed in the following names **Անահիտ (Anahit)** < Anāhitā, **Արտաւազդ (Artavazd)** < Artavazdah, **Արշակ (Arshak)** < Aršaka, **Արամազդ (Aramazd)** < **Ahura-mazdāh, Բագարատ/Բագրատ (Bagarat, Bagrat)** <Baga+dāta, **Համազասպ (Hamazasp)** < Hamāzāspa. It should also be mentioned that in Old and Middle Iranian languages the pronunciation of the plosives and semi-fricatives was not characterized by aspiration. Of considerable interest are H. Hübschmann's observations, concerning the phonetic features and pronunciation of the names of Sassanid and Pahlavi origin. Studying the Old Armenian names borrowed from Iranian and considering their phonetic features, he made an attempt to define the period when they were incorporated into the Armenian language. According to H. Hübschmann, one and the same name when borrowed in the Parthian then in the Sassanid eras could have consisted of different phonemes. To substantiate his view, H. Hübschmann introduced various phonemic patterns of one and the same name borrowed in the Parthian and the Sassanid eras. For example **Արամազդ (Aramazd)** in Old Persian is Ahura-mazdāh, in Arsacid

[17] **Никонов, Сыперанская** 1970, 9.

Pahlavi – **Ohrmazd,** in Sassanid Pahlavi – Hormizd /**Որմիզդ**, while the Arsacid name **Varahrān** sounds Vahram (**Վահրամ)** in its Sassanid version[18].

***Conclusion***

Thus, the borrowing of personal names from Iranian is conditioned by such extralinguistic factors as political, cultural, historical, and religious. These names are characterized by certain phonetic features and word-formative types, that can be found in the Armenian language. Our study of the semantic-structural patterns of these names, has given a chance to reveal the preference of certain names which is connected with the worldview of the society. The principles of name-formation have also been observed. It has become evident that there are limited ways of combining the stems of personal names with affixes. Moreover, some affixes and roots of derivational value have just become name-forming morphemes.

**BIBLIOGRAPHY**

**Աճառյան Հր.** 1940, Հայոց լեզվի պատմություն, Երևան, I մաս, ԵՊՀ հրատ., 355 էջ:

**Աճառյան Հր.** 1942, Հայոց անձնանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., հ Ա, 633 էջ:

**Աճառյան Հր.** 1944, Հայոց անձնանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., հ Բ, 682 էջ:

**Աճառյան Հր.** 1946, Հայոց անձնանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., հ Գ, 740 էջ:

**Աճառյան Հր.** 1948, Հայոց անձնանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., հ Դ, 683 էջ:

**Աճառյան Հր.** 1957, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., հ III, 1011 էջ:

**Աճառյան Հր.** 1962, Հայոց անձնանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., հ Ե, 382 էջ:

**Աճառյան Հր.** 2004, Հայոց պատմություն հյուսված ընդհանուր պատմության հետ, Երևան, ԵՊՀ հրատ., 483 էջ:

**Բարսեղյան Հ.** 1964, Հատուկ անուն, Երևան, Հայպետուսմանկհրատ,129 էջ:

**Լեո** 1966, Երկերի ժողովածու, Առաջին հատոր, Երևան, «Հայաստան» հրատ., 567 էջ:

**Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.** 1986, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1040 էջ:

---

[18] Հյուբշման 2003, 13-14:

Հայ ժողովրդի պատմություն, Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում 1971, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 991 էջ:

**Հյուբշման Հ.** 2003, Հայերենի քերականություն, Երևան, 578 էջ:

**Հյուբշման Հ.** 2004, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 520 էջ:

**Հովհաննիսյան Հ.** 1990, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 302 էջ:

**Մեյե Ա.** 1978, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, ԵՊՀ հրատ., 821 էջ:

**Ջահուկյան Գ.** 1987, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 747 էջ:

**Никонов В.А., Суперанская А.В.** 1970, Антропонимика, Москва, «Наука», 359 с.

# ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՎԱԾ ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

## Ամփոփում

***Բանալի բառեր***՝ փոխառություն, պահլավական անձնանուններ, հին պարսկերեն, միջին պարսկերեն, վերջածանցավոր կազմություններ, անձնանվանահիմքեր, անձնանվանակերտ ածանցներ:

Իրանական ծագման հայոց անձնանունները արժեքավոր փաստեր են հայ-իրանական հարաբերությունները լուսաբանելու տեսակետից: Այս անունների զգալի մասը փոխառվել է Արշակունիների թագավորության ժամանակներից: Դրանց մուտքը հայերեն՝ պարսիկների քաղաքական գերիշխանության և պարսկական մշակույթի ուժեղ ազդեցության արդյունք են:

Հին և միջին իրանական լեզուներից փոխառված անձնանունները հիմնականում աստվածանուններ, կենդանանուններ, մարդ, մարդկային դրական հատկանիշներ ցույց տվող անուններ են: Ըստ կազմության, դրանք բաժանվում են պարզ, ածանցավոր և բարդ կաղապարատիպերի, որոնցից գերակշռում են վերջածանցավոր և երկհիմք կառույցները: Պարզ կամ միահիմք անունները փոքր կշիռ ունեն: Գրավոր աղբյուրներով մեզ հասած այս անունները թագավորների, թագուհիների, իշխանական և նախարարական տների զարմերի և այլ նշանավոր անձանց անուններ են, որոնց մի մասը ոչ միայն հայկական ազգանունների՝ *Արշակյան, Բագրատյան, Տիգրանյան,* այլև տե-

ղանունների ծնունդ են տվել՝ *Արշակաւան, Վաղարշապատ, Տիգրանակերտ* և այլն:

## СЕМАНТИКО-КОНСТРУКТИВНЫЕ ТИПЫ АРМЯНСКИХ СОБСТВЕННЫХ ИМЕН, ЗАИМСТВОВАННЫХ ИЗ ДРЕВНЕ – И СРЕДНЕИРАНСКОГО ЯЗЫКА

ХАЧАТРЯН А.

### Резюме

**Ключевые слова:** заимствования, древнеперсидский, среднеперсидский, словообразовательные модули, суффиксы, антропонимические основы, антропонимические суффиксы.

Армянские собственные имена, имеющие иранское происхождение, являются ценными фактами в плане освещения армяно-иранских отношений. Большинство этих имен собственных было заимствовано в период правления Аршакуни. Их проникновение в лексику армянского языка явилось результатом политического господства персов и сильнейшего влияния персидской культуры. Заимствованные из древне – и среднеперсидского имена собственные в основном обозначают богов, животных, характеризуют положительные человеческие качества. По своему составу эти имена делятся на простые, суффиксальные и сложные модули, в которых превалируют суффиксальные и двухкорневые языковые конструкции, простых, или однокорневых имен гораздо меньше. Имена, дошедшие до нас благодаря письменным источникам, являются именами царей, цариц, представителей княжеских и нахарарских домов и иных известных лиц. Часть этих имен способствовала образованию армянских фамилий – Аршакян, Багратян, Тигранян и т.д., а также топонимов – Аршакаван, Вагаршапат, Тигранакерт и др.

**ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ***
*Բանասիրական գիտությունների թեկնածու*
*ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ*
karine.arakelyan.2016@mail.ru
DOI: 10.52853/18294073-2021.3.27-198

# ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԵՐԳԻԾԱՎԵՊԵՐՈՒՄ

***Բանալի բառեր՝*** երգիծանք, վեպ, լեզու, խոսք, առած, ասացվածք, ոճ:

## *Ներածություն*

Առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, դարձվածները յուրաքանչյուր լեզվի անկապտելի հարստությունն են: Սրանք հիմնականում ունեն ժողովրդական ծագում, խտացնում են ժողովրդի դարավոր փորձը, իմաստությունն ու կենսափիլիսոփայությունը և հաճախ հնչում են իբրև պատվիրաններ: Սրանց միջոցով հնարավոր է թափանցել ժողովրդի, կարելի է ասել, հոգու խորքը, այսինքն հասկանալ նրա հոգեկերտվածքը, պատմությունը, մտածողությունը, քաղաքակրթական աստիճանը և այլն: Նշվածներից զատ սրանք լավագույնս արտահայտում են ազգային լեզվամտածողությունը, և յուրաքանչյուր լեզվի ուսումնասիրություն խիստ թերի է առանց այս միավորների ուսումնասիրության: Այս առնչությամբ ռուս մեծ բանաստեղծ Ա. Պուշկինը գրել է. «Հինավուրց երգերի, հեքիաթների, առածների ուսումնասիրությունը անհրաժեշտ է ռուս լեզվի հատկությունների կատարյալ իմացության համար... Ի՜նչ ոսկի են ռուսական առածները... Ի՜նչ հարստություն, որպիսի բանականություն, ի՜նչ իմաստ կա մեր ամեն մի ասացվածքի մեջ»[1]:

Առած-ասացվածքներն իրենց ուրույն դերն ու կշիռն ունեն գեղարվեստական խոսքում, և ստեղծագործող անհատները՝ հատկապես արձակագիրները, հաճախ են դիմել սրանց օգնությանը՝ խոսքը հարստացնելու և ոճավորելու

---

* *Հոդվածը ներկայացվել է 09.02.21, գրախոսվել է 09.02.21, ընդունվել է տպագրության 19.11.21:*

[1] Տե՛ս **Андреев** 1938, 30–32.

նպատակով: Դա հատկապես ցայտուն է տարբեր գրական երկերի հերոսների պարագայում, և խոսքը շատ է մոտեցնում ժողովրդականին: Հիշենք մի հատված Հովհաննես Թումանյանի հանրահայտ պոեմից.

***Եկան իրարու, խոսք խոսքի հասավ,***
***Չափին մի քանի կոշտ խոսքեր ասավ.***
***Դե, մարդիկ երբ որ կռիվ են անում***
***Մեջտեղ փլավ չեն իրար բաժանում[2]:***

Երբեմն գրողները առածը կամ ասացվածքը դարձրել են ստեղծագործության վերնագիր, ինչպես Գրիգոր Զոհրապը, որն իր նորավեպերից մեկն անվանել է «Առջի սեր, առջի բարի»:

Առած-ասացվածքները մեծ կիրառություն ունեն նաև երգիծաբանական գրականության մեջ: Սրանք ունեն այլաբանական նշանակություն և, պայմանավորված այդ հանգամանքով, կարող են խոսքին բավական մեծ չափով պատկերավորություն հաղորդել: Քանի որ այլաբանությունը պահանջում է վերծանում, այդ վերծանումը կարող է լինել նաև երգիծական բնույթի՝ հումորային, հեգնական և այլն՝ կախված հանգամանքներից: Հիշենք մի դրվագ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Թատրոնից»: Թատրոն անունով հայկական թերթը տպագրում է տեղեկություն՝ տեղադրված սև շրջանակի մեջ, որով «բարեխնամ» կառավարության ուշադրությունն է հրավիրում Մուշի բնակչության անմխիթար վիճակի վրա, թե ինչպես է հարստահարվում, կեղեքվում, հաճախ սպանվում և ունեզրկվում տեղի հայությունը: Երևույթներ, որոնք միանգամայն «սովորական» էին դարձել սուլթանական Թուրքիայում, սակայն որոնց մասին բարձրաձայնել չվարանեց մեծ երգիծաբանը:

Պատասխանը չի ուշանում: Տպագրական տեսչության կողմից ստացվում է ծանուցում, համաձայն որի «Թատրոնի» գործունեությունը դադարեցվում է մեկ ամիս պայմանաժամկետով: Իբրև «պատճառ», ի միջի այլոց նշվում է թերթի տպագրած նյութի սև շրջանակը, ինչպես նաև «հերյուրանքները» և «չափազանցությունները»: Կատարվածից «խրատված»՝ «Թատրոնի» խմբագիրը հրահանգ է ուղարկում տպարան, «որ թերթերնուս մէջ որչափ գիծ կայ նէ՝ ամէնն ալ դուրս վանէ... Ասոր ի պատասխան՝ տպարանապետը հարցուցած էր, թէ գիծն հանէ, տեղը ի՞նչ դնէ: Գիծերն հանէ՛, տեղը ինչ կուզես նէ՝ ան դի՛ր, ըսինք իրեն»[3]:

---

[2] **Թումանյան** 1958, 39:

[3] **Պարոնյան** 1954, 93:

Այս զավեշտական իրավիճակը, որը մարդկային ուղեղում տեղավորվող որևէ բացատրություն չունի, Պարոնյանը բացատրում է առածի օգնությամբ՝ գրելով. «կեռզ կեռտյոյինտէն գորգար, կըսէ տաճկական առածը»[4], որ նշանակում է՝ աչքը տեսածից է վախենում:

Առածի միջոցով հեղինակը խտացնում է ասելիքը, ոճավորում է խոսքը՝ դրան հաղորդելով սարկաստիկ և, ինչու չէ, խորը ողբերգական երանգ, իսկ այս ամենին լրացուցիչ թափ է հաղորդում թուրքերենով մեջբերելը, քանի որ այս այլանդակության պատասխանատուն հենց թուրքն է:

Նմանատիպ մի դեպքի հանդիպում ենք Խրիմյան Հայրիկի՝ Նիկոլայ կայսերն ուղղած նամակում՝ գրված հայ ժողովրդի համար չափազանց դրամատիկ մի ժամանակաշրջանում: Ստացվել էր ցարական հրամանը Հայ Առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման մասին: Խրիմյան Հայրիկը ընդդիմանում է այս հրամանին: Հայրապետին սատար է կանգնում ողջ ժողովուրդը: 1903թ. Խրիմյանը նամակով դիմում է ցարին, որում հայտնում է, որ ցանկանում է դուրս գալ ռուսահպատակությունից: Վեհափառը խոսքն ավելի ազդու և հատու դարձնելու համար դիմում է առածի և այն էլ ռուսական առածի՝ գրելով. «Ռուսաց առածն ասում է, թե՛ հինգ և թե՛ եօթը խփած ապտակի պատասխանատուութիւնը միևնոյն է: Եւ վերջապէս այսքան բարբարոսական վերաբերմունքից յետոյ այլ ևս ինչ ունինք սպասելիք, որ մեր խօսքին քաղաքավարութեան տօն ու ձև տանք»[5]:

### *Առած-ասացվածքները Նշան Պեշիկթաշլյանի երգիծավեպերում*

Սփյուռքահայ նշանավոր գրող, երգիծաբան Նշան Պեշիկթաշլյանն իր երգիծավեպերում նույնպես օգտվել է առած-ասացվածքների անսպառ շտեմարանից և օգտվել է տարբեր ու շատ հետաքրքիր ձևերով: Երբեմն Պեշիկթաշլյանն առածը կամ ասացվածքը կիրառում է որպես եզրակացություն կամ բնաբան՝ արտահայտված մտքերի համար: Այսպես է «Մեծ ծաղրածուն» վեպի մի դրվագում, որտեղ տարեց հերոսը մտորում է իր անցած կյանքի մասին: Առհասարակ ծերության մասին առած-ասացվածքները փոքր թիվ չեն կազմում, և սա չի վրիպել հետազոտողների հայացքից, ինչպես. «Արտահայտելու համար այն միտքը, թե ծերության հասակում ֆիզիկական ուժերի սպառման ու ջլատման հետևանքով մարդն ընկնում է ծանր և կաշկանդված վիճակի մեջ, ժողովուրդն ասում է. «Ծերություն-գերություն»: Ոչ պատահական ձևով

---

[4] **Պարոնյան** 1954, 93:

[5] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2020, 560:

գործածված մի հատիկ «գերություն» բառն այստեղ լիուլի տալիս է ծեր մարդու վիճակի բնութագիրը, որովհետև այն հիշեցնում է գերու համար այնքան բնորոշ նմանօրինակ կացությունը»[6]:

Պեշիկթաշլյանի հերոսի մտորումների հիմքում Աստվածաշնչի խոսքն է. «Հոգիս յօժար է, բայց մարմինս՝ տկար»[7]: Այս խոսքը Քրիստոսն արտասանել է Գեթսեմանի պարտեզում ձերբակալությունից շատ կարճ ժամանակ առաջ: Դարերի ընթացքում այն ձեռք է բերել ասացվածքի արժեք և կիրառվել է միանգամայն տարբեր խոսքային իրադրություններում, նաև այնպիսի իրադրություններում, որոնք շատ հեռու են իր սկզբնական իմաստից՝ արտահայտված Գեթսեմանի պարտեզում: Այդպես է նաև այս դեպքում. «Տարէցը կրնայ ըսել ամենայն իրաւամբ. – Երբ երիտասարդ էի, ասպարէզը իմս էր, սակայն ոչինչ գիտէի: Հիմա ամէն բան գիտեմ, սակայն ասպարէզ չունիմ: Հոգիս յօժար է, բայց մարմինս՝ տկար»[8]:

Այսպիսի ինչ-որ իմաստով նախաբանին հաջորդում են «իմաստասիրական» խորհրդածություններ դարձյալ երգիծական բնույթի, որոնք նույնպես կազմված են առած-ասացվածքների սկզբունքով և գուցե հայտ են ներկայացնում այդպիսին դառնալու: Լեզվաբանության մեջ կա դիպվածային հոմանշություն հասկացությունը, ինչի մասին խոսելիս մասնավորապես նշվել է, որ «Իմաստների մերձեցումը, որը հանգեցնում է այսպիսի հոմանշության, տեղի է ունենում երկու ճանապարհով՝ իմաստային ենթատեքստի օգնությամբ և բառերի հնչյունական մերձավորության հայտնաբերման ճանապարհով»[9]:

Մեր նշած միավորները կարելի է անվանել դիպվածային առածներ կամ ասացվածքներ, այսպես. «Մարմինը հին, քարքարոտ, ճեղքրտուած լեռ մըն է, իսկ հոգին հրաբուխ, ամէն օր բռնկող, բազմալաւա: Մարմինը հին տաճար, մէջը հոգին՝ նոր սուրբ կամ նոր սատանայ: Մարմինը հին պալատ, մէջը հոգին՝ նոր թագաւոր: Մարմինը հին զանգակատուն, մէջը հոգին՝ նոր զանգակ: Մարմինը հին ախոռ, մէջը հոգին՝ նոր վազերածի» (106):

Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա է պատկերավորման զանազան միջոցների առատություն, հատկապես հակադրույթների: Հակադրույթը ոճական արտահայտչամիջոց է, որով հակադիր իմաստ ունեցող բառերի գործա-

---

[6] **Ղանալանյան** 1960, LXXVI:

[7] Աստուածաշունչ մատեան, Նոր Կտակարան 1997, 30:

[8] **Պէշիկթաշլեան** 1942, 106: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ:

[9] **Пелевина** 1980, 49.

ծությամբ հակադրվում են առարկաներ, հատկանիշներ, երևույթներ: Վերը բերվածները կազմված են մարդու ներհակ տարրերի՝ հոգու և մարմնի, նաև հնի ու նորի հակասություններից: Հակադրույթներն առհասարակ լայն կիրառություն ունեն առած-ասացվածքներում, ինչպես նաև դարձվածներում, հիշենք. «Մոտիկ հարևանը լավ է հեռու բարեկամից», «Թոկի երկարն է լավ, խոսքի՝ կարճը», «Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա» և այլն: Քննության առարկա հատվածում առկա պատկերավորման մյուս միջոցները՝ մասնավորապես այլաբանությունները, չափազանցությունները ևս ծառայում են հակասություններն ավելի ցայտուն ու արտահայտիչ դարձնելու նպատակին: Այսպիսով, հակադրույթներն առավել ընդգծված են ներկայացնում հերոսի հոգեվիճակը՝ դրա բոլոր երգիծական ու ողբերգական կողմերով: Միանշանակ պետք է համաձայնել, որ «Առածների ու ասացվածքների մեջ իմաստի ուղղակի առման հետ միասին, այս կամ այն չափով, արտահայտված է նաև նրանց փոխաբերական առումը... Այս տեսակետից էլ սրանք մոտենում են դարձվածքային այն բառակապակցություններին կամ արտահայտություններին, որոնք կազմությամբ կարճ ու դիպուկ նախադասություններ են»[10]:

Մեր բերած օրինակներում հակադրույթները կազմվում են հականիշ զույգերի միջոցով: Կան դեպքեր, երբ դրանք կազմվում են հականիշ եռյակների միջոցով՝ ստեղծելով, եթե կարելի է ասել, «եռաստիճան» հակադրություն, ինչպես նույն ծեր հերոսի դեպքում. «Ժամանակը իր անողոք կատակները սարքեր է ամենուրեք, վերն ալ, վարն ալ ու մանաւանդ մէջը» (104):

Իր երգիծավեպերում Պեշիկթաշլյանը կարծես առածի կամ ասացվածքի արժեք է տալիս միավորների, որոնց կարելի է դարձվածի դիպվածային տարբերակ համարել: Ունենք «աղյուծի կաթ կերած լինել» դարձվածը, որ նշանակում է «անվախություն, քաջություն ցույց տալ, հանդես բերել»[11]:

«Ընկեր Փարոս» երգիծավեպի հերոսը՝ Փարոսը՝ փուչ ու փառամոլ մի կոշկակար, ամբողջ կյանքում դեգերում է կուսակցությունից կուսակցություն, ինչը խիստ զայրացնում է կուսակցական նախկին ընկերներին, և որոնցից մեկը Փարոսին ասում է. «Փարոսը հօկճի, համայնավար: Է՛, դուն խենթի կաթ ծծած ըլլալու ես» (19): Ինչպես տեսնում ենք, այստեղ խենթանալու գաղափարն արտահայտված է մի կապակցությամբ, որ կազմված է վերը նշված դարձվածի նմանողությամբ:

[10] **Մուրվալյան** 1959, 45:
[11] **Բեդիրյան** 2011, 136:

Նույն հերոսի՝ Փարոսի խոսքում հանդիպում ենք մեկ այլ հետաքրքիր արտահայտության, որը կարելի է Աստվածաշնչի երկու տարբեր խոսքերի յուրօրինակ «համադրություն» համարել: Առաջինը Եսայու մարգարեության «Նոր երկինք, նոր երկիր» հատվածից է և ունի վախճանաբանական իմաստ. «Յայնմ ժամանակի գայլքն եւ գառինք ի միասին ճարակեսցին»[12]: Երկրորդը կարդում ենք Մարկոսի Ավետարանում, որտեղ Հիսուսն օրհնում է մանուկներին. «Թողլ տուք մանկտւոյդ գալ առ իս»[13]:

Այս խոսքերը միաձուլելով իր կարճ ուղեղում՝ ընկեր Փարոսն անում է իր հերթական «հեղափոխական» խորհրդածությունը՝ դարձյալ հակոտնյա կուսակցությունների համատեքստում, և փորձում է դասեր կամ խրատներ տալ գյուղի դպրոցականներին. «Թոյլ տուէք գառնուկներին եւ գայլուկներին, որ իմ քովը գան» (59):

Պեշիկթաշլյանը ժողովրդական խոսք կիրառել է նաև երգիծավեպերից մեկի վերնագրում: Այն կոչվում է «Մուրատ Տավիտ կամ միութիւնը զօրութիւն է»: Վեպի հերոսը՝ դերձակ Մուրադ Դավիթյանը, սիրում է կրկնել այս խոսքը՝ դրան տալով, սակայն, բոլորովին այլ ենթատեքստ: Ազգային միաբանության մասին ճամարտակելն այս արհեստավորի համար քաղաքական տարբեր հայացքների տեր հայերի շրջանակներից հաճախորդներ գտնելու միջոց է: Այդ պատճառով նա վերը նշված արտահայտությանն ավելացնում է իր սեփական մեկնաբանությունը և պատից կախում տախտակ, որի վրա մեծատառերով գրված է.

***Միութիւնը զօրութիւն է,***
***Զօրութիւնը զրահուիլ է,***
***Զրահուիլը հագուիլ է (80):***

Այս զավեշտական կարգախոսը դժբախտաբար չի օգնում հերոսի մանրիկ խորամանկությունները հաջողությամբ պսակելուն, քանի որ, ինչպես դիպուկ կերպով նկատում է մի բարեկամ. «Քեզի պէս հայը կրնայ ամէն ազգ խաբել, սակայն չի կրնար Հայ մը խաբել: Քեզի պէս Հայը կրնայ ամէն ազգէ խաբուիլ, սակայն չի խաբուիր Հայէն» (94):

Առած-ասացվածքներով մասնավորապես հարուստ է «Համառօտ պատմություն ասավուտներու» երգիծավեպը: Սա համառոտ պատմությունն է երևակայական մի ժողովրդի, ինչը հեղինակը բացահայտում է վեպի վերջում,

---

[12] Աստուածաշունչ մատեան, Հին Կտակարան 1997, 770:

[13] Աստուածաշունչ մատեան, Նոր Կտակարան 1997, 46:

որտեղ նաև իր խորհրդածություններն է անում պատմագիտության մասին՝ դարձյալ համեմված ասացվածքով և երգիծական երանգով. «Պատմութիւնը կրկնութիւն է»: Նաեւ ապերախտ գիտութիւն: Ապերախտ է... մանաւանդ անոր համար, որ հակառակ հարստացած ըլլալուն՝ մարդկային արիւններով չէ եղած մեզի բարի դաս մը: Գրածս խտացումն է ընդհանուր ազգաց պատմութեան մէջ գտնուող ողբերգութեան, ինչպէս նաեւ կատակերգութեան... Ես գրեցի ժպտելով, սակայն կարելի է լալով ալ կարդալ» (155):

Այս վեպում առկա առածները յուրահատուկ են նրանով, որ պատկանում են հեղինակի գրչին և հորինված են հատուկ ասավուտների կյանքն ու կենցաղը պատկերելու համար: Ինչպես նշում է հեղինակը. «Ժողովուրդը իր անգերազանցելի հանճարով կ'արհամարհէր ու կը հեգնէր իր արքան: Ասավուտ առածները ապացոյցն են մեր խօսքին» (137):

Սրանք լեզվական չափազանց գունեղ միավորներ են և հարուստ պատկերավորման ամենատարբեր միջոցներով, որոնցում իր ուրույն տեղն ունի չափազանցությունը: Պետք է նշել, որ չափազանցությունն առհասարակ խիստ լայն տարածում ունի ժողովրդական խոսքում: Կան ժողովրդական բազմաթիվ արտահայտություններ ու դարձվածներ, որոնց հիմքում չափազանցությունն է, և որոնք լեզվական երևույթ են, ինչպես «լուն ուղտ շինել», «քիթը երկինք հասնել», «ծիծաղից մեռնել» և այլն:

Ասավուտների կյանքի մասին առածներով կամ առանց դրանց խոսելիս՝ Պեշիկթաշլյանը հիմնականում շեշտը դնում է երկրի առաջնորդների, թագավորների, կառավարիչների ապիկարության, ապաշնորհության, շատ հաճախ անհույս հիմարության, նույնիսկ խելագարության՝ նաև հանցավորության և այս ամենի արդյունքում ժողովրդի կրած տառապանքների վրա: Հիշենք այս գաղափարը չափազանցությամբ արտահայտող մի քանի առած. «Երբ թագաւորը պաղ առնէ, ամբողջ ժողովուրդը կը տառապի հարբուխէ: Երբ թագաւորին աչքին մէջ երկու կաթիլ արցունք ըլլայ, ամբողջ ժողովուրդը միլիոնաւոր թաշկինակներու պէտք կ'ունենայ... Երբ թագաւորը իշու մը նայի, այդ աւանակին գինը տասը արծաթ կը բարձրանայ: Երբ թագաւորը ջրիի մը նայի, այդ ջրին կը փոխուի ազնիւ ձիու» (137–138):

Ինչպես արդեն նշել ենք, առածներում հաճախ են հանդիպում հակադրույթներ, ասավուտներին նվիրված առածները բացառություն չեն: Այստեղ հակադրությունը դարձյալ թագավորի ու ժողովրդի միջև է, ինչպես. «Թագաւորը աշխատասէր է, երբ մատը մատին դպցնէ, իսկ ասավուտ գիւղացին ծոյլ է, երբ օրը տասը ժամ աշխատի: Գիւղացին երբ մէկուն քիթը արիւնէ, ազգա-

տեաց է. թագաւորը երբ քանի մը հարիւր հազար հոգիի արիւնը թափէ, մեծ հայրենասէր է» (138):

Առած-ասացվածքների կազմության մեջ մեծ մասնակցություն ունեն փոխաբերությունները: Փոխաբերության մի ձև է դիմառնությունը, որն առաջանում է, երբ «անշունչ առարկաները շնչավորում, նրանց վերագրում ենք կենդանուն կամ մարդուն հատուկ հատկանիշներ, անշունչ առարկաներին ու կենդանիներին՝ բանականություն և խոսելու շնորհ»[14]:

Այսպիսի երևույթ է առկա հետևյալ առածում, որտեղ անշունչ առարկային՝ ամանին, վերագրված է մարդուն հատուկ հատկանիշ՝ հպարտություն. «Երբ թագաւորը թքնէ ամանի մը մէջ, այդ ամանը կը ճաթի հպարտութենէն» (137):

Հետաքրքիր փոխաբերություն է առկա մեկ այլ առածում. «Թագաւորը շատ կիներ կը սիրէ «ժողովուրդի հայր» կոչուելու համար» (138): Այստեղ կծու հեգնանք է դրսևորված մի երևույթի հանդեպ, որ խորը արմատներ է ունեցել տարբեր հասարակարգերում: Հնում թագավորներին հաճախ աստվածացրել են, նոր ժամանակներում երկրի ղեկավարին երբեմն հենց «ժողովրդի հայր» տիտղոսով էին մեծարում, բավական է հիշել անձի պաշտամունքի տարիները: Հեղինակն այս առածի միջոցով ի ցույց է դնում երևույթի ողջ այլանդակությունը, անարժան և անբարո առաջնորդների մեծարումը ամբոխի կողմից:

Նույն թագավորի զազրելի կերպարն են բացահայտում *__սահման__* բառի ուղղակի և փոխաբերական կիրառությունները նույն առածի շրջանակում. «Թագաւորին երկիրը սահման ունի, երկրին մէջ սակայն թագաւորին յիմարութիւններուն համար սահման գոյութիւն չունի» (139):

Իսկ ո՞ւմ հետ կարելի է համեմատել թագավորին: Հարցին հեղինակը պատասխանում է առածով, որտեղ այս անգամ կիրառում է համեմատություն, ընդ որում առավելական համեմատություն: Համեմատության այս տեսակի դեպքում «համեմատվող առարկան իր հատկանիշներով ավելի բարձր է ներկայացվում համեմատյալից (մերժողականի դեպքում՝ ավելի ցածր)»[15]:

Եվ ուրեմն, ումի՞ց է ավելի բարձր կամ դրական թագավորի նկարագիրը. «Թագաւորը բաւական բարի է, իբրեւ դեւերու ներկայացուցիչ» (139): Կարծում ենք՝ մեկնաբանություններն ավելորդ են:

---

[14] **Պողոսյան** 1991, 185:

[15] **Պողոսյան** 1991, 14:

***Եզրակացություններ***

Եթե փորձենք ամփոփել այս համառոտ քննությունը, ապա պիտի փաստենք, որ ֆրանսահայ գրող Նշան Պեշիկթաշլյանի երգիծավեպերում առածասացվածքները, ինչպես նաև ժողովրդական խոսքերը, դարձվածների տարբերակները, հեղինակային նորակազմություն հանդիսացող առածները ունեն առանձնահատուկ դեր ու կշիռ: Ոճական առումով այս միավորների հնարավորությունները շատ մեծ են, և հաճախ սրանց առկայության հետ է կապված խոսքի արտահայտչականությունը, հագեցվածությունը, ազդեցիկությունը և այլ արժանիքներ: Նաև սրանց միջոցով է գեղարվեստական ստեղծագործություն ներթափանցում ժողովրդական բառ ու բանը՝ հյութեղ ու աշխույժ, ու հատկապես կերպարների խոսքը դարձնում ավելի բնական, կենդանի ու շարժուն: Պայմանավորված իրենց այլաբանական նշանակությամբ՝ առածասացվածքները մեծ պատկերավորություն են հաղորդում խոսքին, որը Նշան Պեշիկթաշլյանի երգիծավեպերում ունի երգիծական բնույթ՝ հումորայինից մինչև կծու հեգնական:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց 1997, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, տպ. Մեծ Բրիտանիայում, 1450 էջ:

**Բեդիրյան Պ.** 2011, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1410 էջ:

**Թումանյան Հովի.** 1958, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, Հայպետհրատ, 510 էջ:

**Ղանալանյան Ա.** 1960, Առածանի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 400 էջ:

**Մուրվալյան Ա.** 1959, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն (ուսումնասիրություն), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 252 էջ:

**Պարոնյան Հ.** 1954, Ընտիր երկեր, գիրք 1, Երևան, Հայպետհրատ, 576 էջ:

**Պէշիկթաշլեան Ն.** 1942, Երգիծավէպեր, Փարիզ, Մատենաշար «Արմէնական մշակոյթ», թիւ 2, 160 էջ:

**Պողոսյան Պ.** 1991, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 396 էջ:

Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2020, գիրք իբ, Մկրտիչ Ա. Խրիմեան, Կաթողիկոս Ամենայն հայոց, փաստաթղթերի ժողովածու, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 792 էջ:

**Андреев Н.** 1938, Русский фольклор, Москва-Ленинград, «Печатный двор», 655 с.

**Пелевина Н.** 1980, Стилистический анализ художественного текста, Ленинград, «Просвещение», 272 с.

# ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОСЛОВИЦ И ПОГОВОРОК В САТИРИЧЕСКИХ РОМАНАХ НШАНА ПЕШИКТАШЛЯНА

АРАКЕЛЯН К.

## Резюме

***Ключевые слова:*** сатира, роман, язык, речь, пословица, поговорка, стиль.

Армянская сатирическая литература имеет богатые традиции. Сатирический жанр достиг своего апогея в XIX–XX вв., в частности, в творчестве западноармянских писателей Акопа Пароняна и Ерванда Отяна. Традиции западноармянской литературы были переняты писателями Диаспоры и в том числе Ншаном Пешикташляном, который более известен как сатирик.

Сатирические романы Ншана Пешикташляна изобилуют пословицами и поговорками, которые имеют большую стилистическую ценность, поскольку придают его языку особую образность и оттенок народной речи.

# LINGUO-STYLISTIC PROPERTIES OF PROVERBS AND SAYINGS IN THE SATIRICAL NOVELS OF NSHAN PESHIKTASHLIAN

ARAKELYAN K.

## Summary

***Keywords**:* satire, novel, language, speech, proverb, saying, style.

Armenian satirical literature has rich traditions and deep roots. The genre of satire reached its apogee in the 19th – 20th centuries, particularly in the works of such Western Armenian writers as Hagob Paronian and Yervand Otian. Being one of the most brilliant satirists in the Diaspora literature, Nshan Peshiktashlian followed the legacy of the Western Armenian writers.

Satirical novels by Nshan Peshiktashlian are rich in proverbs and sayings, which are of significant stylistic value as they endow his works with unique features of figurativeness and some elements of vernacular.

**NAIRA HAMBARDZUMYAN***
*PhD, Associate Professor*
*Institute of Literature after Manuk Abeghian*
*Academy of Sciences of RA*
nairahambardzumyan@yahoo.com
DOI: 10.52853/18294073-2021.3.27-208

# THE PHENOMENON OF ECSTATIC TIME IN HOVHANNES TOUMANYAN'S QUATRAINS

***Keywords:*** ontology, transcendental reality, ecstatic time, phenomenology, metaphysics, Hovhannes Toumanyan, subconscious.

In the XX–XI centuries, the ontological domain of the text was redefined, refusing subareas, marking and regulating the combinations of material and ideal, matter and spirit in terms of full fledged autonomy, freedom of authorial writing – principally independent areas of relations. The author's spiritual existence is in fact the order of the existence of the text and embraces the unity of all culturally possible manifestations, as well as the course of spiritual and mental states, i. e. consciousness, the totality of thoughts, ideas, images, perceptions, ideals, feelings, and assessments. Therefore, ontology is a beginning that guides the reader towards the text, a chain of external realities that underlies all manifestations of existence, free from sensuality and principally beyond the limits of experience. The aforementioned is a phenomenon in the author's metaphysical realm of thought, the actuality of which is marked by the objectification of the word, since the internal domain of the text comprises the loops of the closed semantic chain "word-meaning-image-word-meaning", which are encrypted in the domain of the author's subconscious as the eternal beginning and the creative reason.

Within this context, the quatrains by Hovhannes Toumanyan are remarkable since their ontology is formed through the simplicity of language, spiritual meanings, philosophical ideas, the systems of depth and refinement of thought, images and metaphors, space and ecstatic time, which are characterized by the

* *Հոդվածը ներկայացվել է 21.05.21, գրախոսվել է 14.07.21, ընդունվել է տպագրության 19.11.21:*

self-sufficiency of "thing-in-itself"[1]. In its turn, the introspection of the ecstatic time[2] as a system implies a new interpretation of the text as an ontological structure driven by language, since the happenings taking place within the internal structural chains of the text are accessible to the reader through the use of existential, phenomenological and hermeneutical methods.

The world is realized and assimilated through language; the language becomes objectified especially for the bearers of the language, when "language-existence-truth" relations are created in the inner domain of the text, which Heidegger calls "indisputable"[3], taking into account the orders of creation and being. The language exudes significant depth and energy, which is specific to the aesthetic subject – the author (in this case, Toumanyan). Thus, importance is attached to the language of the writing, which explains the root of the text – the Word as ontology – through word-meaning-language-meaning-word transformations. These transformations are always in motion, as they occur under the direct influence of the author's worldview.

The world in Toumanyan's quatrains is encompassing and real not only as a manifestation of reality but also as the subjective existence of Toumanyan's writing, which, due to the process of objectification, indicates the expression of the objective. In this case, the text is considered as a body of reality; and creation becomes a bodily meaning, since the text, as an emotional-intellectual and complete movement, ensures its own existence:

A traveler of the divine in the sphere is my soul,
Transient from earth, to the glory unaware is my soul,
It has ascended and withdrawn towards the stars up remote,

[1] "thing-in-itself" is a philosophical term, which, apart from the phenomena only accessible to sensuality, regardless of human perceptions, denotes familiar objects. In order to know something, it is first necessary to think about that specific 'something', make a general idea of it, mentally create it. Imagination is vital in creative processes, since science not so much discovers the laws of nature as ascribes them to nature. Within this context, Kant's philosophy has been subjected to lot of criticism in terms of the interpretation of the objective foundations of the "thing-in-itself", unfamiliar to science (henceforth, to people).

[2] Ecstatic time is the journey of the spirit out of the body through mystical experiences, by which the spiritual traveler abandons the physical body and travels with the delicate body, body of dreams or stellar body towards higher realms.

[3] **Хайдеггер** 1991, 87.

To someone dwelling down on earth by now queer is my soul[4].

Toumanyan's personal-sensory experience forms the specific language of the text, and the author discovers himself in that domain, encrypting the inner element, directing it to new ontological states based on cosmopolitanism, through which the author discovers the modern world from the viewpoint of ontological ecstatic time, in the domain of additional meanings and possibilities. That is why the author’s subconscious and mind practically seek to learn the world and define the writing as free from the barriers of the soul.

The idea of returning to the inner possibilities of the quatrains is created, expanding the spheres of interpretation, the writing’s route of existence – the opposite side of the Finite, the world full of events where Toumanyan arrives by means of crossing the border of self as a being. In this case, all the intercultural questions, which are substantiated in Hovhannes Toumanyan's quatrains, are conditioned by the author's consciousness, the search for new principles and relations between faith and reason, and their reinterpretation. This attitude towards the world also leads to the perception of Toumanyan as an author, as the creative basis of the world-image, which gives an opportunity to convey to the reader the cosmic rotation of the text, in which language is perceived as a symbol of a differentiated beginning; and the word, becoming a thought, finds its path towards spirituality:

Hey, speechless One, because of whom every living thing unites,
In every life and every blood, without fire who ignites -
All free and dear, both far and near, owing to you in this world,
All within You, deathless and due, singing to You with Your word…[5].

“The word is a noun-existence-verb, and the noun-existence-verb is God”[6]; in other words, Toumanyan's language sounds like Bach's ricercar[7], when the understanding of the world transforms into something self-governing, harmonious

[4] **Թումանյան** 1991, 61:
This and the following quatrains of H. Tumanyan referred to in the article have been translated by Ruzanna Abovyan.

[5] **Թումանյան** 1991, 61:

[6] **Хайдеггер** 1991, 36.

[7] Richercar is a sequence of canons, fugues, and musical polyphony, written by Johann Sebastian Bach, based on a theme dictated by and dedicated to King Frederick II of Prussia. It is performed with different instruments, as the main set of musical instruments was not specified by Bach.

and polyphonic, and the author becomes not only the bearer and listener of that harmony, but also its appreciator and transmitter. In this harmony of Toumanyan's text, the preliminary image of eternity is born, which, at the same time, is also the visible course of cosmic time in all possible patterns, since the author acquires all the information of the cosmic mega-system within a certain mesosphere, transmitting it to the text, outlining its ontological layer, putting forward the idea of ecstatic time, and subsequently, the understanding of space, in the internal domains of which, priority is given to existence.

In this realm of cosmic harmony, the author creates the material shell for the quatrains as a unity of objects, sounds, images, meanings, forms, time, space, process, and action. Time that frames the mega-system of quatrains is the ecstatic time, which actively influences the text as a system, changing not only its own nature but also that of space, reaching the different rhythmic hierarchies of other worlds, which mutually obey or deny each other, converting the inner space of the writing into a four-dimensional space–another–time. In this case, the internal space of the text is revealed by mathematical starting points, although without assuming their algebraic stresses, since the text is perceived as a universe, changing the relativity of motion as a system:

My baptism church became the sky, the sun became my sacred torch,
Everyone's love – the holy tank, the rainbow was my temple's porch,
Mountain became my godfather, my myrrh was drawn from drops of rain,
And as a poet I was named by Him, by whom I was ordained.[8]

"Apparently, time is not an abstract quantity at all, but rather a specific continuum, which includes qualities or certain conditions that can be manifested in different places – in relative simultaneity – in case of parallelism, randomly, almost inexplicably, as, say, in the fact of the simultaneous manifestation of such thoughts, symbols, or mental state"[9], writes Carl Jung, the founder of analytical psychology. In addition to Jung's statement, they appear in Toumanyan's quatrains with devices which cannot be interpreted, just as it is impossible to interpret the cases of authorial coincidences with identical thoughts, signs, or mental states. And in order to make a certain part of the authorial space available in the inner domain of the writing, it is necessary to consider the idea of the finiteness of time,

[8] **Թումանյան** 1991, 58:
[9] **Юнг** 2003, 59.

and all the inputs and outputs of the word-meaning-thought relations, which are reflected in a certain eventual framework, separated by a time interval. The phenomenon of active time constantly records changes in the segments and levels of ecstatic time in the areas of text genesis, genetic coding, metabolism, structural manifestations, and situation assessment. Heidegger calls this phenomenon the "periodic and causal process of self-development", which takes place "with the involvement of the quenching energy in nature"[10], when the involved energy is recycled, the recycled energy is collected, the collected energy is distributed, and the distributed energy is re-involved and reassembled in a second time domain. The latter is relatively asymmetric like the variations of the future towards the past and the past towards the future, although both require different timelines. Conceivably, this reality found its expression in the quatrain published under Hovhannes Toumanyan's name during his lifetime, but not included in the complete collection of his works:

Even if you relinquish all and also me in your wrath,
You will never abandon me; I will always have your faith,
I'm inside you; you are inside everybody everywhere,
Yet... everyone is helplessly trying to seek for your path[11].

Heidegger speaks of four-dimensional time, noting as a starting point the moment of "at present"[12], which is realized within a human being and through a human being, and the asymmetry of which gives birth to the unity of multiplicity and completeness of time in Toumanyan's quatrains:

In the luminous and light wonder worlds of stellar dreams,
Along swift and sweeping thoughts' immaculate conscious streams,
Inside evocations' vague long-forgotten foggy steam,
It sometimes seems that one day I could reconcile with Him…[13]:

The absoluteness and universality of time in Toumanyan's quatrains (as a system) presupposes the division of cosmic macro-time into micro-times, as the inner historical time of the writing (as a topos) coincides with space (as a movement) and is characterized as a space-time system. The microworlds

---

[10] **Хайдеггер** 1991, 101.

[11] «Հայաստանի ձայն» շաբաթաթերթ, 1922, 30 դեկտեմբերի: Մեջբերվում է ըստ «Գիտություն» թերթի 2002 թ. թիվ 3-ի հրապարակման:

[12] **Хайдеггер** 1991, 108.

[13] **Թումանյան** 1991, 52:

transform into finite times (topoi), revolving around a certain definition of text, like an electron in the nucleus of an atom. Through the subconscious, worlds inaccessible to consciousness and reality penetrate the inner realm of the text, since human – time relations are different: events, individual and social experience, repository of knowledge, succession of stages of life, physical old age. In this case, the complexities of language as a system are also generated during the transition from the micro world to the macro world, when the text in the subconscious domain is characterized as an intermittent, changing, and coordinating object:

I said, "I own nothing but this body and this name…",
When your beam emerged before me in a bright and radiant frame,
"What's that body or the fleeting name a human just possesses,
You are God, you are eternal, never-ending, nameless, selfless[14].

Real displacements, realities in the inner realm of the writing are determined only by the ecstatic pause of time – by the combinations of the light-thermal dynamics of the quatrain as a body – these are perceived as creative-entropic spaces (Nm Ne and Ne). Toumanyan's physical time is a one-dimensional straight process, the combination of the aforementioned realities, which, evolving with a logically differentiated system (very little) and memory (once upon a time), maintain the periodic shifts of the word-bodies in the quatrain and the mutually opposing periodic processes of birth and death, as well as the perceptions of internal and external times.

By thousand years' or ages' time backwards or forth, what is wrong×
I was, I am, and I will be, once and for all, what is wrong×
Even if I change thousand forms, form is transient, nothing more,
I am a soul along the great heavenly soul, what is wrong×[15]

"Presence is approaching, coming to us – humans," [16] writes Heidegger, describing the phenomenon of time with existential-ontological rhetoric. The penetration into the realm of existence in its time of realization also gives birth to the perception of time, and its conception depends on our being (not existence), including us, because "there is no time without a man"[17]. Heidegger views

[14] **Թումանյան** 1991, 52:
[15] **Թումանյան** 1991, 51:
[16] **Хайдеггер** 1993, 227.
[17] **Хайдеггер** 1993, 93.

existence and time as interpenetrating systems: "Existence and time reciprocally succeed each other, only in such a way that in each of them, it is impossible to say that being cannot be spoken of as temporary, and temporality may not be spoken of as existence"[18].

### *Conclusion*

Ecstatic time is transformed as long as there is a transition to descriptive time, and when it ends, it becomes the past within the same period that can be reversed or restored only through memories. When an idea is articulated, reality changes its color, and the story begins from the very beginning, although the birth of the phenomenon at some moment acquires the characteristics of that specific time. And when we consider an event within the domain of time extremely important, we also attach importance to time within the domain of the event. Internal time is not measured, but is perceived as the age of the system, which is the separate state of the whole. As in Toumanyan's quatrains, the understanding of inner time with its entropic intersystemic metabolism, reaches the perception of the hierarchy of ecstatic time (cosmic inclusions) in the text.

### BIBLIOGHRAPHY

«Հայաստանի ձայն» շաբաթաթերթ, 1922, 30 դեկտեմբերի, թիվ 24:

**Թումանյան Հովհաննես** 1991, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով,, հտ. 2, Հայաստանի ԳԱ հրատ., Երևան, 637 էջ:

**Хайдеггер Мартин** 1991, Разговор на проселочной дороге. Избранные статьи позднего периода творчества, Москва, «Высшая школа», 192 с.

**Хайдеггер Мартин** 1993, Время и бытие (Вопрос о технике), Москва, «Республика», 447 с.

**Юнг К.** 2003, Дух в человеке, искусстве и литературе, Минск, «Харвест», 384 с.

[18] **Хайдеггер** 1991, 82.

# ԷՔՍՏԱՏԻԿ ԺԱՄԱՆԱԿԻ ՖԵՆՈՄԵՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՌՅԱԿՆԵՐՈՒՄ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ն.

## Ամփոփում

***Բանալի բառեր՝*** գոյաբանություն, տրանսցենդենտալ իրողություն, էքստատիկ ժամանակ, ֆենոմենոլոգիա, մետաֆիզիկա, Հովհաննես Թումանյան, ենթագիտակցություն:

XX–XXI դարերում նորովի իմաստավորվեց տեքստի գոյաբանական տիրույթը՝ նշանավորելով ու կարգավորելով նյութականի և իդեալականի, նյութի և ոգու միավորումները՝ հեղինակային գրի ազատության և այլ հարաբերությունների սահմաններում: Այս համատեքստում՝ Հովհաննես Թումանյանի քառյակների գոյաբանությունը ձևավորվում է գաղափարի, պատկերի, լեզվի, իմաստի և այլ երևույթների միջոցով, բնութագրում գրի՝ հոգու արգելանքներից զերծ սահմանումները: Այս ներդաշնակության մեջ էլ ծնվում է հավերժության նախապատկերը, որը միաժամանակ տիեզերական ժամանակի ընթացքն է՝ հնարավոր բոլոր կերպավորումներով: Տիեզերական մի որոշակի միջոլորտում հեղինակը ձեռք է բերում է ամբողջ մեգահամակարգի տեղեկատվությունը՝ փոխանցելով այն տեքստին, կազմավորելով նրա գոյաբանական շերտը, առաջադրելով ժամանակի ու տարածության հասկացությունները, որոնց ներքին տիրույթներում առաջնակարգությունը տրվում է գոյին: Այս համատեքստում՝ գործուն ժամանակի ֆենոմենը գրանցում է նաև էքստատիկ ժամանակի փոփոխությունները՝ տեքստի ծագումնաբանություն, գենետիկ գաղտնագրերի, մետաբոլիզմի, կառուցվածքային դրսևորումների և իրավիճակների գնահատման տիրույթներում:

# ФЕНОМЕН ЭКСТАТИЧЕСКОГО ВРЕМЕНИ В ЧЕТВЕРОСТИШИЯХ ОВАНЕСА ТУМАНЯНА

АМБАРЦУМЯН Н.

## Резюме

***Ключевые слова:*** онтология, трансцендентальная реальность, экстатическое время, феноменология, метафизика, Ованес Туманян, подсознание.

В XX–XXI веках было переосмыслено онтологическое пространство текста, что ознаменовало и систематизировало границы материального и идеального, свободы авторского замысла в единстве материи и духа, а также в других ипостасях. В контексте сказанного онтология четверостиший Ованеса Туманяна формируется с помощью идей, образов, языка, смысла и т.д., а характеристикой его стиля (авторского почерка) становятся дефиниции, лишенные духовных запретов. В этой гармонии рождается праобраз вечности, который в то же время является течением космического времени со всеми возможными своими проявлениями. В некоей космической сфере автор, обретя информацию всей мегасистемы, включает ее в текст и создает онтологический пласт, тем самым апеллируя к понятиям времени и пространства, во внутренних пределах которых приоритет отдается бытию.

В этом контексте феномен действенного времени фиксирует также изменения экстатического времени в границах генезиса текста, генетических кодов, метаболизма, оценки структурных проявлений и ситуаций.

**ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ***
*Բանասիրական գիտությունների թեկնածու*
*ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահ*
gyurjidav@mail.ru
DOI: 10.52853/18294073-2021.3.27-217

# ՀՐԵԱՆԵՐԻ ԼԵԶՎԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

***Բանալի բառեր՝*** լեզվանուն, սեմական լեզուներ, եբրայեցերեն / եբրայերեն, հրեարեն/ հրեերեն, ուղղագրական տարբերակներ, բառարանագրական ավանդույթ, կանոնարկում, գրաբար:

***Ներածություն***

Հայերենում հրեաների լեզուն անվանելու համար V–XX դարերում կազմվել են տարահիմք մի շարք բառեր, որոնք ունեն բառակազմական, ուղղագրական տարբերակներ: Բառակազմական հիմք են դարձել ազգ, ժողովուրդ նշանակող եբրայեցի, հրէայ (հրեա), ջհուդ բառերը, իվրիտ և իդիշ լեզվանունները, որոնց ավելացել են «լեզու» նշանակող –երէն / -արէն ածանցները: Հրեաների լեզվի հայերեն անուններն են (ավանդական և նոր ուղղագրությամբ)՝ եբրայեցերէն (եբրայեցերեն), եբրայերէն (եբրայերեն), հրէարէն (հրեարեն), հրէերէն (հրեերեն), հրէայերէն / հրեայերեն, հազվադեպ կազմություններ՝ ջհուդերեն, իվրիտերեն և իդիշերեն, նաև սխալագրություններ՝ հրէէրէն, հրեաերեն, եբրաերեն և այլն:

Հրեաների լեզվի հայերեն անունները և նրանց տարբերակները ներառվել են հայոց լեզվի տարատեսակ բառարանների բառացանկեր: Պարզենք, թե դրանցից որո՛նք և ինչպե՛ս են ներկայացվել բառարաններում, բառարանային ինչպիսի՛ մշակման են ենթարկվել, ի՛նչ խնդիրներ և անելիքներ կան այդ հարցում:

* *Հոդվածը ներկայացվել է 24.05.21, գրախոսվել է 18.08.21, ընդունվել է տպագրության 19.11.21:*

Հարցը կքննենք ըստ բառարանների տեսակների՝ միալեզվյան և թարգմանական:

***Միալեզվյան բառարաններ***

Նախ անդրադառնանք բացատրական բառարաններին՝ ուշադրություն դարձնելով, թե ո՛ր տարբերակներն են գլխաբառ դարձել, խոսքիմասային ի՛նչ արժեքներով և իմաստներով, ինչպիսի՛ զուգակցումներով և հղումներով են ներկայացվել:

Մխիթար Սեբաստացու Հայկազյան բառարանում մակբայի («որակական մակբայի») արժեքով տրված են հրէարեն և հրէէրէն (-երէն ածանցը՝ է-երով, որ վրիպակ է) տարբերակները, «լեզուաւ կամ բարբառով հրէի» բացատրությամբ և սուրբգրային հղումներով[1]: Աբբահայրը նշում է, որ այս բառերը երբեմն նշանակում են նաև «հրեաբար», այսինքն՝ ըստ հրեաների կերպի և սովորության: Բառարանում ներառված չէ եբրայեցերէն-ը:

Եբրայեցերէն բառը մակբայի արժեքով արձանագրվել է Նոր հայկազյան բառարանում՝ «Եբրայեցւոց լեզուաւ կամ գրով» բացատրությամբ, հունարեն և լատիներեն թարգմանությամբ՝ Ἑβραϊστί և Hebraic, բառահոդվածում տրված է նաև հրեարէն-ը՝ որպես մատչելի համարժեք[2]: Առձեռն բառարանում բառը սեղմ այդպես էլ բացատրվում է՝ «հրէարէն»[3]:

Նոր հայկազյան բառարանում գրանցված են նաև V դարում վկայված հրէարէն / հրէերէն տարբերակները, որոնք բացատրվում են այսպես՝ «Հրէից լեզուաւ կամ գրով», տրվում են հունարեն ու լատիներեն համարժեքները՝ Ἰουδαϊστί և Judaice, հայերեն բառակազմական և ուղղագրական տարբերակները[4]: Առանձին բառահոդվածով տրված է սրանց հրէայերէն բառակազմական տարբերակը, բայց հրէարէն-ի հղումով:

Առձեռն բառարանում, ի տարբերություն ՆՀԲ-ի, հրէայ հիմքից կազմված երեք լեզվանուն-գլխաբառ կա՝ հրէայերէն, հրէարէն, հրէէրէն[5], որոնցից երկուսը հղվում են հրէարէն-ին: Սա մակբայի և ածականի արժեք ունի, բացատրվում է «հրէի լեզուով, գրով, օրէնքով» և «հրէի» (այսինքն՝ հրեական):

---

[1] **Մխիթար Սեբաստացի** 1749, 559:

[2] **Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան** 1836, 645:

[3] Առձեռն բառարան հայկազնեան լեզուի 1865, 256: Հայկազյան բառարաններում բառը ե/է-ի ուղղագրական տարբերությամբ է ներկայացված:

[4] **Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան** 1837, 142:

[5] Առձեռն բառարան հայկազնեան լեզուի 1865, 513:

Դպրոցների համար գրված աշխարհաբար-գրաբար բառարանում Հրէայ բառահոդվածում Հրէայերէն ենթագլխաբառի դիմաց տրված են գրաբար համարվող հրէարէն, եբրայեցերէն[6] տարբերակները:

Ս. Գաբամաճյանը հետևել է Առձեռն բառարանին. եբրայեցերէն-ը երկարժեք է՝ ածական, մակբայ, բացատրված որպես «հրէարէն», գլխաբառ են դարձել նաև հրէայերէն և հրէէրէն տարբերակները՝ հղելով հրէարէն-ին, որի իմաստները տրված են ճիշտ այնպես, ինչպես Առձեռնում է[7]:

Ստ. Մալխասյանցի բառարանում եբրայեցերէն-ը բացատրված է «եբրայեցոց լեզուով», ավելացվել է խոսքիմասային երրորդ արժեքը՝ գոյական, յուրաքանչյուր արժեքի համար բերված են ինքնաշեն նմուշներ, նախորդների նման տրված են հրէայերէն-ը, հրէերէն-ը և հրէարեն-ը[8]: Բացատրվում է միայն վերջին բառը: Առաջին՝ «եբրայեցերէն» իմաստն ունի պայմանական նշան, որ նշանակում է «հին բառ կամ նշանակություն», իսկ երկրորդ իմաստի միջոցով բառի իմաստային կառուցվածքում ուշագրավ տարբերակում է մտցվում՝ «հրեաների այժմյան լեզուն (որ եբրայեցերէն-ից օտար (այսինքն՝ տարբեր – Դ.Գ.) լեզու է)»: Այսպիսով բառարանագիրը եբրայեցերեն-ին հատկացնում է հին լեզուն, իսկ հրեարեն-ին՝ նոր լեզուն անվանելու դեր: Մալխասյանցի ինքնաշեն օրինակներից մեկը այդ մոտեցման արտահայտությունն է. «Հրէարէնը աղճատված գերմաներէն է»: Հետագա բառարանները լեզվանունների բաշխվածության այս մոտեցումը չկիրառեցին (կամ չզարգացրին), թեև հայոց լեզվի բացատրական բառարաններից օգտվողների համար այս լեզվանունների հարցը տակավին մութ է մնում:

Ճիզմեճյան վարդապետի բառարանում եբրայեցերէն-ը միայն գոյական է՝ «հրեաներու լեզու», իսկ հրէայերէն-ը՝ միայն ածական, և Առձեռն բառարանի բացատրությամբ՝ «հրէի լեզուով, գրով, օրէնքով»[9]:

Ներկայացված բառարաններում եբրայեցերէն-ի նույնահիմք տարբերակայնություն չի արձանագրվել, և դա բառի իրական գործածության արտացոլումն էր:

Եբրայեցերեն / եբրայերեն տարբերակայնության առաջին դրսևորումը և եբրայերեն-ի նախընտրելիության արձանագրումը տեսնում ենք ժամանակակից հայերենի ակադեմիական բացատրական բառարանում, որտեղ եբրայե-

---

[6] Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ 1869, 324:

[7] **Գաբամաճեան** 1910, 398, 847:

[8] **Մալխասյանց** 1944, հ. 1, 548, հ. 3, 152:

[9] **Ճիզմէճեան** 1957, 204, 888:

ցերեն-ից հղվում է եբրայերեն-ին[10]: Այս բառարանում հրեա հիմքից կազմված հրեարեն / հրեերեն տարբերակները միևնույն բառահոդվածում են, սակայն հղում է տրված եբրայեցերեն-ին[11] (ինչպես տեսանք, վերջինս էլ իր հերթին՝ եբրայերեն-ին): Հաջորդական հղումները բառարանից օգտվողի համար դժվարացնում են բառին և նրա բացատրությանը հասնելու ընթացքը:

Էդ. Աղայանի բառարանում եբրայերեն-ը և եբրայեցերեն-ը միևնույն բառահոդվածի գլխաբառեր են, այսինքն՝ հավասարարժեք են դիտվել: Նույն բառարանում հեղինակը հրեերեն-ից հղում է անում եբրայեցերեն-ին[12], այնինչ եբրայական բառի երկրորդ իմաստը ձևակերպվել է «եբրայերենին հատուկ», այսինքն՝ բառարանագրի խոսքում եբրայերեն-ն է կիրառվել: Սա ակներև է դարձնում եբրայեցերեն / եբրայերեն զուգաձևությունը, և որ հաճախ դժվար է լինում նախապատվություն տալ տարբերակներից մեկին[13]:

Հրեա հիմքով կազմվածներից Էդ. Աղայանի բառարանում գրանցվել են հրեայերեն, հրեաերեն (զետեղված է հրեատյաց և հրեացնել բառերի միջև. պիտի լիներ հրեարեն) և հրեերեն տարբերակները: Առաջին երկուսը հղվում են հրեերեն-ին, որը երկարժեք է՝ գոյ. / ած., բացատրվում է այսպես՝ «1. գ. Հրեաների ժարգոնը, որ առաջացել է գերմաներենի հիման վրա: 2. Տե՛ս Եբրայեցերեն: 3. ած. Հրեաների լեզվով»[14]:

Արևմտահայերենի երկհատոր բացատրական բառարանում տրված է եբրայեցերէն բառը՝ ձևաբանական երեք արժեքով. ած. «եբրայեցերէն գրուած», գոյ. «եբրայեցերէն լեզու», մկբ. «եբրայեցերէն լեզուով», իսկ հրեայ բառահոդվածում՝ գլխաբառի կողքին, առանց բացատրության և խոսքիմասային արժեքը նշելու՝ գրված է հրեայերէն, ինչպես և նույն տեղում՝ եբրայեցի և իսրայէլացի բառերի կողքին՝ եբրայեցերէն (փակագծերում՝ եբրայերէն)[15]: Բառարանը կազմողներն առաջնորդվել են այս տրամաբանությամբ՝ ժողովրդի անուն – լեզվի անուն: Նկատենք, որ եբրայերէն տարբերակը չկա եբրայեցերէն-ի բա-

---

[10] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, 540:

[11] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, 395:

[12] **Աղայան** 1976, 317, 907:

[13] Բառարանի խմբագրված տարբերակում հրեերեն-ից հղում է արվում արդեն եբրայերեն-ին (**Աղայան** 2014, 784):

[14] **Աղայան** 1976, 907: «Ժարգոն» ձևակերպման հետ դժվար է համաձայնել: Հր. Աճառյանը հրեական իդիշ լեզվի մասին գրում է. «.... կոչվում է ժարգոն, բայց ոչ այլ ինչ է, եթե ոչ գերմանական մի բարբառ» (Աճառյան 1955, 415):

[15] **Ճէրէճեան, Տօնիկեան** 1992, 524, 1295:

ռահոդվածում: Համենայն դեպս նշված իրողությունը ևս տարբերակայնության յուրատեսակ արձանագրում է:

«Լեզվաբանական բառարանում» միասին տրված են եբրայերեն, եբրայեցերեն տարբերակային բառերը, որոնք հղվում են հին հրեերեն-ին[16]: Այստեղ էլ իբրև տարբերակ բերված է հրեական լեզու բառակապակցությունը[17]: Գործածվում է նաև եբրայական լեզու բառակապակցությունը[18]:

Ռ. Ղազարյանի գրաբարի բառարանում եբրայեցերէն-ը բացատրվում է ոչ միայն իբրև «եբրայեցիների լեզվով», այլև «եբրայերեն»[19] (սա գործածվել է հայկազյան բառարանների հրեարէն/ հրէարէն-ի փոխարեն): Եբրայեցերէն-ը եբրայերեն-ով բացատրելը հուշում է, որ եբրայերեն տարբերակն է հանրության ընկալելի: Առանձին տրված են հրէայերէն-ը և հրէերէն-ը, որոնք հղվում են հրէարէն-ին: Նշված է հրէարէն-ի երեք իմաստ՝ մկբ. «հրէաների լեզուով կամ գրով», «ըստ հրէաների սովորութեան» և ած. «հրէական»:

Բառային երեք միավորներ են զետեղված հանգաբառարանում՝ եբրայերեն, եբրայեցերեն, հրեերեն[20]: Սա արևելահայերենում այս տարբերակների գործածության սոսկ արձանագրումն է:

Ինչպես տեսանք, XX դարի երկրորդ կեսից, բառարաններում եբրայեցերեն-ի հետ տրվում է նաև նրա կարճ տարբերակը՝ եբրայերեն-ը: Արևելահայերենի անցյալ դարի ուղղագրական-տերմինաբանական ծավալուն բառարանում կան երկու հիմքերից կազմված զույգ տարբերակներ՝ եբրայեցերեն / եբրայերեն և հրեարեն / հրեերեն (այս բառազույգում վերջինս է հանձնարարելի դիտվել)[21]:

Հետաքրքրական է այդ ժամանակի դպրոցական ուղղագրական բառարանի մոտեցումը. եբրայեցի հիմքով տարբերակներն արձանագրվել են հա-

---

[16] Պետրոսյան, Գալստյան, Ղարագյոզյան 1975, 86: Ավելի վաղ նույն մոտեցումն էր կիրառվել հայ-ռուսերեն լեզվաբանական բառարանում (древнееврейский язык թարգմանությամբ), որը լույս է տեսել ձեռագրի իրավունքով (**Հարությունյանց** 1963, 70):

[17] Հմմտ. «Հայերեն նոր, աշխարհաբար գրական լեզվի գործածությունը գրաբարի վերակենդանացումը չէ, և այդ չի կարելի համեմատել հրեական լեզվի վերականգնման հետ» (**Աճառյան** 1955, 26):

[18] Հմմտ. եբրայագետ = եբրայական (հրեաների) լեզվի մասնագետ (Ղարիբյան, **Պարիս** 1959, 83):

[19] **Ղազարյան** 2000, 385:

[20] Հայոց լեզվի հանգաբառարան 1976, 353, 354:

[21] **Բարսեղյան** 1973, 277, 600:

վասարության նշանով՝ եբրայերեն = եբրայեցերեն[22]: XXI դարի ուղղագրական բառարանների բառացանկում եբրայեցերեն-ը չկա. տրված են եբրայերեն և հրեերեն անունները[23]:

Արևմտահայերենի ուղղագրական մի բառարանում հարցին ձևային առումով ուշագրավ լուծում է տրվել. եբրայ(եց)երէն ձևի միջոցով ներկայացվում են երկու տարբերակներն էլ: Մյուս հիմքով կազմվածներից տրվել են հրէարէն և հրէերէն տարբերակները[24]: Սրանք են եղել այդ ժամանակաշրջանի արևմտահայերենում առավել գործածականները:

***Թարգմանական բառարաններ***

Հետևենք հայերենի թարգմանական բառարաններում հրեաների լեզվի անունների և դրանց տարբերակների բառարանային մշակման ընթացքին:

Ա. Հայերեն-լատիներեն: 1621 թ. Միլանում տպագրված հայերեն առաջին տպագիր՝ Ֆ. Ռիվոլայի հայ-լատիներեն բառարանում, տեղ է գտել եբրայերեն-ի ուղղագրական մի տարբերակը, որ ե-է-ի շփոթի հետևանքով առաջացած սխալագրության հետևանք է՝ էբրաէրէն (Lingua Hebraïca)[25]: Նշելի են հետևյալ իրողությունները՝ ա) սա հայերեն տպագիր բառարանում հրեական լեզվի անվան առաջին գրանցումն է, բ) բառացանկում տեղ է գտել լեզվանվան կրճատ տարբերակը, որ XVII դարի սկզբներին նրա գոյության ցուցիչ է:

Բ. Հայերեն-անգլերեն: Այս տեսակի բառարաններում քննարկվող լեզվանունը հայտնվել է XIX դարի երրորդ տասնամյակում. հ. Հարություն Ավգերյանի՝ հայերեն-անգլերեն առաջին նշանակալից բառարանում մակբայի արժեքով գրանցվել են եբրայեցերէն-ը (in hebrew, in the hebrew language) և հրէարէն-ը (Jewishly, նմուշային բառակապակցություններում՝ Hebrew)[26]: Այս բառարանի վրա է հենվել Մատաթիա վրդ. Պետրոսյանը, բայց որոշ չափով տարբեր մոտեցում դրսևորել. եբրայեցերէն-ը կրկին մակբայի արժեքով է (in hebrew, in the hebrew language), այնինչ հրէարէն-ը՝ մակբայի (in hebrew) և ածականի (հրէական-ին հղելով)[27]:

---

[22] **Ղարիբյան, Շեկյան** 1981, 74:

[23] Հմմտ. **Սուքիասյան, Սուքիասյան** 2002, 83, 211, **Նազարյան, Գյոդակյան** 2004, 118, 278 և այլն:

[24] **Աբեղեան** 1947, 119, 173:

[25] **Rivola** 1621, 100:

[26] **Աւգերեան, Պրէնտեան** 1825, 177, 377: Այս և հետագա բառարաններում անգլերեն լեզվանունների մեծատառ թե փոքրատառ գրությունը խայտաբղետ է:

[27] **Պետրոսեան** 1875–79, 423:

XX դարի սկզբի մի բառարանում արձանագրված են եբրայեցերէն (ած. և գոյ.՝ Hebrew: the Hebrew language) և հրէարէն (գոյական՝ the Hebrew language), որից հղվում է առաջինին[28]: Նույն շրջանում լույս տեսած մեկ այլ բառարանի նույն բառահոդվածում որպես գոյական և ածական ներկայացված են եբրայերէն, եբրայեցերէն (Hebrew, the Hebrew language), ապա նաև հրէարէն (the jewish, hebrew language)[29], որից հղում է արվում եբրայեցերէնին, թեև բառահոդվածում ըստ այբբենական կարգի եբրայերէն-ն է առաջին միավորը: Բառարանագիրն այսպես թերևս ցույց է տվել իր նախապատվությունը:

Մ. Գույումճյանի բառարանը հաջորդական բառահոդվածներով ներկայացնում է եբրայերէն-ը գոյականի արժեքով (the hebrew language, in the hebrew language, in hebrew) և եբրայեցերէն-ը՝ ածականի (Hebraistical, in hebrew), ապա նաև հրէարէն-ը (the jewish, Hebrew language)՝ գոյականի[30]: Խոսքիմասային արժեքներով եբրայերէն-ի և եբրայեցերէն-ի նման տարբերակումը հիմնավորված չէ: Սրանց տարբերությունը միայն –աց(ի) ածանցի առկայությունը կամ բացակայությունն է, իմաստները և ձևաբանական արժեքները նույնն են:

Մեկ այլ բառարանում տրված են հրէերէն, որի կողքին՝ փակագծերում՝ եբրայերէն - Hebrew (language) և առանձին բառահոդվածով՝ եբրայեցերէն - Hebrew[31]:

Արևելահայերեն-անգլերեն բառարանում գրանցվել են միայն եբրայերեն-ը (գոյ. և մկբ. արժեքներով) և հրեերեն տարբերակները. վերջինից հղում է արվում եբրայերեն-ին[32]: Եբրայեցերեն-ը և ուրիշ տարբերակներ չկան: Հատկապես հայաստանյան թարգմանական բառարաններին ավելի բնորոշ է տարբերակայնության բացառումը կամ նվազագույնին հասցնելը:

Ինչպես տեսանք, հրեաների լեզվի անունը հայերեն-անգլերեն բառարաններում ներկայացվել է տարբերակային տարբեր զուգակցումներով, պատկերը բավական խայտաբղետ է:

Գ. Հայ-իտալերեն: Մանուել վարդապետ Ջախջախյանի հայ-իտալերեն բառարանում, որ լույս է տեսել ՆՀԲ-ի հետ գրեթե միաժամանակ, մակբայի

---

[28] **Մինասեան** 1902, 115, 277:

[29] **Փափազեան** 1905, 275,117:

[30] **Գույումճեան** 1950, 164, 444: Բառարանի կրճատված և խմբագրված տարբերակում կա միայն եբրայերեն-ը, չկան ո՛չ եբրայեցերեն-ը, ո՛չ էլ հրեերեն-ը կամ այլ տարբերակներ (**Գույումճեան** 2002, 67):

[31] **Խնդրունի, Գուշագճեան** 1970, 92, 232:

[32] **Բարաթյան** 2002, 154, 361:

արժեքով գրանցվել են եբրայեցերէն-ը, ինչպես նաև հրէարեն-ը, հրէերէն-ը և հրէայերէն-ը[33]: Հրէարեն-ը և հրէերէն-ը միավորված են մեկ բառահոդվածում, իբրև հավասարարժեք գլխաբառային միավորներ, իսկ առանձին տրված հրէայերէն-ից հղում է արվում հրէարեն-ին: XX դարավերջի հայերեն-իտալերեն բառարանում եբրայեցերէն-ը միարժեք է, բայց ածական է դիտվել (ebràico)[34], մյուս հիմքով որևէ տարբերակ չկա:

Դ. Հայ-ռուսերեն: Հայկազյան բառարանի հրատարակումից քիչ անց՝ 1838-ին, լույս տեսավ Ալ. Խուդաբաշյանի հայ-ռուսերեն բառարանը, որտեղ զետեղվել են հրեական լեզվի տարահիմք երկու անունները՝ եբրայեցերէն և հրէարեն՝ մակբայի արժեքով[35]: Եթե եբրայեցերէն-ը թարգմանելիս գործածվել է ռուսերենի մեկ լեզվանուն (Еврейски, на Еврейскомъ языке), ապա հրէարեն-ի պարագայում՝ Иудейски, Еврейски, Жидовски, քանի որ այն սոսկ լեզվանուն չէ, այլ նշանակում է նաև «հրեաբար, հրեորեն»: Հայ-ռուսերեն բառարաններում հրէարէն-ի առաջին գրանցումն է:

Դարավերջին Կ. Ցաղուրյանի հայերեն-ռուսերեն բառարանում կրկին զետեղվել են եբրայեցերէն-ը և հրէարէն-ը: Եթե առաջինը սոսկ թարգմանվել է еврейскій (առանց ձևաբանական արժեք նշելու), ապա հրէարէն-ը տրվել է երեք արժեքով՝ ա. еврейскій, մ. по еврейски, գ. еврейскій языкъ[36], առանց այլ բառերի ներգրավման (ինչպես Խուդաբաշյանցի բառարանում է):

Հայ-ռուսերեն ակադեմիական բառարանում տարբերակային լեզվանունները միևնույն բառահոդվածում տրված են զույգերով՝ եբրայերեն / եբրայեցերեն, հրեաերեն / հրեերեն (հղված են եբրայեցերեն-ին)[37]: Եբրայերեն / եբրայեցերեն-ը ներկայացված են ձևաբանական հետևյալ արժեքներով և թարգմանությամբ՝ 1. գոյ. иврит, 2. ած. древнееврейский язык (о языке), 3. մկբ. на иврите: Լեզվի հին և նոր գոյավիճակներն անվանող ռուսերեն բառերի նման բաշխումն անհասկանալի է, բայց սա ուրիշ խնդիր է:

Ե. Հայերեն-ֆրանսերեն բառարաններ: Նախանցյալ դարի երկրորդ կեսին Ա. Գալֆայեանի հայերեն-ֆրանսերեն բառարանում զետեղված են թե՛ եբրայեցերէն և թե՛ հրէարէն լեզվանունները. եբրայեցերէն-ը՝ մակբայի (en hébreu) և գոյականի (l'hébreu, la langue hébraïque), իսկ հրէարէն-ը՝ մակբայի

---

[33] **Ջախջախեան** 1837, 435, 905:
[34] **Օհանեան** 1999, 123:
[35] **Խուդաբաշեանց** 1838, հ. 1, 339, հ. 2, 84–85:
[36] **Եաղուբեան** 1891, 7, 250:
[37] Հայ-ռուսերեն բառարան 1987, 201, 432:

(en hébreu) և ածականի («հրեական» իմաստով)[38]: Դարավերջին Ե. Տեմիրճիպաշյանն իր բառարանում զետեղել է եբրայեցերէն և հրէարէն բառերը՝ նույն hébreu թարգմանությամբ[39]: Իսկ ահա անցյալ դարի առաջին կեսին Մ. Հովհաննեսյանի բառարանում մակբայի և գոյականի արժեքներով միայն եբրայեցերէն-ն է զետեղվել՝ en hébreu, l'hébreu թարգմանությամբ[40]: Նշված բառարանները ստեղծվել են արևմտահայ իրականության մեջ, և ինչպես տեսանք, շրջանառվել են լեզվանվան երկու տարբերակներ՝ եբրայեցերէն և հրէարէն: Հրէայ հիմքով մյուս տարբերակները, որ գրանցված են գրաբարի բառարաններում, բառացանկ չեն ներառվել:

Արևելահայ իրականության մեջ պատկերը տարբեր է, հատկապես հրեարեն-ի առումով, որը չի հանդիպում: Անցյալ դարավերջի բառարաններից մեկը ներկայացնում է միայն եբրայերեն (yiddish, hébreu)[41] տարբերակը, այս դարի հայերեն-ֆրանսերեն բառարանում, ի տարբերություն արևմտահայերենի բառարանների, գրանցվել են եբրայերեն և հրեերեն տարբերակները. վերջինից հղում է արվում եբրայերեն-ին[42]:

Զ. Հայերեն-հունարեն: XIX դարի երկրորդ կեսին տպված բառարանում գրանցվել են եբրայեցերէն և հրէարէն / հրէէերէն (–երէն-ը՝ է սկզբնատառով. սա բառարանից բառարան կրկնվող վրիպակ է) լեզվանունները[43]:

Է. Հայերեն-թուրքերեն: XX դարասկզբին լույս տեսած ընդարձակ բառարանում եբրայեցերէն լեզվանունը չի թարգմանվել, այլ հղում է տրվել եբրայական լեզու բառակապակցությանը (այս մոտեցումը մնում է եզակի), իսկ մյուս հիմքից կազմված հրէարէն-ը և հրէերէն-ը նույն բառահոդվածի հավասարարժեք գլխաբառեր են[44]: Վերջերս լույս տեսած բառարանում տեղ է գտել միայն եբրայերեն-ը (գոյականի արժեքով)[45]:

Ը. Հայերեն-գերմաներեն: Անցյալ դարակեսին Տ. Ֆրունճյանի բառարանում յուրաքանչյուր հիմքից կազմված մեկ բառ է ներառված՝ եբրայերեն-ը (Hebräisch, տպված է եչով՝ նոր ուղղագրությամբ) և հրէերէն (Jüdish,

[38] **Գալֆայեան** 1861, 234, 580: Նույն մոտեցումը նաև այստեղ՝ Լուսինեան-Բասմաջեան 1915, 195, 453:

[39] **Տեմիրճիպաշեան** 2003, 51, 159 (Ա հրատ.՝ 1894, Կ. Պոլիս):

[40] **Յովհաննէսեան** 1925, 178: Հմմտ. նաև **Պայեան** 1926, 659:

[41] **Գասպարյան** 1999, 95:

[42] **Բարլեզիզյան** 2009, 271, 590:

[43] **Չօլագեան** 1868, 63, 165:

[44] **Կարապետեան** 1907, 271, 520:

[45] **Դերմենջյան** 2013, 110:

Hebräisch)[46]: Լ. Թորոսյանի հայերեն-գերմաներեն բառարանում տեսնում ենք Արտ. Աբեղյանի կիրառած հնարը, երբ մեկ ձևի մեջ ներկայացվում են եբրայեցի հիմքով կազմված թե՛ ավանդական և թե՛ այժմյան տարբերակները՝ եբրայե(ցե)րէն: Սա և հրէերէն/հրեերեն-ը թարգմանվել են նույն բառով՝ Hebräisch[47]:

Թ. Հայերեն-արաբերեն: Արձանագրվել է միայն եբրայեցերէն-ը[48], որը արևմտահայ ավանդույթի շրջանակում է:

Ժ. Հայերեն-պարսկերեն: Վ. Հարությունյանի հայերեն-պարսկերեն թեհրանյան բառարանում յուրաքանչյուր հիմքից զետեղված է մեկ բառ՝ եբրայեցերէն և հրէերէն[49]: Հայերեն-պարսկերեն երևանյան բառարանում հրեաների լեզվի միայն մեկ անուն կա՝ եբրայերեն սեղմ տարբերակը՝ ձևաբանական երեք արժեքների մատնանշումով[50]:

ԺԱ. Հայերեն-իսպաներեն: Հայերեն-իսպաներեն բառարանում երեք արժեքով արձանագրված է միայն եբրայեցերէն-ը (lengua hebraica)[51]: Լեզվանվան կանոնարկման հասնելու ուղիներից մեկը տարբերակների բազմությունից հրաժարվելն է, և մեկ տարբերակի ընտրությունը դրական քայլ է:

ԺԲ. Հայ-ադրբեջաներեն: Հայաստանյան բառարանագրության մեջ տարբերակայնությունը մինչ այդ չկիրառված լուծում է տրված հայ-ադրբեջաներեն բառարանում՝ **եբրայե(ցե)րեն** (ինչպես տեսանք, սփյուռքում կիրառվել է XX դարի առաջին կեսին), իսկ **հրեա** հիմքով միայն **հրեաերեն**-ն է տրված[52]: Ընտրվել է արևելահայերենին ոչ այնքան բնորոշ հրեաերեն տարբերակը, այն էլ սխալագրությամբ (առանց յ-ի), որ պատահում է նաև այլուր:

Անդրադառնանք հանրագիտական բառարաններին: Հայկական Սովետական Հանրագիտարանում գլխաբառ են դարձել տարբեր հիմքերից կազմված երեք բառեր՝ եբրայերեն (այս իրողությունը նշանակում է, որ եբրայեցերեն-ը հետ է մղվել), իվրիտերեն (իվրիտ-ից –երեն ածանցի միջոցով «հայերենացված» այս լեզվանունը մնաց հիմնականում հանրագիտարանի շրջանա-

[46] **Froundjian** 1952, 132:

[47] **Թորոսեան** 2019, 182, 427:

[48] **Թազպազեան** 1964, 166:

[49] **Յարութիւնեան** 2006, 210, 401 (առաջին հրատարակությունը՝ 1972-ին):

[50] **Դավթյան** 2011, 89:

[51] **Թէքէեան** 1984, 180:

[52] **Բաղրամյան, Խալիլով** 1978, 121, 351:

կում) և հրեերեն (հղվում է եբրայերեն-ին)[53]: Վերջերս լույս տեսած «Հանրագիտական բառարանում» հիմնական գլխաբառ է դարձել եբրայերեն-ը (բացատրվում է որպես հին հրեերեն), իվրիտերեն-ի փոխարեն անածանց տարբերակն է՝ իվրիտ (մի տեղ ասվում է «Իսրայելի պետական լեզուն», մեկ այլ տեղում՝ լեզուներից մեկը), հրեերեն-ը կրկին հղվում է եբրայերեն-ին[54]:

Ամփոփ ներկայացնենք, թե հրեաների լեզվի անունը բառային ի՛նչ միավորներով և տարբերակների ինչպիսի՛ զուգակցումներով է ներկայացվել հայերենի տարատեսակ բառարաններում:

Բառարանների մեծ մասում ներառված են և՛ եբրայեցի, և՛ հրէայ (հրեա) բառերից կազմված միավորները: Հանդիպում են տարատեսակ զուգակցումներ՝ ա. եբրայեցերէն, հրէարէն, հրէերէն և հրէայերէն, բ. եբրայեցերէն և հրէարէն, գ. եբրայեցերէն, եբրայերէն և հրէարէն, դ. հրէերէն (եբրայերէն) և եբրայեցերեն, ե. եբրայերէն և հրեերեն, զ. եբրայեցերեն, եբրայերեն, հրեարեն և հրեերեն, է. հրէարեն և հրէերէն և այլն: Բառարաններում առանձնաբար, առանց տարբերակի են տրված ավելի շատ եբրայեցերէն-ը, այնուհետև՝ եբրայերեն-ը և մեկ անգամ՝ հրեերեն-ը:

Ցարդ ներկայացրինք «հրեաների լեզու» նշանակող բառերի բառարանագրական մշակման ընդհանուր պատկերը: Հարկ է նշել, որ կան բառարաններ, որոնց բառացանկում սպասելի էր հրեաների հին կամ նոր լեզվի անունը, սակայն այն բացակայում է: Այսպես, հայ-ռուսերեն 40 հազար բառ պարունակող բառարանում, օրինակ, կան նույնահիմք եբրայագետ, եբրայագիտություն, եբրայական, եբրայեցի, եբրայուհի բառերը մի կողմից և հրեա, հրեական, հրեակեր, հրեասեր, հրեատյաց՝ մյուս կողմից[55], սակայն հրեաների լեզվի անվան որևէ տարբերակ չկա: Կամ մի բառարանի հայերեն-անգլերեն ցանկում կան Լատվիայի լեզվի անվան երկու տարբերակ՝ լատիշերեն և լատվիերեն[56], բայց հրեաների լեզվի անունը չկա: Չենք կարող ասել, թե լատիշերեն-ը և լատվիերեն-ը ավելի հաճախադեպ են: Նույն կերպ էլ հայերեն-գերմաներեն բառարանում կա արամերեն լեզվանունը[57], բայց հրաների լեզվի անվան որևէ տարբերակ չկա: Տարբերակայնությունից խուսափելու հնա՞ր է,

[53] Հայկական Սովետական Հանրագիտարան հ. 3, 1977, 465, հ. 4, 1978, 424, հ. 6, 1980, 628:

[54] Հանրագիտական բառարան հ. 1, 2016, 635, 876, հ. 2, 2018, 228:

[55] **Ղարիբյան, Տեր-Մինասյան, Գևորգյան** 1960, 122:

[56] **Սեֆերյան** և ուրիշներ 2009, 492:

[57] **Գաբրիելյան** և ուրիշներ 2000, 56:

թե՞ բառեր ընտրելիս համակարգայնությունը չպահպանելու կամ անուշադրության հետևանք, դժվար է ասել: Առհասարակ հազվադեպ է պատահում, որ հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում ընդգրկված չլինեն հրեական լեզվի անուն(ներ)ը, բացառությամբ, իհարկե, սահմանափակ բառային կազմ ունեցողները:

***Եզրակացություններ***

Հայ բառարանագրության մեջ հրեաների լեզվի անվան առաջին արձանագրումը, թեպետ սխալագրությամբ (էբրաէրէն - Lingua Hebraïca), կատարվել է Ֆ. Ռիվոլայի հայերեն-լատիներեն բառարանում (1621 թ.): Միալեզվյան բառարաններից առաջին անգամ Մխիթար Սեբաստացու Հայկազյան բառարանում (1749 թ.) գրանցվել են հրեաների լեզվի հրէարեն և հրէէրէն (կրկին սխալագրությամբ) տարբերակային անունները:

Հայերենի բառարաններում առավել հաճախ արձանագրվել են հետևյալ լեզվանունները՝ եբրայեցերէն / եբրայեցերեն, եբրայերեն, հրէարէն (առավելաբար արևմտահայերենի բառարաններում), հրեերեն (հիմնականում արևելահայերենի բառարաններում):

Լեզվանունները բառարաններում ներկայացվել են երեք արժեքով. նախ՝ մակբայի, ապա՝ ածականի, հետո նաև գոյականի արժեքներով: Որոշ բառարաններում հրեաների լեզվի անունները մենարժեք են, մի մասում՝ երկարժեք, արդի բառարաններում՝ մեծ մասամբ եռարժեք:

Միևնույն բառարանում պատահում են հրեաների լեզվի նույնահիմք և տարահիմք անունների ու դրանց տարբերակների տարատեսակ զուգակցումներ՝ եբրայեցերեն, եբրայերեն, հրեաերեն, հրեերեն և այլն:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական, մասնագիտական (լեզվաբանական) բառարաններում հարկավոր է հստակեցնել հրեաների լեզվի, Իսրայելի պաշտոնական լեզվի անուն(ներ)ը և բացատրությունը, հրաժարվել գործածությունից դուրս մղված տարբերակների ներմուծումից բառարանների ցանկեր: Մեր կարծիքով դա պետք է լինի եբրայերեն-ը:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Աբեղեան Ա.** 1947, Ուղղագրական բառարան հայերէն լեզուի, Շտուտգարտ, «Մաշտոց» տպարան, 260 էջ:

**Աղայան Էդ.** 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1642 էջ:

**Աղայան Էդ.** 2014, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, «Մանմար», Երևան, 1328 էջ:

**Աղաջանյան Ջ.** 2017, Արդի հայերենի իմաստաարժեքային զուգաձևությունների բառաքերականական բառարան, Երևան, «Նաիրի», 536 էջ:

**Աճառյան Հ.** 1955, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն հատոր, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 656 էջ:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի 1865, Բ տպ., Վենետիկ, Սուրբ Ղազար, 850 էջ:

**Բաղրամյան Ռ., Խալիլով Ի**. 1978, Հայ-ադրբեջաներեն բառարան, Երևան, «Լույս», 566 էջ:

Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ 1869, Վենետիկ, Սուրբ Ղազար, 580 էջ:

**Բարաթյան Ն.** 2002, Հայերեն-անգլերեն բառարան, Երևան, «Մակմիլան-Արմենիա», 592 էջ:

**Բարլեզիզյան Ա.** 2009, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 976 էջ:

**Բարսեղյան Հովի.** 1973, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, «Լույս», 980 էջ:

**Գաբամաճեան Ս.** 1910, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, Տպագրութիւն Ռ. Սագաեան, 1406 էջ:

**Գաբրիելյան Յ.** և ուրիշներ 2000, Հայ-գերմաներեն բառարան, Köln, Bundesverwaltun-gsamt, 400 էջ:

**Գալֆայեան Ա.** 1861, Բառգիրք հայ-գաղղիարէն եւ գաղղիարէն հայերէն, Փարիզ, Գրավաճառանոց Լ. Հաշեթի, 1060 էջ:

**Գասպարյան Ս.** 1999, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, «Արեգ», 400 էջ:

**Գնէլ արք. Ճէրէճեան, Տօնիկեան Փ.Կ.** 1992, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Պէյրութ, «Կ. Տօնիկեան եւ Որդիք» հրատ., 1306 էջ:

**Գույումճեան Մ.** 1950, Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Գահիրէ, Տպարան «Սահակ-Մեսրոպ» 1154 էջ:

**Գույումճեան Մ.Կ.** 2002, Գրպանի Նոր Բառարան Հայերէն-Անգլերէն, այժմէականացուց Լ. Թորոսեան, Պէյրութ, «Շիրակ», էջ 315:

**Դավթյան Տ.** 2011, Հայերեն-պարսկերեն բառարան, Երևան, «Անկյունաքար», 452 էջ:

**Դերմենջյան Մ.** 2013, Հայերեն-թուրքերեն բառարան, Երևան, Հեղ. հրատ., 400 էջ:

**Եաղուբեան Կ.** 1891, Հայերէն-ռուսերէն բառարան, Թիֆլիս, Տպարան Յ. Մարտիրոսեանցի, 464 էջ:

**Թազպազեան Ժ.** 1964, Բառարան հայերէնէ արաբերէն, Պէյրութ, Տպարան «Մշակ», 828 էջ:

**Թորոսեան Լ.** 2019, Ընդարձակ բառարան Հայերէնէ-Գերմաներէն, Վիեննա, 765 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ, 602 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1972, հ. 2 (կազմեց Վ. Առաքելյանը), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 716 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974,, հ. 3, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 575 էջ:

**Լուսինեան Գ., Բասմաջեան Կ.** 1915, Առձեռն բառարան հայերէն աշխարհիկ լեզուէ ֆրանսերէն, Կ. Պոլիս, Պ. Պալենց եւ Օ. Արզուման, 846 էջ:

**Խուդաբաշեանց Ալ.** 1838, Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, Մոսկուա, h. 1, 616 էջ, h. 2, տպ. Լազարեան ճեմարան, 533 էջ:

**Կարապետեան Պ.Ջ.** 1907, Մեծ բառարան հայերէնէ օսմաներէն, Կ. Պոլիս, Տպագրութիւն Վ եւ Հ. Ներսէսեան, 930 էջ:

**Հ. Գաբրիէլ Աւետիքեան, հ. Խաչատուր Սիւրմէլեան, հ. Մկրտիչ Աւգերեան** 1836, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, h. Ա, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1140 էջ, 1837, h. Բ, 1068 էջ:

**Հ. Գէորգ Պայեան** 1926, Բառարան հայերէն-գաղղիերէն, Վենետիկ, Սուրբ Ղազար, Մխիթարեան տպարան, 2311 էջ:

**Հ. Յ. Աւգերեան, Պրէնտեան Հովի.** 1825, Բառարան հայերէն եւ անգղիական, h. Բ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 640 էջ:

**Հ. Յարութիւն Թէքէեան** 1984, Բառարան Հայերէնէ-Սպաներէն, Բուենոս Այրես, «Ակիան», 868 էջ:

**Հ. Վահան վրդ. Օհանեան** 1999, Բառարան հայերէն-իտալերէն, Վենետիկ, Մխիթարեան հրատարակչատուն, 498 էջ:

Հայկական Սովետական Հանրագիտարան 1977, h. 3, Երևան, Հայկական Սովետական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, h. 4, 1978, h. 6, 1980, 720 էջ:

Հայոց լեզվի հանգաբառարան 1976, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 655 էջ:

Հայ-ռուսերեն բառարան 1987, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 736 էջ:

Հանրագիտական բառարան 2016, h. 1, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 1120 էջ:

Հանրագիտական բառարան 2018, h. 2, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 1144 էջ:

**Հարությունյանց Մ.** 1963, Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան, Երևան, Գիտատեխնիկական ընկերությունների հայկական ռեսպուբլիկական խորհուրդ, 308 էջ:

**Ղազարյան Ռ.** 2000, Գրաբարի բառարան, h. Ա, Երևան, Երևանի համալս. հրատ., 685:

**Ղարիբյան Ա., Շեկյան Գ.** 1981, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, «Լույս», 272 էջ:

**Ղարիբյան Ա., Պարիս Գ.** 1959, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, Հայպետուսմանկհրատ, 256 էջ:

**Ղարիբյան Ա.Ս., Տեր-Մինասյան Ե.Գ., Գևորգյան Մ.Ա.** 1960, Հայ-ռուսերեն բառարան, Երևան, Հայաստանի պետական հրատարակչություն, 442 էջ:

**Ճիզմէճեան Պ. վրդ.** 1957, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, h. 2, Հալէպ, Տպարան «Անի», 1460 էջ:

**Մալխասյանց Ստ.** 1944, h. 1, Հայերէն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., Երևան, 608 էջ, 1944, h. 3, 614 էջ, 1945, h. 4, 647 էջ:

**Մանուէլ վրդ. Ջախջախեան** 1837, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, Տպարան Սրբոյն Ղազարու, 1535 էջ:

**Մատաթիա վրդ. Պետրոսեան** 1875–79, Նոր բառգիրք հայ-անգլիարէն, Վենետիկ, Սուրբ Ղազար, 817 էջ:

**Մինասեան Մ.Գ.** 1902, Առձեռն բառարան հայերէն-անգղիերէն, Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 506 էջ:

**Մխիթար Սեբաստացի** 1749, Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1251 էջ:

**Յարութիւնեան Վ.** 2006, Հայերէնից պարսկերէն բառարան, Թեհրան, «Նայիրի», 686 էջ:

**Յովհաննէսեան Մ.** 1925, Բառարան հայերէն-ֆրանսերէն, Կ. Պոլիս, Libraire-editeur B. Zartarian, 1128 էջ:

**Նազարյան Ռ., Գյոդակյան Ա.** 2004, Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան, Երևան, «Զանգակ», 520 էջ:

**Չօլագեան Տ. Ի. Խ.** 1868, Նոր բառարան հայերէնէ ի յունարէն, Կոստանդնուպոլիս, Տպագրութիւն Ռ. Յ. Քիւրքճեան, 359 էջ:

**Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարագյուլյան Թ.** 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 318 էջ:

**Սեֆերյան Ս.** և ուրիշներ 2009, Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն բառարան, Երևան, «Արեգ», 750 էջ:

**Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք.** 2002, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Երևան, «Մակմիլան Արմենիա», 410 էջ:

**Վեր. Տիգրան Խնդրունի, Մ. Գուշագճեան** 1970, Հայերէնէ-Անգլերէն Արդի Բառարան, Պէյրութ, «Կ. Տօնիկեան եւ Որդիք», 432 էջ:

**Տեմիրճիպաշեան Ե.** 2003, Գրպանի բառարան հայերէնէ գաղղիերէն, Ե տպ., Պէյրութ, «Կ. Տօնիկեան եւ Որդիք», 379 էջ:

**Փափազեան Զ. Տ. Ս.** 1905, Գործնական Բառարան Հայերէն-Անգղիերէն, Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, Կ. Պոլիս, 508 էջ:

**Froundjian D.** 1952, Armenisch-Deutsches Wörterbuch, München, «R. Oldenbourg», 522 էջ:

**Rivola F.** 1621, Dictionarium Armeno-Latinum, Միլան, Ամբրոսյան դպրոցի տպարան, 406 էջ:

# ИСТОРИЯ ЛЕКСИКОГРАФИЧЕСКОЙ ОБРАБОТКИ АРМЯНСКИХ НАЗВАНИЙ ЕВРЕЙСКОГО ЯЗЫКА И ИХ ВАРИАНТОВ

ГЮРДЖИНЯН Д.

## Резюме

***Ключевые слова:*** название языка, семитские языки, иврит, орфографические варианты, лексикографическая традиция, канонизация, древнеармянский язык.

Армянское название еврейского языка (с неправильным написанием: էբրաէրէն) впервые было зарегистрировано в армяно-латинском словаре Ф. Риволы (1621 г.). Словарь древнеармянского языка Мхитара Себастаци (1749 г.) является первым моноязычным словарем, где были зафиксированы вариантные названия еврейского языка հրէարեն и հրէէրէն.

В словарях армянского языка чаще всего упоминались следующие названия еврейского языка: եբրայեցերէն / եբրայեցերեն, եբրայերէն / եբրայերեն, притом հրէարէն – в основном в словарях западноармянского языка, а հրեերեն – в словарях восточноармянского. В современных словарях эти названия представлены в основном в трех морфологических значениях.

В толковых словарях современного армянского языка необходимо уточнить название (или названия) еврейского языка, официального языка Израиля, и их толкование, а также отказаться от внесения в словники вышедших из употребления вариантов.

# HISTORY OF THE LEXICOGRAPHIC INTERPRETATION OF ARMENIAN NAMES OF THE LANGUAGE OF JEWS AND THEIR VARIANTS

GYURJINYAN D.

## Summary

***Keywords:*** language name, Semitic languages, Hebrew, the Jewish language, orthographic variants, lexicographic tradition, standardization.

The printed dictionary, in which the Armenian name of the Hebrew language was registered for the first time (with a wrong spelling: էբրաէրէն), was the Armenian-Latin dictionary by F. Rivola (1621). Old Armenian dictionary by Mkhitar Sebastatsi (1749) was the first monolingual dictionary where the different variants of the Hebrew language name (հրէարեն and հրէէրէն) were recorded.

In dictionaries of the Armenian language the following names of Hebrew were most often referred to: եբրայեցերէն / եբրայեցերեն, եբրայերէն / եբրայերեն, while հրէարէն was mostly in Western Armenian, and հրեերեն in Eastern Armenian dictionaries. In modern dictionaries, these names are mainly represented by three morphological meanings.

It is of utmost importance to clarify the name (or names) of the Hebrew, the official language of Israel, as well as its interpretation, and leave out the obsolete variants from dictionaries of Modern Armenian.

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ
## PUBLICATIONS

**NAIRA GINOSYAN**
*PhD in History*
*YSU, Chair of Turkish studies, Assistant Professor*
*Institut of History NAS RA, Researcher*
naira.ginosyan@ysu.am

# GREAT EUROPEAN POWERS BOWING DOWN TO THE TURKISH BRIGANDS

Woodrow Wilson's arbitral award on the Armenian-Turkish border is an international legal document by which Turkey, the legal successor of the Ottoman Empire, was subjected to political responsibility for the Armenian Genocide. With this document, Turkey was deprived of sovereignty over its former territory.

The hopes of the allies to see the USA in the role of the sponsor of the Republic of Armenia did not come true. In June 1920, the US Congress rejected Armenia's sponsorship.

Failure to ratify the Treaty of Sevres does not completely deter the signatories from their legal obligations, and only very serious circumstances and justifications can account for the refusal of the signatory to ratify the treaty, which may harm the rights of the other parties to the treaty. In this case, the non-ratification of the Treaty of Sevres harmed the rights of Armenia, which is a party to the treaty. “The Law of International Treaties” of 1969 is the 14$^{th}$ article of the Vienna Convention that clarifies in which cases the binding nature of a treaty is expressed by ratification. Article 18 of the same Convention imposes clear obligations on the signatory states from the time of signature to the date of ratification. According to this article, the state is obliged to refrain from actions that may affect the subject and purpose of the contract.

A violation of these principles should be considered the fact that the Turks signed treaties with France in October 1921, with Italy in October, and later in Lausanne in 1923, with the aim of neutralizing the subject of the Treaty of Sevres. The same can be said about the Kemal-Bolshevik Moscow deal signed in March 1921[1].

The influential European powers that were parties of the Treaty of Sevres, first of all Great Britain and France, in their interests, reached an agreement with each other and began to selectively apply the articles of the Treaty of Sevres, in connection with the alienation of the Arab territories from the Ottoman Empire, however these articles had not yet been ratified and had not yet entered into force. In the absence of ratification of the treaty, on the basis of its articles, before the signing of the Treaty of Lausanne, the process of creating independent states (Syria, Lebanon, Iraq, Saudi Arabia, etc.) through the division of the Ottoman Empire, using mandates and protectors, ended, which, in fact, unfortunately, bypassed Armenia and Kurdistan.

The Turks are always speculating on the legitimacy of the Treaty of Sevres. In this sense, the 1921 London Conference should be considered an attempt to revise the Treaty of Sevres. In January 1921, at a meeting of the General Council of Entente in Paris, France proposed a revision of the Treaty of Sevres. In February-March of the same year, at a conference in London with the participation of the Entente powers, Germany, defeated in the war, and the Ottoman Empire, at the suggestion of France and Italy, the issue of revising the Sevres Peace Treaty was discussed. As is well known, at that conference an attempt was made to replace the provisions of Armenia, expressing the legal rights of the Armenian people envisaged by the Treaty of the Sevres with the vague idea of the “Armenian National Home”, which, however, was rejected by the Turks. By rejecting this idea at the London conference, the Turks themselves were, in fact, the first to reject the issue of revising the Treaty of Sevres. The Sevres Treaty in London could only be replaced by the adoption of a new document, the preamble of which should have clearly stated that the Treaty was revising or amending the previously signed Treaty of Sevres. Thus, the fact that the signatory states of the Treaty had announced their intention to revise it in London, however, no

[1] See **Մարուքյան** 2014, 107

document was signed, which means that the conference did not achieve its goal and the attempt to revise the Treaty of Sevres actually failed.

Great Britain and the allied powers that follow it, are directly to blame for not providing the promised military and material assistance to the Republic of Armenia, and thus endangering its existence. The British policy was described by the English historian and philosopher Arnold Toynbee as “both a moral and a political mistake”.

Thus, the knowledge of the political events before and after the 1921 London International Conference and their cause-and-effect relations make the question of the position of the two Armenian delegations participating in the conference, superfluous.

The Armenian issue as a territorial problem was resolved on the same days, on March 16, 1921, in Moscow with the signing of the Russian-Turkish friendship-brotherhood agreement.

If the united Turkish delegation at the London International Conference was able to reject the proposals of the two Armenian delegations to implement the articles about Armenia in the Treaty of Sevres and establish French-sponsored “administrative autonomy” in Armenian Cilicia, Kemalist Turkey in Moscow appropriated huge Armenian territories providing a practical basis for neutralizing all possible ambitions of the allied powers towards Western Armenia. Turkey achieved this by concluding separate treaties with France and Italy on March 9 and 12 in 1921. These agreements were followed by the signing of the Turkish-French Treaty of Ankara on October 20, 1921, one week after the signing of the Treaty of Kars on October 13, 1921[2]. With the Treaty of Ankara, Cilicia finally passed to Turkey.

Armenian Bureau
47a, Redcliffe Square
London, S. W. 10

22nd January 1921.

Great European Powers bowing before the Turkish brigands.

“I need not edit His Majesty’s government………. are resolved that after the war there shall be a new era of liberty and redemption for this ancient people”, i.e. Armenians.

---

[2] See **Հովհաննիսյան,** 151

Mr.Asquith at the Guildhall, November 9th 1916.

The political and moral prestige of Great Britain and France, and indirectly, of the United States, is at stake. These great Powers, commanding all the material and moral resources of the world, have vacillated before the bluff of a few thousand Turkish swashbucklers, who within the course of the last few months must have held some quaint views as to the ethical value of Western political creeds.

It is difficult to mention a single opprobrious adjective which the victorious Powers, failed to apply to the Turks during and since the Great War. These Powers, acting as the interpreters of the conscience of civilization, noted out a just retribution to Turkey in the Treaty of Sevres by virtually breaking up that corrupt and barbarous empire.

Barely four months have elapsed since the signature of the Treaty of Sevres and already there are half-suppressed indications of compunction in certain Allied quarters. The French and Italian statesmen and press have come into the open as advocates of drastic revision of the Treaty. As an instance, it is sufficient to cite "L' Echo de Paris", which recently referred to Turkey as the "traditional client of our country ". There is also a not-inconsiderable clique elsewhere which, alarmed at possible exacerbation of Mohammedan feeling in India, is anxious to deflect the course of justice.

At the moment, the point at issue is whether the British Government will identify itself with these proceedings and bow before the Rhodomontades of a few bands of what Mr. Balfour rightly described as "Turkish brigands".

It is a critical phase in the history of all mankind, from which way be deduced the course of future events: their course will depend on whether the gigantic collective strength of the Allied Powers will continue to be effective in the right direction, or, after some oscillation, will either spend itself in vain, or exert its influence in the opposite direction.

The writer being an Oriental himself may perhaps be allowed to call the attention of enlightened British and American opinion to the fact that British surrender to the bluff of Turkish brigands would inevitably, have incalculable repercussions in the British East. From the café-houses of Constantinople and Cairo, eastwards to the bazaars of Bagdad, Teheran, Kabul and Bombay, the whisper will run that the English Sahib is cowed by the bluster of an adventurer

like Mustafa Kemal Pasha, who, at the head of not more than 50,000 bashi-bazouks.

It is true as against the Turks, we Armenians are beaten for the time being, as the Greeks were beaten a century ago, and the Bulgars in 1875. We are beaten, not so much by the strength of the Turk as by our internal conditions. It is now an open secret that in October last our army surrendered Kars without firing a shot, for reasons which may be told later, but we need not on that account conclude that there has been a sudden accession of strength and virtue to the Turk. In spite of his military momentum, whereas we have not yet acquired any. In the case of the Turk, this momentum has almost spent itself, and in the natural course of things must fail before the Armenian as it failed before the Greek, the Serbian and the Bulgar. Even should the Treaty of Sevres be revised, the Greeks may be relied upon to take care of themselves. But we Armenians are for the moment in a hopeless position, broken financially and militarily and reduced to a state of impotence for which we ourselves are less responsible than those more powerful and more fortunate nations, who failed to give us their promised aid.

